ԵԿՀԱ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ՈՐԱԿԻ ԷՍՏՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Երևանի Հայբուսակ Համալսարանի համար

ՄԳ հաշվետվություն

2019

Բովանդակություն

Ներածություն..... 3
Ինստիտուցիոնալ հավատարմագրման ստացած արդյունքների համառոտ շարադրանքը.....5
1.1. Ռազմավարական կառավարում.....8
1.2. Ռեսուրսներ.....11
1.3. Որակի մշակույթ.....14
1.4. Ուսումնական բարոյագիտություն.....17
1.5. Միջազգայնացում.....20
1.6. Դասավանդող կազմ.....23
1.7. Ուսումնական ծրագիր.....26
1.8. Սովորել և դասավանդել.....29
1.9. Ուսանողի գնահատում.....32
1.10. Սովորելու Գործընթացին Նպաստող Համակարգեր.....35
1.11. Հետազոտություն, Զարգացում և/կամ այլ Ստեղծարար Գործունեություն.....37
1.12. Հասարակությանը մատուցվող Ծառայություն.....40
2. Ուսումնական ծրագրերի օրինակի գնահատման արդյունքները.....42
2.1. Ընդհանուր Բժշկության Ուսումնական Ծրագիրը (Բժիշկ).....42
2.1.1. Ուսման պլանավորումը և կառավարումը.....42
2.1.2. Ուսուցում, դասավանդում և գնահատում.....44
2.1.3. Դասավանդող կազմի զարգացումը, համագործակցությունը և միջազգանացումը.....46
2.2 Իրավաբանության ուսումնական ծրագիր (Բակալավր).....47
2.2.1. Ուսման պլանավորումը և կառավարումը.....48
2.2.2. Ուսուցում, դասավանդում և գնահատում.....50
2.2.3. Դասավանդող կազմի զարգացումը, համագործակցությունը և միջազգանացումը.....51
2.3. Կառավարման ուսումնական ծրագիր (Մագիստրոս).....52
2.3.1. Ուսման պլանավորումը և կառավարումը.....53
2.3.2. Ուսուցում, դասավանդում և գնահատում.....55
2.3.3. Դասավանդող կազմի զարգացումը, համագործակցությունը և միջազգանացումը.....57

Ներածություն

<<Ինստիտուցիոնալ հավատարմագրումը>>արտաքին գնահատման գործընթաց է, որը գնահատում է Համալսարանի կամ բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման, աշխատանքային ընթացակարգերի, ուսման և հետազոտական գործունեությունների և միջավայրի համապատասխանությունը և՛ ղեկավարությանը և՛ հենց բարձրագույն ուսումնական հաստատության նպատակների և զարգացման պլանին: *Սա հետադարձ կապի վրա հիմնված գնահատում է, որում միջազգային գնահատման հանձնաժողովը* ստեղծում է բարձրագույն ուսումնական հաստատության ուժեղ և թույլ կողմերը՝ հաստատության ինքնագնահատման հաշվետվության և գնահատման այցելության ընթացքում ձեռք բերված տեղեկության հիման վրա՝ տրամադրելով բարելավման խորհուրդներ և դրանք իրականացնելու ճանապարհներ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակն է աջակցել ռազմավարական կառավարման և որակի մշակույթի զարգացմանը, որն արժևորում է ուսուցման կենտրոնացումը, ստեղծարարությունը և նորարարությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև բարձրացնել բուհերի կողմից մատուցվող կրթության, հետազոտական աշխատանքի և զարգացման աշխատանքի հասարակական ազդեցությունը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները գնահատվում են՝ ըստ տասներկու ստանդարտների: Գնահատումը կենտրոնանում է բուհի հիմնական գործընթացների՝ուսանելու և դասավանդելու, հետազոտական, զարգացման աշխատանքի և ստեղծարար գործունեությունների, հասարակությանը մատուցվող ծառայության, ինչպես նաև կազմակերպության ռազմավարական կառավարման և ռեսուրսների կառավարման վրա: Ուսանելու և դասավանդելու գործընթացը քննվում է ավելի մանրամասն՝ հինգ ստանդարտների համաձայն (ուսումնական ծրագիր, դասավանդող կազմ, սովորել և դասավանդել, ուսանողի գնահատում և սովորելուն նպաստող գործընթացներ): Գնահատման գործընթացի ամբողջ ընթացքում կենտրոնացումն ուղված է ուսումնական բարոյագիտությանը, որակի մշակույթին և միջազգայնացմանը:

Երևանի Հայբուսակ Համալսարանի (այսուհետ՝ <<ԵՀՀ>>) ինստիտուցիոնալ հավատարմագրումը տեղի ունեցավ 2019թ-ի սեպտեմբերին: Բարձրագույն և Միջին Մասնագիտական Կրթության Որակի Էստոնական Գործակալության (այսուհետ՝<<EKKA>>) հավատարմագրման համար կազմեց միջազգային գնահատման խորհուրդ հետևյալ կազմով՝

Հելեն Թոմաս (նախագահ)	Կրթական գծով Արտահաստիքային Խորհրդատու, Միացյալ Թագավորություն
Տանել Կերիկմէյե	Տալլինի Իրավաբանական Դպրոցի Տնօրեն, Տալլինի Տեխնոլոգիայի Համալսարան, Էստոնիա
Մարկ Ֆրեդերիքս	NVAO (Նիդերլանդների և Ֆլանդրիայի Հավատարմագրման Կազմակերպություն), Միջազգային Քաղաքականության համակարգող, Նիդերլանդներ
Ժակ Լանարես	Լոզանի Համալսարան, Փոխռեկտոր, Շվեյցարիա
Անդրեա Օլշևսկի	Գրացի Բժշկական Համալսարանում Անեսթեզիոլոգիայի Պրոֆեսոր: Դոկտորանտուրայի նախկին դեկան, Գրացի Բժշկական Համալսարան, Ավստրիա:
Արուս Հարությունյան	Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան, Մագիստրատուրայի ուսանող
Դավիթ Ղազարյան	Երևանի Պետական Բժշկական Համալսարան, դոցենտ, Պրակտիկայի բաժնի Ղեկավար

Գնահատման գործընթացը համակարգվել է EKKA կազմի՝ պրն.Հիլլար Բաումանի և օրիորդ Եկատերինա Մասենկոյի կողմից:

Նախնական նախապատրաստական փուլից հետո գնահատման խորհրդի աշխատանքը Հայաստանում սկսել է 2019թ-ի սեպտեմբերի 9-ին՝ երկուշաբթի օրը՝ Հայաստանի Բարձրագույն Կրթության Համակարգի, ինչպես նաև EKKA-ի կողմից իրականացվող գնահատման ընթացակարգերիներկայացմամբ: Թիմի անդամները համաձայնության եկան քննարկել ընդհանուր հարցերը և ոլորտները յուրաքանչյուր խմբի հետ ԵՀՀ այցելության ժամանակ: Գնահատման խորհրդի անդամների միջև հանձնարարությունների բաշխումը կազմակերպվեց, և տեղանքի այցելության մանրամասն գրաֆիկի վերաբերյալ համաձայնության եկան:

Հաջորդ չորս օրերի ընթացքում ժողովները տեղի ունեցան ԵՀՀ-ի ներկայացուցիչների հետ (2019թ-ի սեպտեմբերի 10ից՝ երեքշաբթի օրվանից մինչև սեպտեմբերի 13-ը՝ ուրբաթ օրը):

Սեպտեմբերի 14-ին՝ շաբաթ օրը խորհուրդը մի ամբողջ օր ժողով ունեցավ, որի ընթացքում վերջնական հաշվետվության կառուցվածքի շուրջ համաձայնության եկան, և թիի ժողովների արդյունքները հավաքվեցին գնահատման հաշվետվության առաջին նախնական տարբերակում:

Հետևյալ հաշվետվությունն ունի երկու մաս՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման վերաբերյալ հաշվետվություն և երեք ուսումնական ծրագրերի որակի գնահատման վերաբերյալ հաշվետվություն՝ 1) Ընդհանուր Բժշկություն, 2) Իրավաբանություն, բակալավր, և 3) Կառավարում, մագիստրոս:

Ուսումնական ծրագրի գնահատումների արդյունքներն օգտագործվում են, որպեսզի <<օրինակի>> ձևով ներկայացնեն իստիտուցիոնալ հավատարմագրման ամբողջական հաշվետվությունը:

Երևանի Հայբուսակ Համալսարանի վերաբերյալ Տեղեկություն

Երևանի Հայբուսակ Համալսարանը (ԵՀՀ) մասնավոր համալսարան է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ), որը հիմնադրվել է 1990թ-ին որպես Հայբուսակ Կոոպերատիվ Ինստիտուտ: 2003թ-ին դարձավ Հայբուսակ Համալսարան: 2003թ-ից մի շարք մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններ միացան ԵՀՀ-ին՝ ներառյալ Հ.Լազարյանի անվան Արևելագիտության Ինստիտուտը, Լորիս Քալաշյանի անվան Հայկական Բաց Համալսարանը,Երևանի <<Ռոսլին>> Դիզայնի Ինստիտուտը, Գյումրու <<Իմաստասեր Անանիա Շիրակացի>> Համալսարանը, Երևանի Էկոլոգիայի, Տնտեսագիտության և Իրավունքի Հայկական Ինստիտուտը: ԵՀՀ-ն արտոնագրված է ՀՀ-ի կողմից՝ մատուցելու բարձրագույն կրթություն, և գործում է՝ ՀՀ օրենսդրության համաձայն: Այն մոտ 2,700 ուսանող ներառող, ամենից մեծ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունն է Հայաստանում:

Համալսարանը պատկանում է չորս Հիմնադիրների, որոնցից մեկը ներկայիս ռեկտորն է: Ռեկտորը հաշվետվություն է ներկայացնում Մասնակիցների Ընդհանուր Ժողովին: Կառավարման հարցերում Ռեկտորին աջակցում է Ռեկտորատը: ԵՀՀ-ի ամենից ավագ կոմիտեն Գիտական Խորհուրդն է: Կա նաև ուսանողական պառլամենտ:

ԵՀՀ-ն ունի 5 ֆակուլտետ՝ Բժշկություն, Իրավաբանություն և Միջազգային Հարաբերություններ, Տնտեսագիտություն, Հումանիտար, և Դիզայն ու Հագուստի Մոդելավորում: Այն առաջարկում է ծրագրեր՝ 18 ոլորտներում, որոնց մեծամասնությունը բակալավրի մակարդակն են շնորհում:

ԵՀՀ-ն առաջարկում է մագիստրատուրայի ծրագրեր՝ 7 տարբեր մասնագիտություններով: Բժշկության Ֆակուլտետ ամենից մեծ ֆակուլտետն է, բոլոր ուսանողների կեսից ավելին այդ ֆակուլտետում է սովորում: Բոլոր միջազգային ուսանողներից այցի ժամանակ գրեթե 1000-ն էին Բժշկության Ֆակուլտետում սովորում:

ԵՀՀ-ն ունի երկու հիմանական վայրեր Երևանում, երկուսն էլ պատկանում են համալսարանին: Ադմինիստրացիան հիմնված է Աբելյան 6 հասցեում, որտեղ սկզբնականին կից մի նոր շենք է կառուցվել:

Վերջին անգամ Համալսարանը հավատարմագրման գործընթացն անցել էր 2014թ-ին Մասնագիտական Կրթության Որակի Ապահովման Հիմնադրամի Ազգային Կենտրոնի (ANQA) կողմից:

Նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման խորհուրդների հիման վրա հիմնական փոփոխությունները

ANQA վերանայումը ուներ տաս հիմնական խորհուրդներ, որոնցից ոչ բոլորն էր ԵՀՀ-ն ընդունել այն հիմքով, որ մի քանիսը զուրկ էին օբյեկտիվությունից և բավարար չափով կոնկրետ չէին:

Հիմանական ոլորտները, որոնք ԵՀՀ նշում է, որ զարգացրել է ANQA հավատարմագրումից հետո, հետևյալն են՝ առաքելության, ռազմավարական նպատակների պարզաբանում, կարճա-միջին և երկարաժամկետ պլանների մշակում՝ կատարողականության ցուցիչներով, Համալսարանի պլանները մշակելիս շահագրգիռ անձի

սեսակետների ավելի շատ կիրառում, Բարոյական Կանոնների մշակում, Կրթության Որակի Միավորը ընդլայնվել է և ավելի զարգացվել, ուսումնական ծրագրերը վերանայվել են, համեմատական վերլուծություն է կատարվել, ուսուցման արդյունքները վերանայվել, և բակալավրի և մագիստրոսի մակարդակների համար ուսուցման արդյունքների միջև տարբերակում է կատարվել:

ԵՀՀ-նհրատարակել է Ուսանողի Ուղեցույցը, վարկանիշային համակարգ է մշակվել դասավանդող կազմի համար, Ռազմավարական Պլանը ներառում է ԵՀՀ-ի ձգտումները և նախապատվությունները հետազոտական աշխատանքի ոլորտում, ուսանողի ներգրավվածությունը հետազոտական աշխատանքում մեծացել է, և միջազգայնացման վերաբերյալ քաղաքականություն կա՝ նպատակներին հասնելու թիրախավորված գործունեությամբ:

ԵՀՀ-ն նաև ներդրումներ է կատարել իր տարածքների և սարքավորումների բարելավման ուղղությամբ: Ներդրումների ցանկում է Բժշկության Ֆակուլտետի համար սարքավորումներով նոր շենքը:

Համառոտ շարադրանք հաստատությունից, ինքնագնահատման հաշվետվությունից, ինչպես նաև այցելությունից ստացած հիմնական տպավորությունների մասին

ԵՀՀ-ն հանձն է առել կատարել շատ բարելավումներ ANQA հավատարմագրման այցելությունից հետո: Այս փոփոխությունների նշանակալից մասը ներկայացվել է տասներկու ամիսների ընթացքում, որոնք տանում էին դեպի խորհրդի այցելությունը: Սա նշանակում է, որ բավարար ժամանակ չի եղել, որպեսզի բոլոր բարելավումներն ամբողջովին հայտնի դառնան համապատասխան շահագրգիռ կողմերին, փոփոխությունների ընդհանուր ընկալում ձևավորվի, իսկ շատերը դեռևս զետեղված չեն Համալսարանում:

ԵՀՀ-ն աշխատում է անդրադառնալ ավելի վաղ հայտնի դարձած թույլ կողմերին և մեծացնել իր ուսանողության թիվը, մասնավորապես միջազգային ուսանողներինը, որը նշանակալիորեն իրագործել է ֆինանսական շրջանառության զուգահեռ աճով:

ԵՀՀ-ի՝ փոփոխությունները և նոր նախաձեռնություններն որդեգրելու պատրաստակամությամբ դասավանդող կազմի կողմից մեծ ձգտում կա, չնայած որ սրանց ըմբռնումը թերի է: ԵՀՀ-ն միտված է զարգացման գործում ներգրավել շահագրգիռ անձանց, ինչպես որ ցուցադրված է այն ձևով, որով այն մոտեցավ ինքնագնահատման հաշվետվության /ԻՀ/ բարելավմանը:

ԻՀ-ն երկար փաստաթուղթը է՝ շատ տեղեկությամբ, որի մի մասը դժվար է հետևել: Հեշտ չէ հետևել ուսանողի հավաքագրման, առաջընթացի և հաջողության տվյալներին: Տեղեկության մեծ ծավալի դեպքում խորհրդի համար երբեմն դժվարություն էր ներկայացնում հիմնական կետերը գտնելը: Չնայած որ կար գնահատում յուրաքանչյուր բաժնի համառոտ շարադրանքներում՝ *ուժեղ կետեր, բարելավման ուղիներ և պլանավորված գործողություններ*վերնագրերի ներքո, պլանավորված գործողությունները հաճախ անորոշ էին, իսկ կոնկրետ արդյունքները՝ ոչ պարզ: Շատ փաստաթղթերի նման ԻՀ-ն նույնպես թարգմանվել էր: Թարգմանությունները ոչ միշտ էին պարզ, ԻՀ-ում նշված ոչ բոլոր հավելվածներն էին առկա հայերենով կամ անգլերենով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման ստացած արդյունքների համառոտ շարադրանքը

Ստացված ընդհանուր արդյունքները՝

Խորհուրդը գտավ, որ ԵՀՀ-ն շատ ժամանակ և էներգիա է ներդրել իր հետագա զարգացման մեջ և փորձում է իրականացնել իր ձգտումները լինել համալսարան, որն ապահովում էմիջազգային ստանդարտի բարձրորակ կրթություն, որը միջազգայնորեն ճանաչված է իր գիտական հետազոտության, որը խթանում է և պահպանում սոցիալական արդարության արժեքները և սոցիալական պատասխանատվությունը, որը ապահովվում է ժամանակակից տեխնոլոգիաներով և բարձր որակավորում ունեցող դասավանդող կազմով, և որը տալիս է շրջանավարտներ, որոնք լավ կրթված են՝ թե՛ որպես քաղաքացիներ և թե՛ որպես հմուտ մասնագետներ իրենց

ընտրած ոլորտում: Խորհուրդը հասկացավ, որ սա դժվար նպատակ է: Ռազմավարական Պլան 2016-2020 (ՌՊ), որն արտացոլում է ընդհանուր նպատակը, ներառում է մի քանի ոգեշնչող տարրեր, որոնց հնարավոր չէ հասնել չորս տարի ժամկետում: Ռազմավարական Պլանի հսկայական շրջանակը հնարավորություն է տվել, որ Համալսարանն աշխատի մի շարք ոլորտներում միաժամանակ: Խորհրդի կարծիքով սա հանգեցրել է կենտրոնացման, կոնկրետության և խիստ հսկողության բացակայությանը: Խորհուրդը նաև նշեց, որ վերջերս փոփոխություններ են եղել դասավանդող ավագ կազմի կառուցվածքում, որոնք չեն արտացոլվել փաստաթղթերի մեջ և միայն քննարկման միջոցով են ներկայացվել:Սրանից ստացվող տպավորությունը կապված է որոշումներից մեկի հետ, որը կայացվում է տվյալ պարագայում, այլ ոչ թե համակարգային ձևով:

Ստորև բերված աղյուսակում նշված գնահատման համառոտ շարադրանքին նպաստող հիմնական ուժեղ կողմերը և խնդիրները:

	Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում պահանջներին	Ճանաչման արժանի
Ռազմավարական կառավարում	□	□	X	□
Ռեսուրսներ	□	X	□	□
Որակի Մշակույթ	□	X	□	□
Ուսումնական Բարոյագիտություն	□	X	□	□
Միջազգայնացում	□	X	□	□
Դասավանդող Կազմ	□	X	□	□
Ուսումնական Ծրագիր	□	X	□	□
Սովորել և դասավանդել	□	X	□	□
Ուսանողի Գնահատում	□	X	□	□
Սովորելու Գործընթացին Նպաստող Համակարգեր	□	X	□	□
Հետազոտություն, Զարգացում և/կամ այլ Ստեղծարար Գործունեություն	□	□	X	□
Հասարակությանը մատուցվող Ծառայություն	□	X	□	□

Գովասանք՝

- Նոր շենքերը և հարմարությունները՝ ներառյալ նմանակման կենտրոնը, որը նպաստում է ուսանողի ուսանելուն:
- Միջազգային ուսանողների թվի աճի գործում հաջողությունը:
- Դասավանդող և վարչական կազմի, ինչպես նաև ուսանողության միջև լավ հարաբերությունը, որը ներկայացնում է համայնքի պատկերը:
- Ուսանողների պահանջների բավարարման գործում նպաստող, դասավանդող կազմի պրոակտիվությունը՝ ներառյալ միջազգային ուսանողների պահանջները:

Թերհուրդներ՝

- ԵՀՀ-ն պետք է մշակի ռազմավարական պլան, որպեսզի դրան կցված պարզ և սահմանափակ նպատակներ ունենա, որոնք ժամանակի և փողի կոնկրետ ռեսուրս են պահանջում:
- ԵՀՀ-ն պետք է մշակի ռազմավարական պլաններ հետազոտության, դասավանդելու և ուսանելու, միջազգայնացման, հասարակությանը մատուցվող ծառայության և որակի հիմնական ոլորտների համար, որոնք համապատասխանում են Համալսարանի հիմնական նպատակներին և մտնում են դրանց կազմում:
- Կիրառման պլանները պետք է թափանցիկ կերպով կապված լինեն բյուջեին և արտացոլեն նախապատվության ոլորտները:
- ԵՀՀ-ն պետք է մշակի հիմնական գաղափարներ, տարածի դրանց օգտագործումը, որոնք նպաստում են ուսանողակենտրոն ուսուցման, հետազոտություն-դասավանդում կապի, միջազգայնացման և հասարակությանը մատուցվող ծառայության ապահովմանը:
- ԵՀՀ-ն պետք է վերանայի ուսուցման արդյունքների և գնահատման միջև կապը վերանայի, ինչպես նաև երաշխավորի, որ գնահատման չափանիշները բացահայտ և թափանցիկ կերպով ուսուցման արդյունքներին են հավասարեցված:
- ԵՀՀ-ն պետք է թիրախավորի ներդրում, որպեսզի մշակի կայուն հետազոտական մշակույթ, որին նպաստում է պարզ կենտրոնացված ռազմավարությունը:
- ԵՀՀ-ն պետք է մշակի ուսումնական կարիերայի ուղի, որպեսզի երաշխավորի իր կրթական գործունեությունների ապագան և հնարավոր դարձնի, որ այն գրավի ազգային և միջազգային դասավանդող կազմերին:
- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ թարմացնում և հրատարակում է հիմնական փաստաթղթերը, օրինակ, կազմակերպչական կառուցվածքը, որակի ապահովման ձեռնարկը, ուսանողի ուղեցույցը, որպեսզի դրանք հասանելի լինել համապատասխան բոլոր շահագրգիռ անձանց:
- ԵՀՀ-ն պետք է մշակի էթիկայի նկատմամբ իր մոտեցումը, որպեսզի երաշխավորի, որ կան քաղաքականություններ, որոնց կարելի է հասցեագրել բոլոր էական ոլորտները, և որ քաղաքականությունները վերահսկելու ենթակառուցվածքը և դրանց կիրառումը շահերի հավանական բախումից զերծ են:
- ԵՀՀ-ն պետք է հսկի նախաձեռնությունների իրականացումը՝ լինի քաղաքականություն, թե ընթացակարգ, որպեսզի երաշխավորի, որ դրանք արդյունավետ են դրված նպատակներին հասնելու գործընթացում:

1.1. Ռազմավարական կառավարում

Ստանդարտ՝

Բարձրագույն ուսումնական հաստատությունում զարգացման պլանավորումը նպատակային և համակարգված է՝ ներառելով բազմաթիվ շահագրգիռ կողմերի: Բարձրագույն ուսումնական հաստատությունը կանոնավոր գնահատում է իր նշված նպատակներին հասնելը և իր գործունեությունների ներգործությունը:

Ուղեցույցներ՝

Բուհը ձևավորել է նպատակներ և իր հիմնական գործունեությունների գլխավոր արդյունքները՝ ուսանելը և դասավանդելը, հետազոտական աշխատանքը, զարգացման և ստեղծարար գործունեությունները, ինչպես նաև հասարակությանը մատուցվող ծառայությունները՝ հաշվի առնելով ազգային նախապատվությունները և հասարակության պահանջները, կենտրոնանալով իր ուժեղ կողմերի վրա, ինչպես նաև նվազեցնելով անպիտան ընդօրինակումը թե՛ բուհում և թե՛ Հայաստանի ընդհանուր բարձրագույն կրթության համակարգում: Բուհը ղեկավարվում է՝ ըստ իր առաքելության, տեսլականի և հիմնական արժեքների, ինչպես նաև այս սկզբունքների հիման վրա նշված նպատակների: Նպատակներին հասնելը և գործունեությունների ազդեցությունները կանոնավոր կերպով գնահատվում են: Աջակցություն է ցուցաբերվում ստեղծարար և նորարարական գաղափարներին, դրանք արժևորվում են թե՛ հիմնական և թե՛ աջակցման գործունեություններում: Բուհի (ներառյալ ուսանողները), ինչպես նաև արտաքին շահագրգիռ կողմերի անդամակցությունը ներգրավված է բուհի զարգացման պլանի և գործողության պլանների մշակման և իրականացման աշխատանքում: Բուհի անդամները կիսում են հիմնական արժեքները, որոնք ծառայում են որպես հաստատության զարգացման պլանի հիմք:

Ցուցիչ՝

Զարգացման/գործողության պլանում (գլխավոր արդյունքներ) նշված և հասած նպատակների թիվը:

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում պահանջներին	Ճանաչման արժանի
□	□	X	□

Ապացույց և Վերլուծություն

Վերջին գնահատման խորհուրդներն արտացոլելիս ԵՀՀ-ն մշակեց ռազմավարական պլան 2016-2020 (ՌՊ), որը ներառում է տեսլական, առաքելություն, հիմնական արժեքներ, նպատակներ, միջին և կարճաժամկետ պլաններ և ցուցիչներ: ԵՀՀ-ի նշված տեսլականն է <<ձգտել ապահովել բարձրորակ ուսումնական ծրագրեր, ուսանողակենտրոն մոտեցում, նպաստել ուսանողների և դասավանդող կազմի ստեղծարար նախաձեռնությանը՝ դրանք գիտություն-կրթություն-նորարարություն գործընթացի կատարմանն ուղղելու նպատակով: Համալսարանը ձգտում է դառնալ մի համալսարանը, որը

- Ապահովում է բարձրորակ կրթություն, որը համապատասխանում է միջազգային ստանդարտներին, և որը տեղին և դինամիկ կերպով արձագանքում է հասարակության, տնտեսության և աշխատանքային շուկայի շարունակ փոփոխվող պահանջներին,
- Միջազգայնորեն ճանաչված առաջատար գիտակրթական հաստատություն է, հավատարիմ է սոցիալական արդարությանը և ապահովում է հասարակության սոցիալապես խոցելի շերտերի համար հասանելի կրթությունը,

- Սոցիալական պատասխանատվություն է վերցնում և հաշվի առնում իր ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի կարծիքները,
- Տեխնիկապես զինված է ժամանակակից տեխնոլոգիաներով, ունի բարձր որակավորում ունեցող դասավանդող կազմ և երաշխավորում է ուսանողների և ուսուցիչների շրջանում ընկերակցություն և համագործակցային հարաբերություն, ինչը քաղաքացիների համապարփակ զարգացման և իրավասու մասնագետների երաշխիքն է,
- Արմատավորում և կիսում է ազգային և ընդհանուր արժեքներ և, որպես մշակութային և գիտակրթական հաստատություն, համագործակցում է աշխարհահռչակ համալսարանների հետ>>:

ՌՊ-ն ներառում է ԵՀՀ-ի հիմնական արժեքները, որոնք իրենցից ներկայացնում են ուսանողի ձեռքբերումները, հասանելի կրթությունը, ժողովրդավարությունը, իրավասու դասավանդող կազմը, ուսումնական ազնվությունը, մրցակցությունը և սոցիալական պատասխանատվությունը: Դասավանդող կազմը և ուսանողներն իրազեկ են, հասկանում և կիսում են արժեքները:

ԵՀՀ-ն սահուն արտաբերել է իր կոնկրետ առաքելությունը, որը *<<մասնագետների պատրաստումն է, որոնք պետական և առանձին համայնքների զարգացմանը և ուժեղացմանը կնպաստեն՝ հաշվի առնելով ՀՀ տարածքային առանձնահատկությունները և միջազգային հարաբերությունները>>:*

ՌՊ-ը մշակվել է մասնակցային գործընթացի միջոցով և ֆակուլտետների ռազմավարական պլանների հիման վրա: Ֆակուլտետի պլանները, որոնք մշակվել են աշխատանքային խմբերի կողմից, քննարկվել են Ռեկտորատում և, հետևաբար, քննարկվել և հավանության են արժանացել Համալսարանի Գիտական Խորհրդի կողմից:

ՌՊ-ն ունի նպատակ, որոնցից չորսը կապված է աղբյուրներին, երեքը՝ ներքին և արտաքին հաղորդակցությանը, երկուսը՝ դասավանդմանը, իսկ մեկը՝ հետազոտությանը: Յուրաքանչյուր նպատակ ունի մի շարք ցուցիչներ, ինչևիցե, խորհուրդը չկարողացավ գտնել սրանց համար թիրախների ոչ մի ապացույց ոչ փաստաթղթերում, ոչ էլ վերադաս անձնակազմի և ղեկավարող մարմնի հետ քննարկումներում:

Միջին ժամկետով և կարճաժամկետ գործողության պլանները նշում են գործողությունները, ներգրավվածներին և վերջնաժամկետները: Խորհրդի համար պարզ չէր, թե ով էր կրում առաջնակի պատասխանատվությունը յուրաքանչյուր կոնկրետ գործողության ժողովի վերահսկողության համար: Խորհուրդը չկարողացավ գտնել ավելի մանրամասն գործողության պլանների որևէ փաստարկ, այնպիսին ինչպիսիք են նպատակներին հասնելու համար պահանջվող ժամանակի, փողի և անձնակազմի ռեսուրսների նույնականացումը:

ՌՊ-ը նշում է երեք հիմնական մարտահրավեր, որոնց հանդիպում է ԵՀՀ-ն: Դրանք են *<<ֆինանսական ներհոսքերի փոփոխությունը, հետազոտական գործունեություններում ներդրումները և դրանց բարելավումը, ինչպես նաև ժամանակակից ուսումնական ծրագրերի ձևավորումը, որոնք երաշխավորում են բարձրորակ կրթություն>>:*Խորհուրդը չկարողացավ գտնել ոչ մանրամասն վերլուծություն ինքնագնահատման հաշվետվությունում, բացատրություններում, որոնք տրվել էին այս մարտահրավերների համատեքստի քննարկումներում, ոչ էլիրավիճակային վերլուծության հետ թափանցիկ կապ:

ՌՊ-ի կենտրոնացումն ինստիտուցիոնալ մակարդակով է, խորհուրդը չտեսավ ոչ մի ռազմավարական պլան, որը մշակվել է գործունեության գլխավոր ոլորտների համար՝ ներառյալ հետազոտությունը, միջազգայնացումը, ուսանելը և ուսուցանելը, ռեսուրսները և հասարակության մատուցվող ծառայությունը:

ԵՀՀ-ն վերջերս ստեղծել է Վերահսկման Կոմիտե (ՎԿ), որն ունի 5 անդամ, և որի նախագահը Ռեկտորն է: ՎԿ-ն հանդիպում է տարին երեք անգամ, օրակարգը մշակվում է Ռեկտորի՝ որակի ապահովման խորհրդատուի կողմից, և ՎԿ-ն քննարկում է շատ հարցեր: Այցելության պահին խորհուրդը իմացավ, որ քննարկման թեման հետազոտական աշխատանքն է: Պարզ չէր, ինչևիցե, թե արդյոք քննարկումներն արտացոլում էին ռազմավարական հարցերը և ՌՊ-ի առաջընթացը:

Դեկանների կողմից ամենամյա հաշվետվություններ են ներկայացվում Ռեկտորին, որն իր հերթին հաշվետվություն է ներկայացնում Գիտական Խորհրդին: Դեկանի հաշվետվությունները հիմնականում գործունեության վերաբերյալ հաշվետվություններ են, քան թե ՌԶ-ի կատարման վերաբերյալ հաշվետվություն: Հաշվետվությունները չեն հավասարեցվում ՌՊ-ում և դրան հարակից պլաններում ներառված ցուցիչներով: Խորհուրդը վերանայեց փոխռեկտորների աշխատանքային նկարագրությունները և չկարողացավ գտնել կոնկրետ պարտականությունների հիշատակում, որոնք առնչվում են ՌՊ-ի այս ասպեկտների մշակմանը, իրագործմանը և դրանց զեկուցմանը դրանց գործունեության ոլորտում: Խորհրդի համար դժվար էր տեսնել, թե ինչպես են կառավարումը և զեկուցումը տեղի ունենում, ինչպես է պատրաստված հաշվետվությունների կենտրոնացումը հնարավոր դարձնում, որ վերադաս կառավարող մարմինն ամբողջովին իրազեկված լինի ՌՊ-ի իրագործման մասին, իմանա, արդյոք նպատակներն իրագործվում են, դրանց չափը, ի վիճակի լինի ձևափոխել կամ հարմարեցնել ՌՊ-ը համատեքստի փոփոխություններին կամ էլ նախապատվելի նպատակների իրագործման համար հատկացնի հավելյալ ռեսուրսներ:
Խորհուրդը փաստաթղթերի և ժողովների միջոցով ապահովվող ապացույցներից եզրակացրեց, որ ԵՀՀ-ի կառավարման նկատմամբ ռազմավարական մոտեցումը դեռևս ամբողջովին գործի դրված չէ: Չնայած հիմնական տարրերից մի քանիսը կիրառվել են, դրանք միտված են լինելու պլանավորման բնույթի, քան թե ռազմավարական: ՌՊ-ն մեկնարկային կետ է, չունի ցուցիչներ, որոնք առնչվում են թիրախներին, որոնց էլ կարելի է ներգործության և առաջընթացի համար հետևել և վերահսկել: Միջին և կարճաժամկետ պլանները ոչ թե ամենամյա նպատակներով ռազմավարական պլաններ են, այլ ներկայիս տարվա գործունեությունների պարզ ցանկ են: Սա նշանակում է, որ ռազմավարական պլանը կենտրոնանում է գործընթացների և գործունեությունների, այլ ոչ թե արդյունքների վրա:

Հետազոտության, ուսանելու և ուսուցման, միջազգայնացման, ինչպես նաև հասարակությանը մատուցվող ծառայության հիմնական ոլորտների համար կենտրոնացված ռազմավարական պլանների բացակայությունը ԵՀՀ-ի ռազմավարական կառավարման նշանակալից թուլություն է: Խորհուրդը գտավ, որ սրանց բացակայությունը ներգործել է հարակից ստանդարտների վրա, որտեղ կա ռազմավարական մոտեցման ոչ բավարար զարգացում, որը հանգեցրել է այս ոլորտներից յուրաքանչյուրի թուլությանը: Խորհուրդը համաձայնության եկավ չպատժել յուրաքանչյուր ստանդարտը, այլ սահմանափակել այս թուլությունը ռազմավարական կառավարման վերաբերյալ իր որոշմամբ:
Խորհուրդը եզրակացրեց հարցազրույցների իրենց վերլուծությունից և փոխռեկտորների, ինչպես նաև ԵՀՀ ղեկավարության մյուս անդամների դերերի իրենց ուշադիր ուսումնասիրությունից եզրակացրեց, որ ռազմավարական պլանավորումը և զարգացման գործընթացը օգուտ կքաղեին Համալսարանում հետևողական փոխըմբռնումից, ինչպես նաև կենտրոնական և ֆակուլտետային մակարդակում ավելի ակադեմիական առաջնորդությունից: Սա կհիմնավորվեր որոշում կայացնող կառույցի վերանայմամբ, ինչպես նաև փոխռեկտորների դերերի վերանայմամբ և ստուգմամբ, որոնք, ըստ աշխատանքի նկարագրությունների, մասնավորապես Փոխռեկտորի Կրթական Գործերի նկարագրությունների, ունեն ավելի շատ համակարգող և վարչական գործառույթ, քան ռազմավարական և առաջնորդության դեր:

Խորհուրդներ՝

- ԵՀՀ-ը պետք է մշակի ամբողջովին մտածված ռազմավարական պլաններ, որոնք հիմնված են խորը և ապացույցների վրա հիմնված վերլուծության վրա, որոնք ներառում են կոնկրետ թիրախներ, որպեսզի երաշխավորեն, որ նախապատվությունները պարզորեն նույնականացված են, և որ նպատակները սահմանափակ են: Սա հնարավոր կդարձնի, որ դրանց հասնելը պարզորեն ցուցադրվի:
- ԵՀՀ պետք է մշակի ռազմավարական պլաններ իր հիմնական ոլորտներից յուրաքանչյուրի համար, որոնք համապատասխանում և մտնում են Համալսարանի հիմնական նպատակների մեջ:

- ԵՀՀ պետք է ապահովի անձնակազմի զարգացում՝ ռազմավարական պլանավորման համար, որպեսզի երաշխավորի, որ գործընթացում ներգրավվածներն ունեն համապատասխան կարողություններ և հմտություններ:
- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ննախապատրաստի օրգանոգրամ, որը պարզորեն նշում է համալսարանի կառուցվածքը, որոշում կայացնող մարմիններին և ենթակայության կարգն այնպես, որ շահագրգիռ բոլոր կողմերին պարզ լինի:
- ԵՀՀ-ն պետք է մշակի ավելի մանրամասն գործողության պլաններ, որպեսզի երաշխավորի, որ ռեսուրսները (մարդկային, ֆինանսական, ժամանակային, ենթակառուցվածքային) հասանելի են՝ տվյալ վերջնաժամկետում սահմանված թիրախներին հասնելու, ինչպես նաև երաշխավորելու համար, որ յուրաքանչյուր նպատակի համար պատասխանատու անձը նշված է:

1.2. Ռեսուրսներ

Ստանդարտ՝

Բարձրագույն ուսումնական հաստատությունը ստեղծում է իր դասավանդող կազմը և ղեկավարում էիր ֆիզիկական և ֆինանսական ռեսուրսները նպատակային, համակարգված և կայուն ձևով: Բարձրագույն ուսումնական հաստատության ներքին և արտաքին հաղորդակցությունները (ներառյալ շուկայավարումը և հեղինակության ստեղծումը) թիրախավորված են և ղեկավարվում են:

Ուղեցույցներ՝

Բուհն ունի դասավանդող կազմի զարգացման արդյունավետ համակարգ: Աշխատողների հավաքագրման և զարգացման սկզբունքները և ընթացակարգերը հիմնված են բուհի զարգացման պլանի նպատակների վրա, արդար և թափանցիկ են: Ուսումնական կազմի կարիերայի մոդելը խթանում է տաղանդավոր երիտասարդներին սկսել իրենց ուսումնական կարիերան, ստեղծում է առաջընթացի հնարավորություններ և երաշխավորում է ուսումնական կազմի կայունությունը: Աշխատողների վարձատրության և խթանման սկզբունքները սահմանված են, հասանելի բոլոր աշխատողների համար և դիտարկվում են:

Բուհի ֆինանսական ռեսուրսների հատկացումը հիմնված է դրա զարգացման պլանի նպատակների վրա: Դրա ենթակառուցվածքի (շենքեր, լաբորատորիաներ, դասասենյակներ, ՏՏ համակարգեր և այլն) կառավարումը և զարգացումը տնտեսապես հնարավոր են: Բավարար ռեսուրսներ են հասանելի՝ կրթության և հետազոտական աշխատանքի ենթակառուցվածքի բարելավման համար, և/կամ գոյություն ունի ռազմավարություն, որը հնարավոր է դարձնում, որ բուհը դրանք ձեռք բերի:

Բավարար թվով դասագրքեր և ուսուցմանն օժանդակող այլ առարկաներ են հասանելի, դրանք բոլորն էլ բարձրորակ են և մատչելի: Բուհի գործունեությունների (ներառյալ ուսումնական ծրագրերի) և արտաքին գնահատումների արդյունքների վերաբերյալ հանրայնորեն առաջարկվող տեղեկությունը ճիշտ է, թարմ է, հեշտ հասանելի և հասկանալի: Բուհն ունի իր հիմնական գործունեությունները և ուսումնական կարիերայի հնարավորությունները հանրածանոթ դարձնելու համակարգ: Բուհն ունի արտաքին և ներքին հաղորդակցությունների համար գործող համակարգ, որը տեղին է թիրախ լսարանի դեպքում: Բուհի անդամները ժամանակի տեղեկանում են իրենց առնչվող որոշումների մասին:

Բուհում կառավարմամբ, աշխատանքային պայմաններով, տեղեկատվության հոսքով և այլնով աշխատողի բավարարվածությունը կանոնավոր կերպով ուսումնասիրվում է, իսկ ուսումնասիրության արդյունքներն օգտագործվում են որակի բարելավման գործունեություններում:

Ցուցիչներ՝

- *Եկամուտների և ծախսերի բաշխում (ներառյալ ՀՁԿ գործունեությունները)*
- *Դասավանդող կազմի բավարարվածության ուսումնասիրության արդյունքները*

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում	Ճանաչման արժանի

		պահանջներին	
□	X	□	□

Ապացույց և Վերլուծություն

ԵՀՀ-ի մարդկային, ֆիզիկական և ֆինանսական ռեսուրսների կառավարումը և բարելավումը հիմնված են ՌՊ-ի վրա: Պլանավորված է, որ դասավանդող կազմի բարելավման գործունեությունները կենտրոնանան ընթացակարգերի զարգացման, օրինակ՝ կրթության որակի ապահովման ներքին համակարգի զարգացումը, կամ շատ հմուտ դասավանդող կազմի հավաքագրման, դասավանդող կազմի կոմպիտենտության բարելավման, օրինակ՝ կատարողականության ցուցիչների սահմանումը, դասավանդող կազմի որակավորման բարձրացման և նրանց գիտահետազոտական գործունեության զարգացման վրա: Այս միջամտություններն ուղղված են զարգացնել ուսանողների մեջ կոնկրետ և փոխարինելի ունակություններ և հմտություններ:

ANQA-ի նախորդ հավատարմագրման գործընթացը և EKKA հավատարմագրման նախապատրաստումը ԵՀՀ-ում մի քանի խոշոր փոփոխությունների են հանգեցրել: Դրանցից են դասավանդող կազմի մրցակցային ընտրության կանոնակարգերի զարգացումը, ուսումնական կազմի մասնագիտական գործունեությունների վարկանիշի և գնահատման կանոնակարգերի զարգացումը, դասավանդող կազմի ստեղծումը և ապահովում, որակի ապահովման վերապատրաստումը: ԵՀՀ-ի ենթակառուցվածքը էականորեն զարգացել է, օրինակ՝ ներառելով նոր հաստատություններ և հաստատելով 14 կլինիկաների, բժշկական կենտրոնների, հիվանդանոցների և բժշկական գիտահետազոտական ինստիտուտների մասնագետների հետ նոր համագործակցություններ, մշակելով նղեկավարելով դասավանդող կազմի և ուսանողների ուսումնասիրություններ, ուսումնասիրությունների արդյունքներում բարելավումներ կատարելով: Այցելող դասախոսների հետ պայմանագրեր են կնքվում, որպեսզի բերեն ժամանակակից տեսական և գործնական գիտելիքներ:

Ռեկտորն անմիջական վերահսկողություն է ծավալում մարդկային կատարողականության ցուցիչների բարելավման նկատմամբ: Սրանց կանոնավոր վերանայումը և վերլուծությունը կատարում են Համալսարանի համապատասխան կառուցվածքային միավորները: Մշակվել են աշխատանքային նկարագրությունները և անձնական բնութագրերը: Մշակվել են Կրթության Որակի Կենտրոնի անձնակազմի մասնագիտական պահանջները, իսկ անձնակազմը մասնակցել է զարգացման գործունեություններում, որպեսզի բարելավի համապատասխան ոլորտներում ունեցած իր հմտություններն ու գիտելիքը: Ուսման որոշ ոլորտներում ԵՀՀ-ն կարող է գրավել միջազգային այցելող դասախոսների, որոնք ունեն ժամանակակից տեսական և գործնական գիտելիքներ:

ԵՀՀ-ն ապահովում է մասնագիտական զարգացման մի շարք գործունեություններ ուսումնական անձնակազմի համար: Այդուհանդերձ, խորհրդի համար պարզ չէր, թե ինչ համակարգեր են առկա, որպեսզի երաշխավորեն ուսումնական անձնակազմի պահանջների և ձգտումների համակարգային նույնականացումը, և թե ինչպես են դրանց հասնում: Վարկանիշային անձնակազմի համար սխեմա է ներկայացվել: Ինչնիցե, փաստը, թե ինչ աստիճան էր այն մշակվել, հաստատուն չէր. անձնակազմի որոշ անդամներ հասկանում էին, որ սխեման դեռևս մշակման փուլում է: Խորհուրդը բավարար փաստ չուներ, որպեսզի ցույց տար, որ վարկանիշը կապված է վարձատրության հետ: Անհրաժեշտ է, որ Համալսարանը մշակի համակարգված գործընթացներ՝ դասավանդող կազմի զարգացմանն հետ կապված, որպեսզի երաշխավորի, որ դասավանդող կազմը ամրապնդում է գիտելիքը, հմտությունները, վարվերակերպը, ինչպես նաև ձեռք է բերում նոր գիտելիք, հմտություններ և վարվելակերպ:

Ռեսուրսների և ներդրումների վերաբերյալ որոշումները կատարում է Ռեկտորը: Ռեսուրսների համար ավելի փոքր պահանջները դեկաններից Ռեկտորին են ուղղվում: Խորհուրդը տեղեկացավ, որ այսպիսի պահանջները միշտ բավարարվում են: Ավելի մեծ ռեսուրսներ ներառող ներդրումները քննարկվում են Ռեկտորատում, և, անհրաժեշտության դեպքում, Հիմնադիրների հետ: Նշանակալից չափով ներդրում է կատարվել Աբելյան

փողոցում գտնվող նոր շենքում, որը ներառում է բարելավված հարմարություններ գործնական դասընթացների՝ մասնավորապես Բժշկության Ֆակուլտետի ուսանողների համար:

ԵՀՀ—ն ունի կայացած գրադարան: Գրադարանը սահմանափակված է չափով և ներառում է հիմնական տեքստերի մի շարք բազմաքանակ օրինակներ: Գրադարանն առաջարկում է անվճար ինտերնետ, իսկ որոշ տեքստեր էլեկտրոնային ձևաչափով են: Խորհրդի այցելության ժամանակ ԵՀՀ-ն սկսել էր էլեկտրոնային գրադարանի ռեսուրսներում ներդրումներ կատարել: Հասանելիությունը դեռևս շատ վաղ փուլերում էր և չէր ապահովում բավարար չափով մուտք արվեստի վիճակին էլ-դասագրքերին կամ նվիրված ծրագրերին, մասնավորապես անգլերենով:

Մասնագիտական հարմարություններ կան արվեստի, դիզայնի և նորաձևություն համար, որոնք սահմանափակ են, սակայն բավարարում են փոքր խմբի պահանջները: Խորհուրդը տեսավ ուսումնական այս ոլորտներում որոշ սարքավորումների թարմացման ապացույցներ: Վերջերս ԵՀՀ-ն ներդրում է կատարել նմանակման կենտրոնում Բժշկության Ֆակուլտետի համար, որը, եթե հետագայում զարգացվի, բժշկության ուսանողների համար ուսուցման կայուն միջավայր կապահովի: Իրավաբանության Ֆակուլտետն ունի իրավաբանական կլինիկա:

Ընդհանուր առմամբ պարզ էր Խորհրդի համար, որ ԵՀՀ-ի ֆինանսական ռեսուրսների հատկացումը հիմնված է զարգացման պլանի նպատակների վրա: Ամենամյա բյուջեն ցույց է տալիս կայուն աճի միտում վերջին մի քանի տարիների համար, որը պետք է նպաստի ռեսուրսների հետագա զարգացմանը:

Գովասանք՝

- Աբելյան փողոցի նոր շենքը, որն ապահովում է ժամանակակից հարմարություններ բժշկության ոլորտում գործնական աշխատանքի համար:
- Արդյունավետ համագործակցությունները, որոնք ԵՀՀ-ն հաստատել է մի քանի կլինիկաների հետ՝ բժշկական ոլորտի ուսանողներին գործնական հմտություններ դասավանդելու համար, և իրավաբանական կլինիկայի ապահովումը:

Խորհուրդներ՝

- ԵՀՀ-ն պետք է հետագայում բարելավի աշխատողների վարձատրության սկզբունքների թափանցիկությունը և ըմբռնումը:
- ԵՀՀ-ն պետք է հետագայում համակարգի դասավանդող կազմի զարգացման գործընթացները, որպեսզի երաշխավորի, որ գործունեություններընպաստում են նոր գիտելիքի, հմտությունների և վարքի բարելավմանը:
- ԵՀՀ-ն պետք է կենտրոնացնի ներդրումները գրադարանում, որպեսզի ընդլայնի թվային ռեսուրսները, որն էլ հնարավորություն կտա, որ դասավանդող կազմն օգտագործի ուսանողների ուսուցման շահի համար էլ-ուսուցման հնարավորությունները:
- Մեծացնել ԵՀՀ-ում հետազոտական աշխատանքին նվիրված բյուջեն և հաստատել պաշտոնական հարաբերություններ Հայաստանում գտնվող հետազոտական հաստատության հետ, որպեսզի բարելավվի հետազոտության արդյունքը, այսպիսով՝ակնհայտ լինելը:

1.3. Որակի մշակույթ

Ստանդարտ՝

Բարձրագույն ուսումնական հաստատությունը սահմանել է իր հիմնական և աջակցման գործընթացների որակի, ինչպես նաև որակի ապահովման սկզբունքները: Բարձրագույն ուսումնական հաստատությունում ներքին գնահատումը նպաստում է ռազմավարական կառավարմանը և իրականացվում է կանոնավոր կերպով տարբեր մակարդակներում (հաստատություն, միավոր, ուսումնական ծրագիր), ներքին և արտաքին գնահատման արդյունքները վերլուծվում են, իսկ որակի բարելավման գործունեությունները կատարվում են:

Ուղեցույցներ՝

Բուհի անդամները համաձայնության են եկել իրենց հիմնական և աջակցման գործընթացների որակի սահմանումների շուրջ և առաջնորդվում են նրանցով իրենց ամենօրյա աշխատանքում: Բուհը մշակում և հանրայնացնում է ներքին որակի ապահովման (ներքին գնահատում) իր քաղաքականությունները և ընթացակարգերը և անցկացնում է կանոնավոր ներքին գնահատումներ, որոնք հաշվի են առնում, ի թիվս այլոց, սույն Ուղեցույցում նշված ստանդարտները, գրանցում իր անդամներից և/կամ արտաքին փորձագետներից ստացվող հետադարձ կապը: Ներքին գնահատումների ընթացքում փոխադարձ ուսուցում, այլ բուհերի հետ համեմատություններ՝ կապված նրանց արդյունքների և ձեռքբերման միջոցների հետ, ինչպես նաև լավագույն փորձով կիսվելու աշխատանքներ են կատարվում՝ ի թիվս այլ բաների:

Ներքին գնահատումը հիմնված է որակի կառավարմանն առնչվող հետևյալ հիմնական հարցերի վրա՝

Ի՞նչ եք ցանկանում ձեռք բերել և ինչո՞ւ: Ինչպե՞ս եք ցանկանում դա անել: Ինչպե՞ս գիտեք, որ գործունեություններ արդյունավետ են և կունենան ցանկալի ներգործությունը: Ինչպե՞ս եք կառավարում որակի բարելավման գործունեությունները:

Ուսումնական ծրագրերի կանոնավոր վերանայումները և բարելավումները երաշխավորում են դրանց տեղին լինելը՝ ներառյալ միջազգային միտումներին դրանց համապատասխանությունը:

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում պահանջներին	Ճանաչման արժանի
□	X	□	□

Ապացույց և Վերլուծություն

ԵՀՀ-ի ՌՊ-ի առաջին նպատակը *<<ներկայիս ուսումնական ծրագրերի բարելավման վրա հիմնված կրթության բարձր որակի>>* ապահովումն է, երկրորդը՝ *<<կրթության որակի ապահովման ներքին համակարգի բարելավումը և զարգացումը>>:* ԵՀՀ-ն ունի կենտրոնացված Կրթության Որակի Ապահովման Միավոր (ԿՈԱ), որը ANQA-ի գնահատումից հետո ընդլայնվել է: Այն ունի անձնակազմի հինգ անդամ, որոնցից չորսը նաև ունեն դասավանդման մի փոքր պարտականություն: Դեռ ավելին, հինգ ֆակուլտետներից յուրաքանչյուրը և ոչ ուսումնական բաժիններից յուրաքանչյուրն ունի որակի ապահովման նշանակված անհատ: Այս կառույցն ապահովում է բոլոր ֆակուլտետների և ոչ ուսումնական միավորների ներգրավվումը Համալսարանի որակի ապահովման և բարելավման գործընթացներում: Դեռ ավելին, կա որակի ապահովման խորհրդատու, որը ԿՈԱ-ին, ինչպես նաև անմիջապես Ռեկտորին ապահովում է պատահական և տվյալ դեպքին առնչվող խորհուրդներով:

ԿՈԱ-ի գործառույթները, պարտականությունները, նպատակները նշված են *Կրթության Որակի Ապահովման Կենտրոնի Կանոնակարգում:* Պարզ չէ, թեԿՈԱ-ի նպատակներն ինչպես են առնչվում ՌՊ-ի նպատակներին

ամ էլ պարզ չէ, թե դրանք ինչպես են հսկվում: Խորհուրդը տեղեկացավ, որ չնայած որ կան կարճա-միջին ամկետով պլաններ ԿՈԱ-ի համար, այցելության պահին առաջընթացի վերաբերյալ ոչ մի հաշվետվություն չի ներկայացվել: Դեռ ավելին, նպատակները չեն ձևավորվում այն ձևով, որը որ հնարավոր կդարձներ, որ դրանց առաջընթացին պարզորեն հետևեն կամ էլ դրանց հանդիպելը օբյեկտիվորեն ցուցադրեն: Որպես համալսարանում որակի պահապան՝ ԿՈԱ-ն պետք է օրինակ ծառայի նպատակների ձևավորման, վերանայման և դրանց զեկուցման համար ընդհանուր հաստատության մասշտաբով:

2017թ-ին ԵՀՀ-ն ստեղծեց իր առաջին Կրթության Որակի Ապահովման Ձեռնարկը (ԿՈԱՁ): Սա ծավալուն փաստաթուղթ է, որը ներառում է Համալսարանի պատմական համատեքստը, որակի ապահովման համակարգի ընդհանուր նկարագրությունը և սրա կարևոր մանրամասն բաղադրիչները՝ ներառյալ ուսումնական ծրագրերի զարգացումը և հաստատումը, գնահատման ուղեցույցը և կանոնակարգերը, ինչպես նաև գրագողության ուղեցույցը: Փաստաթղթի ստեղծումից հետո Համալսարանում մի շարք փոփոխություններ են գրանցվել, այսպիսով խորհրդի այցի ժամանակ փաստաթուղթն ամբողջովին ճշգրիտ չէր: Խորհուրդը լսեց, որ EKKA-ի հավատարմագրմանը նախապատրաստվելու գործընթացը օգնել է Համալսարանին նույնականացնելԿՈԱՁ-ի մասերը, որոնք պետք է թարմացնել, և որ սրա իրականացման պլաններ կային: Մինչդեռ անձնակազմի՝ ձեռնարկի բարելավման և դրա բովանդակության վերաբերյալ խորհուրդ տալու մեջ ներգրավված անդամները տեղյակ էին ԿՈԱՁ-ի մասին, խորհուրդը չտեսավ կամ էլ չլսեց ոչ մի ապացույց, որ Համալսարանում ձեռնարկի վերաբերյալ շատերն իրազեկ են, ինչպես նաև օգտագործում են:

Փաստաթուղթը ստեղծելու գործընթացը և դրա թարմացման պարտականությունը համապատասխանում են ԿՈԱ-ին: Խորհուրդը տեղեկացավ, որ սա կատարվում է Համալսարանի կոլեգաների հետ խորհրդակցմամբ՝ ներառյալ ուսանողների: ԿՈԱ-ն հայտնեց, որ հանձն է առել կատարել մի քանի հիմնական համեմատական վերլուծություններ երեք այլ համալսարանների հետ՝ և՛ ՀՀ-ում և՛ դրանից դուրս: Խորհուրդը լսեց, որ համեմատական վերլուծության գործընթացի մշակման պլաններ կան, որպեսզի այն ավելի արդյունավետ կերպով տեղեկացնի որակի ենթակառուցվածքին: ԿՈԱՁ-ի զարգացման մեջ Համալսարանի կոլեգաների ներգրավվածությունը ապահովում է համապատասխան հիմք որակի մշակույթի մշակման համար:

ԿՈԱ-ն ԵՀՀ-ում ուսումնասիրությունների մշակման, իրականացման և վերլուծության համար կենտրոնացում է: Անձնակազմի նշանակված անդամ կա, որը պատասխանատու է այս աշխատանքի կատարման համար: Այցելության պահին մի շարք հետազոտություններ և հարցաշարեր են մշակված եղել, ինչպես նաև բաշխված մի շարք շահագրգիռ կողմերին: Խորհուրդը տեսավ փաստաթղթեր՝ բաշխվածներին վերաբերող՝ ներառյալ վերլուծությունը: Մի շարք շահագրգիռ կողմերի հետ քննարկումներից՝ ներառյալ արտաքին շահագրգիռ կողմերը, պարզ էր, որ բաշխումը սահմանափակ և ոչ հստակ էր, ինչպես նաև եկամտի թիվը ցածր էր: Հետազոտությունների վերլուծության հաշվետվություններն որոշակիորեն պարզունակ են, ինչպես նաև հնարավոր չէր, որ խորհուրդը պարզեր, թե ինչպես են սրանք ներգործել ապահովման վրա: Խորհուրդը չտեսավ ոչ մի ապացույց, որ հետադարձ կապ է պահպանվում շահագրգիռ խմբերի հետ, որպեսզի տեղեկացվեն հետազոտության արդյունքների, ինչպես նաև հետազոտության հետ կապված գործողությունների վերաբերյալ: Այլ կերպ ասած, հետադարձ կապի շղթայի փակում չկա: Դեռևս ճանապարհ կա անցնելու, որպեսզի հասնեն այն փուլը, որտեղ հետազոտությունների բաշխումը, վերլուծությունը և հետևելը արդյունավետ են՝ որպես որակի պահպանման և բարելավման գործիք:

ԿՈԱ պարտականությունները ներառում են ծրագրի զարգացման և վերանայման գործընթացը: ԿՈԱՁ-ն մանրամասն նշում է ծրագրի վերանայման գործընթացը: Ինչևիցե, խորհուրդը չտեսավ պաշտոնականացված փաստարկ, թե ինչպես են այս վերանայումները կատարվել և զեկուցվել, ոչ էլ պարզ էր, թե ուսուցման որ ծրագրերն են ենթակա եղել նկարագրված վերանայման գործընթացին: ԵՀՀ պետք է երաշխավորի, որ գործընթացները կիրառվում են, և որ սրանք ամբողջովին փաստաթղթավորվում են, որպեսզի երաշխավորվի, որ *վերանայումները ծառայում են ծրագրի բարելավման նպատակներին: Գործընթացը ներառում է արտաքին* փորձագետների ներգրավում ծրագրի տվյալ ոլորտում: Կան արտաքին փորձագետների ներգրավմանգրավոր չափանիշներ, Ուսանողական Խորհրդի միջոցով դրանց հաստատման գործընթաց, ինչպես նաև փորձագետի

պարտականությունների նշում: Արտաքին փորձագետների ներգրավումը և ընտրության պարզությունը, ինչպես նաև դրանց հաստատումը ընդունված նորմեր են:

ԵՀՀ-ն որդեգրել է պլանավորման, կատարման, ստուգման և անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման սխեմայով հանձնարարությունների կատարումը՝ որպես որակի կառավարման նկատմամբ հաստատության մասշտաբով մոտեցում: ԿՈԱՁ-ն նշում է, որ այս մոտեցումը պետք է որդեգրվի կառուցվածքային միավորների արդյունավետության վերանայման համար: Մինչդեռ մոտեցումը տեղին է, կառուցվածքային միավորները վերանայելու նպատակով այս մոտեցման կիրառման չափը պարզ չէր խորհրդի համար:

Բոլոր մակարդակների անձնակազմերի համար պարզ էր, որ որակը գլխավոր արժեք է և նշանակալից կարևորություն ունի, տեղյակ էին, որ ԵՀՀ-ն պարտավոր է ապահովել բարձր որակի կրթական փորձ: Դասավանդող կազմը և ուսանողները նաև տեղյակ էին, թե ինչպես նաև ներգրավվում որակի մի քանի գործընթացներում: Խորհրդի համար դժվար էր սահմանել որակի սեփականության չափը, որը որ տարբեր խմբեր զգում էին, և պարզ է, որ ավելի շատ պահանջներ պետք է բավարարել՝ Համալսարանում որակին և սեփականության կայուն զգացողությանը նպաստելու համար:

Գովասանք՝

- Որակի ենթակառուցվածքի հետագա զարգացում՝ ներառյալ ԿՈԱ-ի աճը, և որակի դերի հաստատումը յուրաքանչյուր ֆակուլտետում և վարչական միավորում:
- Կրթության Որակի Ապահովման Ձեռնարկի թողարկումը:
- Վերանայման գործընթացում արտաքին փորձագետների ներգրավումը, ուսումնական ծրագրերի հաստատումը, ինչպես նաև նրանց նշանակմանը նպաստող փաստաթղթերը, նրանց դերերի շրջանակը:

Խորհուրդներ՝

- Անհրաժեշտ է, որ ԵՀՀ-ն երաշխավորի, որ ԿՈԱ-ն ղեկավարում է Համալսարանում՝ վերանայելով նպատակներին հասնելուն ուղղված իր կառուցվածքը, արդյունավետությունը և առաջընթացը:
- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ շահագրգիռ խմբերին ուղղված հարցաշարերի բաշխումը և վերլուծությունը կայուն և ճշգրիտ է:
- ԵՀՀ-ն պետք է մշակի գործընթաց՝ հետադարձ կապի շղթան փակելու համար, որպեսզի երաշխավորի, որ շահագրգիռ կողմերը տեղյակ են իրենց հետադարձ կապին ուղղված գործողությունների վերաբերյալ:
- ԵՀՀ-ն պետք է թարմացնի Կրթության Որակի Ապահովման Ձեռնարկը, որպեսզի երաշխավորի, որ այն ճշգրտորեն արտացոլում է կառուցվածքը և գործընթացները, որոնք առկա են Համալսարանում, որպեսզի շահագրգիռ բոլոր կողմերը սրանց մասին պարզ պատկերացում ունենան:

4 Ուսումնական բարոյագիտություն

Ստանդարտ՝

Բարձրագույն ուսումնական հաստատությունը սահմանել է իր սկզբունքները ուսումնական բարոյագիտության համար,ունի այդ սկզբունքներն իր անդամների շրջանում տարածելու համակարգ, ինչպես նաև վարքագծի կանոններ՝ ներառյալ այս սկզբունքներին չհամապատասխանող ցանկացած դեպքի համար ուղեցույցներ: Բարձրագույն ուսումնական հաստատությունն ունի գործող համակարգ, որը զբաղվում է բողոքներով:

Ուղեցույցներ՝

Բուհն արժևորում է իր անդամներին և երաշխավորում, որ իր բոլոր աշխատողներին և ուսանողներին վերաբերվում են՝ ըստ հավասար վերաբերմունքի սկզբունքի:

Բուհի աշխատողները և ուսանողներն առաջնորդվում են ուսումնական բարոյագիտության համաձայնեցված սկզբունքներով բոլոր իրենց գործունեություններում:

Բուհը հարգում է հիմնական արժեքները և հետազոտության քաղաքականությունները:

Բուհն աջակցում է իր ուսանողներին և դասավանդող կազմին հասկանալ և արձագանքել բարոյական հարցերին: Դասավանդող կազմը և ուսանողները չեն հանդուրժում ուսումնական կեղծիքը՝ ներառյալ ստախոսությունը և գրագողությունը, և նրանք անմիջապես կգործեն ցանկացած այսպիսի արարքի կատարման դեպքում:

Բուհի անդամներից բողոքների կառավարումը (ներառյալ խտրականության դեպքերը) թափանցիկ և օբյեկտիվ է կատարվում՝ երաշխավորելով բոլոր կողմերի նկատմամբ արդար վերաբերմունք:

Ցուցիչ՝

- *Ուսումնական կեղծիքի դեպքերի թիվը:*

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում պահանջներին	Ճանաչման արժանի
□	X	□	□

Ապացույց և Վերլուծություն

2019թ-ի հունիսին ԵՀՀ-ի Գիտական Խորհուրդը որդեգրեց <<Էթիկայի Կանոններ>>: Այս կանոնները կիրառվում են ուսումնական և աջակցող կազմի և ուսանողների նկատմամբ: ԵՀՀ-ն դիմեց էթիկայի տիպային նորմերի՝Եվրոպայի Խորհրդի և Եվրամիության կողմից Հայաստանում մշակված փաստաթղթին: Կրթության ոլորտում էթիկայի տասնչորս սկզբունքները, որոնք ձևավորվել են Եվրոպայի Խորհրդի կողմից, մեջբերված են ԵՀՀ փաստաթղթում: Նկարագրված են դասավանդող կազմի, ուսանողների, ինչպես նաև կրթական ոլորտում աջակցող կազմի իրավունքներն ուն պարտականությունները: Ընդհանուր դրույթները ներառում են հայտարարություն, որ ուսումնական կազմը երաշխավորում է համալսարանի մասշտաբով կանոնների իմացություն և այդ կանոնները խախտելու հետևանքներ: Ինչնիցե, կանոնների խախտման հետևանքները ԵՀՀ փաստաթղթում մշակված չեն, պարզապես հայտարարություն կա, որ խախտողները <<ենթարկվում են կարգապահական և վարչական պատասխանատվության՝ ըստ ՀՀ օրենսդրության>>:

Եվրոպայի Խորհուրդը խորհուրդ է տալիս, որ բարոյական կանոններին պետք է ուղեկցեն քաղաքականությունները, ընթացակարգերը և կանոնակարգերը, որոնք անհրաժեշտ են բարոյական կանոնների արդյունավետ կիրառման երաշխավորման համար: Խորհուրդը չկարողացավ գտնել ապացույց, որպեսզի ցույց տա, որ ԵՀՀ-ում համապատասխան քաղաքականություններ և ընթացակարգեր են գործում՝ բարոյական կանոնների կիրառումը երաշխավորելու համար: Խորհուրդը եզրակացրեց, որ տեղեկություն հայտնողներին, հակակոռուպցիային և կաշառակերությանը, ոչ խտրականությանն և հակա-ոտնձգությանն, գրագողությանն ու հետազոտական ամբողջականությանն առնչվող մի շարք կարևոր բարոյական քաղաքականություններ ոչ մշակվել, ոչ էլ կիրառվել են:

[illegible]-ն առեղծեց Էթիկայի Կոմիտե (ԷԿ): Այս կոմիտեի խնդիրներն էին բարոյական կանոնների [illegible] հետևանքը գնահատելը, կանոնների խախտման դեպքերը գնահատելը, ինչպես նաև դրանց լուծման [illegible]ցները:ԷԿ-ն հանդիպում է տվյալ դեպքով, երբ որ բողոք կա, և միայն մեկ դեպքի հետ է գործ ունեցել, որը [illegible]ներառել է դասավանդող կազմի երկու ավագ անդամի: Այս դեպքում ԷԿ-ն խորհուրդ է տվել, իսկ Ռեկտորը [illegible]կատարել է վերջնական որոշումը: Գիտական Խորհուրդը հավանության է արժանացնում ԷԿ-անդամների [illegible]անկը: Խորհուրդը նշեց, որ դեկանները կոմիտեի անդամներ են, չնայած որ սա կարող է խոչնդոտել ԷԿ-ի [illegible]ննարկումներին և որոշում կայացնելու գործընթացին դասավանդող կազմի և ուսանող անդամների [illegible]մբողջական մասնակցությանը: Քանի որ ԷԿ խորհուրդ է տալիս վերադաս ղեկավար կազմին, որ ավելի լավ [illegible]կարելի էր խուսափել շահերի հավանական բախումներից, եթե վերադաս ղեկավար կազմի անդամները ԷԿ-ի [illegible]անդամներ չլինեին: Ներկա պահին բարոյական հարցերին վերաբերող բողոքները պետք է ներկայացվեն Ռեկտորին նախքան ԷԿ-ի կողմից դրա քննարկումը: Սա ոչ անհրաժեշտ պատնեշ է դառնում բողոքներ ներկայացնելիս:

2017թ-ին ԵՀՀ-ի Գիտական Խորհուրդը ընդունեց Ուղանողի Ուղեցույց (A1.17), որը նշում է ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, սակայն անդրադառնում է ոչ Էթիկայի Կանոններին, ոչ էլ Էթիկայի Կոմիտեին, քանի որ ձևավորվել է 2019թ-ին:

ԵՀՀ-ի՝ բողոքների հետ գործ ունենալու մոտեցումն ամբողջովին ոչ պաշտոնական է: Ուսանողի ՈՒղեցույցը բողոքներ ներկայացնելու կամ դրանցով զբաղվելու վերաբերյալ ոչ մի բաժին էլ չի պարունակում: Քննարկումներից պարզ էր, որ ուսանողները հակված են դիմել իրենց դեկանին խնդիրներ հանդիպելիս: Մինչդեռ կա Ուսանողների Պառլամենտ, որին ուսանողները կարող են նույնպես դիմել, ՈՒսանողների Պառլամենտը բողոքներին անդրադառնելու ընթացակարգ չունի: Բողոքներ գրանցելու համար նշված մյուս տարբերակները ներառում էին ԵՀՀ-ի գաղափարներում տուփի մեջ գրություն թողնելը կամ կայքով հատուկ տարբերակով Ռեկտորին հարց ուղղելը: Ռեկտորը ստացված հարցերը և բողոքները բերում է Ռեկտորատի ժողով և քայլերի է դիմում՝ համապատասխան կառուցվածքային միավորների միջոցով հարցերին անդրադառնալու համար:

Ուսումնական կազմի հետ քննարկումներից խորհուրդը տեղեկացավ, որ գրագողությունը Հայաստանի բարձրագույն կրթության մեծ խնդիր է: Խնդրի չափի գիտակցումից բացի՝ ԵՀՀ-ն տեղում համակարգ չունի, այնպիսին, ինչպիսիք է հայտնաբերման ծրագիրը, որը նախատեսված է ուսումնական կեղծարարությունը կամ գրագողությունը հայտնաբերելու համար: Ուսումնական կազմը գիտակցեց, որ գրագողությունը կարող է տեղի ունենալ, սակայն խնդրի հետ գործ ունենալու լուծումներ չկարողացավ առաջարկել: Ուսումնական սխալ վարքին լուծում տալու համակարգի բացակայությունը, ինչպես նաև կազմի՝ խնդրին անդրադառնալու ձևի անտեղյակությունը մասնավորապես զարմանալի է՝ հաշվի առնելով, որ ԵՀՀ-ն ձգտում է *<<գրագողության. . . և ուսումնական կեղծիքի նման այլ դրսևորումների ամբողջական վերացմանը/բացակայությանը>>(ԻՀ 24-րդ էջ):*

Ուսումնական խարդախության դեպքեր գրանցվել են 2016թ-ից: Ըստ ԻՀ (24-րդ էջ)՝ նման տաս դեպք է հայտնաբերվել 2016թ-ից: Համապատասխան ԻՀ հավելվածը (4.5), որն այս դեպքերի մանրամասներ ներառելու համար էր նշված, խորհրդի համար ոչ անգլերենով և ոչ էլ հայերենով հասանելի չէր: Քննարկումների ընթացքում պարզ դարձավ, ուսանողներն ու դասավանդող կազմն անտեղյակ է այս դեպքերի մասին: Խորհուրդը տեղեկացավ, որ ուսումնական խարդախության հարցերին անդրադարձը նախագահերի համար թեմա կլինի և կքննարկվի ֆակուլտետի խորհրդի ժողովներին:

ԵՀՀ-ն մտադրված է բարոյական կանոնների վերաբերյալ իրազեկություն բարձրացնել՝ դրանք կայքում հրապարակելով, դասերի ընթացքում բարոյական նորմերին անդրադառնալով, ինչպես նաև այդ կանոնների խախտումների հարցը ուսումնասիրություններում ներառելով, օրինակ: Այցի ժամանակ այս մտադրություններից մի քանիսը արդեն իրականացվել էին: Խորհրդի կողմից հանդիպած ուսանողները և դասավանդող կազմը իրազեկված էին բարոյական կանոնների վերաբերյալ, սակայն խորհրդի կողմից հանդիպած ուսանողներից ոչ մեկը չէր հանդիպել բարոյական կանոնների որևէ խախտման: Մի քանի ուսանող գիտեր, որ եղել են խնդիրներ, օրինակ՝ միջազգային ուսանողների նկատմամբ խտրականությունը, սակայն մանրամասներից անտեղյակ էին: Ուսանողները ընդգծեցին, որ բարոյական կամ այլ խնդիրներ կարելի է քննարկել իրենց դեկանի կամ դասավանդող կազմի այլ անդամների հետ, և արժևորեցին դասավանդող կազմի

մատչելի և հասանելի լինելու փաստը: Ուսանողները Էթիկայի Կոմիտեի դերի մասին այդքան էլ տեղեկացված չէի, որը կարող է բացատրվել այն փաստով, որ այն միայն վերջերս է ստեղծվել:
Խորհուրդը հետևեց ուսումնական ազնվության/խարդախության/ վերաբերյալ բաց դասի, որը վարում էր Իրավաբանության Ֆակուլտետի մի դասախոս: Բաց դասը մեծամասամբ կենտրոնացված էր գրագողության և ուսանողների վրա, չնայած որ և՛ ուսանողները և՛ դասավանդող կազմը մասնակցում է: Խորհուրդն արժևորեց ուսուցչի և դասարանի միջև քննարկման բաց միջավայրը: Խորհուրդն առաջարկեց, որ օգտակար կլիներ ԵՀՀ-ի համար, եթե այսպիսի դասերի թեման այնպես ընդլայնեին, որ դրանք անդրադառնային Էթիկայի Կանոնների բոլոր ասպեկտներին: Դեռ ավելին, քննարկման խորությունը կմեծանար, եթե կոնկրետ, գործնական դեպքեր օգտագործվեին, և եթե ուսանողներն ու ուսուցիչները մասնակցեին առանձին դասերին:

Խորհուրդներ՝

- ԵՀՀ-ն պետք է մշակի համապատասխան և տեղին քաղաքականություններ՝ տեղեկություն հայտնողներին, հակակոռուպցիային և կաշառակերությանը, ոչ խտրականությանն և հակա-ոտնձգությանն, գրագողությանն ու հետազոտական ամբողջականությանն առնչվող բարոյական կանոնների կիրառումը երաշխավորելու համար:
- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն վերստին քննարկի Էթիկայի Կոմիտեի անդամակցությունը, որպեսզի երաշխավորի որ այն ունի ներկայացչություն դասավանդող կազմից և ուսանողներից:
- ԵՀՀ-ն պետք է որդեգրի շահերի բախման ընթացակարգ Էթիկայի Կոմիտեի համար, որպեսզի երաշխավորի բարձրացված հիմնահարցերի արդար լուծումը:
- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն վերանայի Էթիկայի Կոմիտեի գործունեությունն այնպես, որ այն ավելի կանոնավոր հանդիպումներ ունենա, ժողովների արդյունքները թափանցիկ լինեն, հնարավոր լինի բողոքներն անմիջապես Կոմիտեին ուղղել:
- ԵՀՀ-ն պետք է մշակի տեղեկություն հայտնողներին պաշտպանող ընթացակարգ:
- Խրախուսվում է, որ ԵՀՀ-ն դասեր անցկացնի ուսումնական ազնվության/խարդախության վերաբերյալ Համալսարանի բոլոր ֆակուլտետների համար, ընդլայնի դասարանի՝ Էթիկայի Կանոնների բոլոր ասպեկտները ներառող հեռանկարը:
- Խրախուսվում է, որ ԵՀՀ-ն քննարկի, արդյոք էթիկայի վերաբերյալ դասընթացը կարող է դառնալ ուսանողների դասացուցակի պարտադիր մասը, բարոյական հարցերը քննարկելու համար դասավանդող կազմին դաս ներկայացնի, ուսումնական գրագողության չափերի նվազեցման ուղղությամբ աշխատի:

1.5 Միջազգայնացում

Ստանդարտ՝

Բարձրագույն ուսումնական հաստատությունը միջազգայանցման համար դրել է նպատակներ և կանոնավոր կերպով հասնում է այս նպատակներին: Բարձրագույն ուսումնական հաստատությունը ստեղծել է մի միջավայր, որը խրախուսում է ուսանողների և դասավանդող կազմի միջազգային շարժը՝ աջակցելով ուսանելու, դասավանդելու և ՀՁԿ գործունեությունների զարգացմանը, ինչպես նաև իր անդամների և հայ հասարակության՝ մշակութայինառումով ընդհանրապես բաց լինելուն:

Ուղեցույցներ՝

Բուհը ստեղծում է հնարավորություններ միջազգային ուսանողության փոխանակման համար՝ առաջարկելով անգլերենով դասավանդվող ուսումնական ծրագրերը և/կամ մոդուլները: Բուհում ուսումնական միջավայրն աջակցում է միջազգայնացմանը և մշակութային առումով բաց լինելուն:

Որակավորումների ճանաչումը, նախնական ուսուցման ճանաչումը և աշխատանքային փորձը՝ ուսանողների ընդունելության և ծրագրի ավարտի համար, բուհի կողմից դրված որակի պահանջներին համաձայն են, համակարգային և կայուն են՝ ուսուցման ակնկալվող արդյունքներով, և աջակցում են միջազգային ուսանողության շարժին:

[illegible] կազմակերպումը հեշտացնում է ուսանողության մասնակցությունը միջազգային շարժին: [illegible] համաձայնագրեր արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և [illegible] միջոցով իր ուսանողներին ուղարկում է արտասահման՝ ուսանելու և պրակտիկ [illegible] ծավալելու համար՝ սրա համար համապարփակ աջակցություն ապահովելով:Դասավանդող [illegible]ները խրախուսում են ուսանողներին մասնակցել միջազգային շարժին:

Միջազգային դասախոսները մասնակցում են դասավանդման գործընթացին՝ ներառյալ դոկտորական թեզերի [illegible]ությունը:

Բուհն աջակցում և ճանաչում է իր դասավանդող կազմի մասնակցությունը միջազգային ուսուցման մեջ, հետազոտական կամ ստեղծարար նախագծերում, ինչպես նաև նրանց դասավանդումը, հետազոտական կամ ստեղծարար աշխատանքը, անձի զարգացումը, որոնք կատարվում են արտասահմանյան բուհերում:

Ցուցիչներ՝

- *Դասավանդող կազմի շարժ (ներսում-դրսում)*
- *Ուսանողության շարժ (ներսում-դրսում)*
- *Անգլերենով ուսուցանվող ծրագրերի թիվը՝ հիմնական միավորներով և ուսման մակարդակներով*

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում պահանջներին	Ճանաչման արժանի
□	X	□	□

Ապացույց և Վերլուծություն

ԵՀՀ-ն որդեգրեց <<Միջազգայնացման Քաղաքականություն և Ռազմավարություն>> 2016-2020թթ. համար: Քաղաքականությունը և Ռազմավարությունը վերանայվել են 2019թ-ի հունիսին: Խորհուրդը տեղեկացավ, որ միջազգային ռազմավարության նոր փաստաթուղթ կպատրաստվի 2020թ-ից: Ռազմավարության փաստաթուղթը ներառում է տեսլականը, սկզբունքները, նպատակները և այդ նպատակներին հասնելու ճանապարհները: Ինչևիցե, բոլոր այս տարրերը ձևավորվում են ընդհանուր ձևով: Օրինակ, առաջին նպատակը *<<միջազգային մակարդակում ուսումնական ծրագրերի ապահովումն է>>*, նպատակին հասնելու առաջին ձևը նշված է այսպես՝ *<<երաշխավորել ԵՀՀ-ի ուսումնական ծրագրերի համապատասխանությունը եվրոպական կրթական ստանդարտներին՝ համեմատական վերլուծության միջոցներով>>:* Այս ընդհանուր ձևակերպումները հնարավոր չեն դարձնում չափել նպատակներին հասնելը: Նպատակների և դրանց հասնելու ճանապարհների միջև հարաբերությունը չի բացատրվում, և նպատակներին հասնելու ճանապարհները հաճախ ձևակերպվում են որպես հավելյալ նպատակներ, ինչպես որ վերևում մեջբերված օրինակում է լուսաբանված: Պարզ չէ, թե ինչպես են նպատակներն առնչվում, օրինակ, միջազգային ուսանողության խմբի ցանկալի թվին և կազմին:

ԵՀՀ-ի ֆինանսական կանխատեսումները ցույց են տալիս ուսման վճարներից ստացվող եկամտի եռակի աճ, և Համալսարանը հույս ունի հետագայում մեծացնել միջազգային ուսանողության թիվը՝ այս կանխատեսումը իրականությանը համապատասխանեցնելու համար: Ինչևիցե, այս ձգտմանը հասնելու գործողության պլան չկա: Կա *ԵՀՀ-ի Միջազգայնացման Քաղաքականության Գործողության Պլան 2016-2020-ը,* որն ընդունվել է 2015թ-ին: Գործողության պլանը նշում է պատասխանատու միավորին յուրաքանչյուր գործողության համար, վերջնաժամկետները, որոնք հիմնականում 2016-2020-ն են, ինչպես նաև ակնկալիքները: Գործողության այս պլանը միավորում է 39 գործողություն, սակայն միջազգային քաղաքականությունում գործողությունների և նպատակների միջև կապ չկա: Դեռ ավելին, պլանավորված գործողությունները չեն գնահատվում, և միջազգայնացմանը վերաբերող նպատակներին հասնելուգործողությունները չեն հաշվվում:

ԵՀՀ ընդունված ուսանողների ընդհանուր թվի մոտ 1000-ը միջազգային ուսանողներն են՝ 2018-2019թթ-ին ներկայացնելով քսան տարբեր երկրներ: 2015-2016թթ-ին այս թիվը նշանակալից կերպով աճել է 400-ից պակաս թիվ կազմող ուսանողներից: Բոլոր միջազգային ուսանողներն ընդգրկված են Բժշկության Ֆակուլտետում: Նրանց մեծամասնությունը Հնդկաստանից, Իրաքից, Իրանից, Իսրայելից և Եգիպտոսից է: ԵՀՀ-ն արտոնագրված հաստատություն է Հայաստանում, որն աջակցում է այս երկրներում իր դիպլոմների ընդունելի լինելուն: Որոշ

դեպքերում ԵՀՀ-ի դիպլոմը բացահայտ ճանաչվում է, օրինակ, Հնդկաստանում, որտեղ ԵՀՀ-ն ավելացվել է Հնդկաստանի Բժշկական Խորհրդի (ՀԲԽ) պաշտոնական կայքում:

Մի շարք միջազգային ուսանողներ մեկ այլ հաստատությունից են փոխադրվել Հայաստան, որտեղ այդ հաստատություն ընդունվելը ընդունելության համապատասխան պահանջների բավարարման ապացույց է հանդիսացել: Մյուս դեպքերում ծագման երկրների հետ համաձայնագրերը հեշտացրել են ուսանողների ընդունելությունը:

Խորհուրդը լսեց միջազգային ուսանողներից, որ Հայաստանում գտնվող այլ մասնավոր բժշկական դպրոցների հետ համեմատած ԵՀՀ-ի հարաբերականորեն ցածրուսանողական վճարները, հեղինակությունը, և խելամտորեն արդար գին-որակ հարաբերակցությունը ԵՀՀ-ն ընտրելիս կարևոր գործոններ են հանդիսանում: Մի քանի ուսանող նշեց փոքր մասշտաբը, ոչ պաշտոնական միջավայրը, ինչպես նաև ուշադիր դասախոսական կազմը, որն առաջարկում է աջակցություն ուսանողներին, որոնք ունեն ԵՀՀ-ի համար կարևոր շահ հանդիսացող իրենց ուսման վրա բացասաբար ներգործող խնդիրներ: Ընդհանուր առմամբ միջազգային ուսանողները բավարարված էին ԵՀՀ-ի կողմից մատուցվող կրթությամբ և աջակցությամբ: Երբ ուսանողներն ունենում են խնդիրներ, նրանց դիմում են դասավանդող կազմին կամ դեկանին: Ուսանողների կողմից նշված խնդիրները ներառում էին ուսանողների ապրելու հարմարությունների հետ կապված մարտահրավերները, որոնք չեն ապահովվում ԵՀՀ-ի կողմից: Ինչևիցե, ակնկալվում է, որ նորակառույց ուսանողական հանրակացարանները որոշ չափով այս խնդրին կանդրադառնան: Ուսանողները նաև առաջարկել են, որ խտրականության մի քանի դեպք է գրանցվել, սակայն ապացուցելու ոչ մի օրինակ չի բերվել: ԵՀՀ-ն չի ապահովում մթերքով, որը պետք է բավարարի տարբեր մշակութային և կրոնական պատկանելիություն ունեցող ուսանողների սննդակարգային պահանջները: Ինչևիցե, ԵՀՀ-ն թույլ է տալիս, որ ուսանողներն իրենց ուտելիքը բերեն ուսանողական տարածք: Կրոնական աղոթքների համար նախատեսված առանձին սենյակ չկա:

Մի քանի նախաձեռնություններ են եղել, որոնք ուղղված էին միջազգային և հայ ուսանողությանը միավորելուն, օրինակ՝ տարբեր կրոնական տոնակատարություններին մասնակցության խրախուսումը: Ընդհանուր առմամբ ԵՀՀ-ի բժշկական ֆակուլտետի միջազգային ուսանողների և մյուս ֆակուլտետներում ներգրավված հայ ուսանողության միջև կապը քիչ է: Խորհուրդը ԵՀՀ-ում ուսանողների և դասավանդող կազմի միջմշակության իրազեկության բարձրացմանն ուղղված քաղաքականությունների կամ էլ ռազմավարությունների, ինչպես նաև ուսանողների և դասավանդող կազմի համար միջմշակութային իրազեկության բարձրացմանը և կարողությունների ընդլայնմանն ուղղված դասընթացների ոչ մի ապացույց չտեսավ: ԵՀՀ-ում միջազգային ուսանողության բարձր համամասնությունը միջազգային դասերի համար պոտենցիալ է ապահովում: Ինչևիցե, խորհուրդը չտեսավ միջազգային դասավանդման և ուսուցման ըմբռնման, ինչպես նաև կրթական փորձի բարելավման ոչ մի ապացույց:

Կա տասնչորս միջազգային դասավանդող կազմ, որոնք բոլորն էլ հիմնված են Բժշկության Ֆակուլտետում, որոնց կեսը Հնդկաստանից է, երեքը՝ Իրանից, մյուսները՝ Իրաքից, Լիբանանից, ԱՄՆ-ից և Ավստրալիայից: Բժշկական ֆակուլտետի ուսանողության համար հայրենի երկրում միջազգային ամառային դպրոցներում և բժշկական պրակտիկաներին մասնակցության հնարավորություններ կան: Խորհուրդը նաև լսեց մի քանի այլ ֆակուլտետներում նման հնարավորությունների մասին, սակայն ֆինանսավորման պակասը հանգեցնում է շատ ցածր թվի: Բժշկական Ֆակուլտետից բացի դասավանդող կազմի և ուսանողության միջազգային շարժը սահմանափակ է կամ էլ գոյություն չունի:

ԵՀՀ-ի հաշվարկով դասավանդող կազմի մեկ երրորդը գիտի օտար լեզու: Անվճար դասընթացներ են կազմակերպվել, որպեսզի բարելավվի ուսուցիչների՝ օտար լեզվի իմացությունը: Խորհուրդը լսեց ընդամենը մեկ ֆակուլտետի մասին, որի ուսուցիչների զգալի մասը հաճախում է այս դասընթացներին: Ինչևիցե, նաև պարզ էր, որ չնայած դասընթացների առկայությանը դժվար թե որևէ կազմ անգլերենով դասավանդելու իրենց կարողության վրա վստահ լինի: Սա նշանակալից կերպով սահմանափակում է կազմի՝ միջազգային շարժի իրականացմանը կարողությունը:

ԵՀՀ-ն նշում է, որ *<<ամենամյա միջին հաշվարկով մոտ երեք դյուժին ուսուցիչ է մասնակցում բազմազան կոնֆերանսների, իրականացնում հետազոտական և ստեղծարար գործունեություններ տարբեր արտասահմանյան համալսարաններում և գիտական կենտրոնում>>:* Միջազգային հետազոտական

ախագծերին մասնակցությունը շատ սահմանափակ է: Խորհուրդը դասավանդող կազմից և ուսանողներից տեղեկացավ, որ միջազգային շարժի ավելի շատ հնարավորությունները մեծապես կգնահատվեին: ԵՀՀ-ն ունի Միջազգային Հարաբերությունների փոքր բաժին(ՄՀԲ), որը նախ և առաջ կենտրոնացված է միջազգային գործընկերությունների և քաղաքականության, քան թե միջազգային ուսանողներին աջակցություն ցուցաբերելու վրա: ԵՀՀ-ն շահեց դրամաշնորհ (2015թ.) Տալլինի Առողջապահության Քոլեջի հետ Էրազմուս+ ծրագրով: Համալսարանը նաև ստորագրեց հուշագիր (2017թ.)International Business School Americas –ի հետ: Մյուս հաստատությունների հետ միջազգային համագործակցությունները շատ սահմանափակ են, իսկ որոշ ֆակուլտետներում գոյություն չունեն: Միջազգային համեմատական վերլուծություն գրեթե չի կատարվում, իսկ կատարման դեպքում համեմատական վերլուծված հաստատությունը հակված է պատեհապաշտորեն ընտրվելու՝ օրինակ, այնտեղ աշխատող շրջանավարտի հետ կապերի միջոցով, քան թե նմանությամբ կամ էլ համեմատական վերլուծության համապատասխանությամբ:

Գովասանք՝

- Միջազգային ուսանողության թվաքանակի աճի հարցում հաջողությունը:
- Պրոակտիվ ձևը, որով դասավանդող կազմը բավարարում է միջազգային ուսանողների պահանջները:

Խորհուրդները՝

- ԵՀՀ-ն պետք է մշակի համահունչ միջազգայնացման քաղաքականություն՝ պարզ և չափելի նպատակներով, և կապակցված ու իրատեսական գործողության պլան:
- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ քաղաքականությունը ներառում է ուսանողների և դասավանդող կազմի միջազգային շարժը և կրթության որակի վրա սրանց ներգործությունը: Քաղաքականությունը պետք է նաև ներառի նպատակներ՝ միջազգային գործընկերությունների, լեզվի տիրապետության, միջազգային իրազեկության և կարողության հետ կապված:
- Քաղաքականության նպատակները և առչվող նպատակները պետք է հսկվեն և գնահատվեն, իսկ դրանից բխող բարելավումները պետք է պաշտոնական կերպով գրառվեն:
- Խորհուրդը խորհուրդ է տալիս ԵՀՀ-ին քննարկել լեզվի դասընթացները պարտադիր դարձնելու հարցը, որպեսզի բոլորը, որոնք դասավանդում կամ ոգեշնչում են դասավանդել անգլերենով, անգլերենի կոմպիտենտության համապատասխան մակարդակ ունենան:
- ԵՀՀ-ն պետք է նաև քննարկի այս դասավանդող կազմի միջմշակութային իրազեկության վերաբերյալ դասընթացի մշակումը, որպեսզի նպաստի միջազգային, միջմշակութային միջավայրում արդյունավետ դասավանդմանը:
- Խորհուրդը խորհուրդ է տալիս, որ ԵՀՀ-ն քայլեր անի, որպեսզի հեշտացնի բժշկական ոլորտի միջազգային ուսանողների ներգրավումն ավելի լայն ԵՀՀ համայնք: ԵՀՀ- կարող էր նաև ցանկություն հայտնել և քննարկել միջազգային դասասենյակի հնարավորությունները, որտեղ հայ և միջազգային ուսանողները նստում են միասին և սովորում մեկը մյուսից:
- Խորհուրդը խորհուրդ է տալիս, որ ԵՀՀ-ն ընդլայնի Միջազգային Հարաբերությունների Բաժնի գործառույթները միջազգային գրասենյակ, որը շարունակ աջակցում է միջազգային ուսանողներին և դասավանդող կազմին, ինչպես նաև միջազգային շարժին մասնակցող (կամ մասնակցել ցանկացող) ցանկացած անձի:

1.6 Դասավանդող կազմ

<u>Ստանդարտ՝</u>

Դասավանդումն իրականացվում է դասավանդող կազմի մասնագիտական առումով իրավասու անդամների բավարար թվով, որոնք աջակցում են սովորողների զարգացմանը և արժևորում են իրենց շարունակական ինքնազարգացումը:

Ուղեցույցներ՝

Դասավանդող կազմի անդամները համակարգված ներգրավվում են իրենց մասնագիտական և դասավանդող հմտությունների զարգացման գործում, բարելավում են վերահսկողության կարողությունը և մեկը մյուսին հետ լավագույն փորձերն են կիսում:

Հետազոտական, զարգացման և/կամ ստեղծարար գործունեություններում դասավանդող կազմի մասնակցությունը նպաստում է դասավանդման գործընթացին և երաշխավորում է ուսանողների թեզերի (ներառյալ դոկտորական թեզերի) հսկողության կարողությունը:

Դասավանդող կազմի անդամները համագործակցում են ուսուցման, հետազոտական և/կամ ստեղծարար աշխատանքում բուհում, ինչպես նաև գործընկերների հետ բուհից դուրս, օրինակ՝ պրակտիկա անցնող բժիշկների, հանրային ոլորտի կազմակերպությունների, ընկերությունների, այլ հետազոտական և զարգացման հաստատությունների, ինչպես նաև այլ հայկական կամ արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսներով: Որակավորված այցելող դասախոսները և պրակտիկա անցնող բժիշկները մասնակցում են դասավանդման գործընթացին:

Դասավանդող կազմի աշխատանքը գնահատելիս (ներառյալ իրենց պարբերական գնահատումները) նրանց դասավանդման, ինչպես նաև հետազոտական, զարգացման և ստեղծարար աշխատանքի արդյունավետությունն է հաշվի առնվում՝ ներառյալ ուսանողի հետադարձ կապը, իրենց ուսանողների հսկողության արդյունավետությունը, իրենց դասավանդման և հսկողության հմտությունների զարգացումը, միջազգային շարժը, ինչպես նաև բուհից դուրս նրանց մասնագիտության ոլորտներում ձեռնարկատիրական և աշխատանքային փորձը:

Ցուցիչներ՝

- Ընտրված ուսումնական պաշտոնների համար մրցակցություն
- Դասավանդող կազմի վերաբերյալ ուսանողների հետադարձ կապի արդյունքները
- Դասավանդող կազմի մասնակցությունը շարունակական վերապատրաստման գործում կամ էլ դասավանդման հմտությունների զարգացման այլ ձևերում

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում պահանջներին	Ճանաչման արժանի
□	X	□	□

Ապացույց և Վերլուծություն

Ընդհանուր առմամբ ԵՀՀ-ում դասավանդող կազմի՝ մասնագիտական առումով իրավասու անդամների բավարար թիվ կա: Խորհրդի հետ դիտարկումներից և քննարկումներից պարզ է, որ դասավանդող կազմը շահագրգռված է, ֆակուլտետում ոչ պաշտոնապես կիսվում է արդյունավետ դասավանդող փորձով,հետազոտական գործունեություններով և ստացված արդյունքներով: ԵՀՀ-ն ձգտում է հասնել տեսական և գործնական հմտություններով ուսուցիչների համապատասխան հավասարակշռության: Դասախոսական կազմի մեծ մասը կամ ներգրավված է կամ էլ ունի նշանակալից փորձմասնագիտության իրենց ոլորտում:Պրակտիկայով զբաղվող նշանակալից թվով բժիշկներ են անմիջապես ներգրավված դասավանդման մեջ, որը բարելավում է ուսումնական պլանի մատուցումը, ինչպես նաև ուսանողներիսովորելու փորձը:

Նոր դասավանդող կազմի հավաքագրման գործընթացընշված էր խորհրդի համար և ներառված է *Դասավանդող Կազմի Մրցակցային Ընտրության և Պաշտոնի Նշանակման վերաբերյալ Կանոնակարգի մեջ:* Նոր կազմի պահանջը նշվում է դեկանների կողմից, ուսումնական պլանում նոր ոլորտները կարող են հանգեցնել սրան, որոնցում չկա ներկայիս փորձը՝ ուսանողական մարմնի չափով կամորոշ դեպքերում որովհետև կազմի ամենից համապատասխան անդամը բացակայում է:Մինչդեռ այս մոտեցումն երաշխավորեց, որ դասավանդման

անմիջական պահանջները բավարարելու համապատասխան մասնագիտությամբ և փորձովանձնակազմի բավարար թիվ կա, խորհուրդը գտավ ուսումնական առաջնորդության դերերի հաջորդական պլանավորման ավելի ռազմավարական մոտեցման քիչ ապացույցը: Սրանից շեղում էր ԵՀՀ-ում դոկտորանտուրայի համար չորս ուսանողների ընդունման ռազմավարական որոշումը, որն ուներ այն մտադրությունը, որ համապատասխան ժամանակահատվածում նրանք դառնում են դասավանդող կազմի լիիրավ անդամ և աջակցում են ԵՀՀ-ի ուսուցման և հետազոտական աշխատանքի օրակարգին:

Զբաղեցվող պաշտոնի համար պահանջների կամ մանրամասնությունների ցանկ կա, իսկ պահանջները ներառում են առնվազն մագիստրոսի աստիճանի ակնկալիք: Այս ակնկալիքը միշտ չի կիրառում, համապատասխանությունը կարող է նաև ցուցադրվել՝ *<<մասնագիտական առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձով>>:* Խորհուրդի կարծիքով պահանջների նկատմամբ մոտեցումը անկայուն է: Դիմումների և ընտրության փուլը կատարվում է Մրցակցությունների Կոմիտեի կողմից, որը ներառում է բաժնի և ֆակուլտետի ղեկավարներին: Խորհուրդը չտեսավ միջազգային կամ այցելող դասավանդող կազմի համար ակնկալվող որակավորումները կամ չափանիշները մատնանշող որևէ ապացույց:
Խորհուրդը ուսումնասիրեց դասավանդող կազմի գնահատումը և զարգացումը: Վարկանիշային համակարգ կա, որը մշակված է *ԵՀՀ Դասավանդող Կազմի Մասնագիտական Գործունեությունների Վարկանիշային Գնահատման վերաբերյալ Կանոնակարգի մեջ* (2018թ-ի դեկտեմբեր): Այս կանոնակարգն ընդգրկում է դասավանդող կազմի ուսուցման և հետազոտական գործունեությունները, ինչպես նաև *<<ներքին և հանրային ծառայությունները>>:* Կանոնակարգը նաև նշում է, թե որտեղ է կարելի է գտնել դասակարգման ապացույցը: Սա ներառում ուսանողների բավարարվածություն ուսումնասիրությունները, ամբիոնների և ԿՈԱ-ի դասարանի դիտարկման արդյունքները, ինչպես նաև հետազոտական/ստեղծարար գործունեության արդյունավետությունը: Գործընթացի արդյունքները կարելի է օգտագործել առաջընթացի և վարձատրության նպատակներով, ինչպես նաև ուսուցման և հետազոտական աշխատանքների զարգացման պահանջների նշման համար: Դասավանդման կազմի հետ քննարկման ժամանակ կոմիտեն գտավ վարկանիշային կարգավորման կիրառման վերաբերյալ անկայուն հայացքներ: Կազմի մի մասը զեկուցեց, որ հասկանում է, որ համակարգ է մշակվում, սակայն չի մասնակցել գործընթացին, մյուսները նշեցին, որ գործընթացն անկայուն կերպով գործադրվել է: ԵՀՀ-ն պետք է գործադրի համակարգը և վերանայի դրա արդյունավետությունը, որպեսզի երաշխավորի, որ այն աջակցում է դասավանդող կազմի զարգացմանը թափանցիկ և հետևողական ձևով: Այն նաև պետք է անդրադառնա դասավանդող կազմի որոշ անդամներից լսած տեսակետներին, որ պարզության և հետևողականության բաց կա՝ դասավանդող կազմի հետազոտական աշխատանք կատարելու ակնկալիքի, մանկավարժական հմտությունների զարգացման պահանջների, ինչպես նաև Համալսարանից իրենց ակնկալած աջակցության հետ կապված:
ԵՀՀ-ն ապահովում է վերապատրաստման և զարգացման հնարավորություններ դասավանդող կազմի համար, և խորհուրդին տրամադրվել է առաջարկվածների գրառումը: Դասավանդող կազմը հայտնեց, որ մասնակցել է վերապատրաստման միջոցառումների, և նշեց վերապատրաստման օրերը, արդյունքները, ուսանողակենտրոն մոտեցումը, ինչպես նաև լեզվի դասերը: Դասավանդող կազմը հայտնեց, որ ձգտում է զարգացնել հմտությունները՝ թե՛ մանկավարժական և թե՛ կոնկրետ առարկայի հետ կապված, և ցույց տվեց ուսուցման և ուսանելու նկատմամբ ուսանողակենտրոն մոտեցման՝ ԵՀՀ-ի ձգտման իր իրազեկությունը: Ինչևիցե, նրանց ըմբռնումը տարբերական էր, և դասավանդող կազմին մինչև հիմա տրամադրվող վերապատրաստման և զարգացման հնարավորությունները բավարար չեն, որպեսզի դառնան գլխավոր փոփոխությունը, որը պահանջվում է՝ դասավանդման ավանդական մոտեցումից ուսանողակենտրոնին անցնելու համար:
Խորհուրդը վերանայեց դասավանդող կազմի կողմից օգտագործող ժամանակակից ՏՀՏ տեխնոլոգիաներին: Համապատասխան և տեղին սարքերի և ծրագրերի առկայությունը շատ սահմանափակ է: Պարզ էր, որ անհրաժեշտ ՏՀՏ ռեսուրսներում ներդրումներ կատարելուն գումարած՝ դասավանդող կազմի նշանակալից զարգացման անհրաժեշտություն կլիներ, որպեսզի հնարավոր լիներ, որ դասավանդող կազմը կիրառի այս տեխնոլոգիաները ուսանողների ուսուցման շահի համար:
Խորհուրդը նշեց ԵՀՀ-ում ֆակուլտետների ցանկը և նշեց միջառարկայական և միջմշակութային համագործակցության զարգացման պոտենցիալը: Իրական միջառարկայական աշխատանքի կամ

միջմշակութային համագործակցության քիչ ապացույց կա, որը որպես միջազգային բարձրագույն կրթության մեջ աճող միտում ԵՀՀ-ն պետք է զարգացնի, որպեսզի գլոբալ փուլում հասնի իր ձգտումներին:

Գովասանք՝

- Դասավանդող կազմի հմտություններով և փորձով ուսանողի բավարարվածության բարձր մակարդակ:
- Համալսարանի հետազոտական հենքի մշակման համար դոկտորանտուրայի ուսանողներին հավաքագրող և աջակցող ռազմավարական քայլը:
- Դասավանդող կազմի պարտավորությունը և խանդավառությունը:

Խորհուրդներ՝

- Խրախուսվում է, որ ԵՀՀ-ն շարունակի դոկտորանտուրայի ուսանողների հավաքագրման գործընթացը, որը ծառայում է Համալսարանի երկարաժամկետ դասավանդմանը և հետազոտական նպատակներին:
- ԵՀՀ-ն պետք է գործադրի վարկանիշային համակարգը և վերանայի դրա արդյունավետությունը, որպեսզի երաշխավորի, որ այն աջակցում է դասավանդող կազմի զարգացմանը թափանցիկ և հետևողական ձևով:
- Խրախուսվում է, որ ԵՀՀ-ն միջազգային և այցելող կազմի նշանակման համար բացահայտ և կայուն չափանիշեր սահմանի՝ դասավանդող կազմի նշանակման վերաբերյալ համապատասխան կանոնակարգով:
- ԵՀՀ-ն պետք է ներդրումներ կատարի դասավանդող կազմի զարգացման գործում՝ կապված, մասնավորապես, ըմբռնման բարելավմանը և ուսանողակենտրոն ուսուցման կիրառմանը, թվային տեխնոլոգիաների կիրառմանը, ինչպես նաև միջառարկայական և միջմշակութային համագործակցության զարգացմանը:

1.7 Ուսումնական ծրագիր

Ստանդարտ՝

Ուսումնական ծրագրերը նախագծվում և մշակվում են՝ հաշվի առնելով շահագրգիռ կողմերի ակնկալիքները, բարձրագույն կրթության և մասնագիտական ստանդարտները, ինչպես նաև համապատասխան ոլորտներում միտումները: Ուսումնական ծրագրերի, մոդուլների և դասընթացների նպատակները և նրանց պլանավորված ուսուցման արդյունքները կոնկրետ և համահունչ են: Ուսումնական ծրագրերը նպաստում են ստեղծարարությանը, ձեռներեցությանը նմյուս ընդհանուր կարողությունների զարգացմանը:

Ուղեցույցներ՝

Ուսումնական ծրագրեր և ուսանողների տեղերի թիվ պլանավորելիս բուհը հետամուտ է լինում իր նպատակներին և աշխատանքային շուկայի պահանջներին, ինչպես նաև հաշվի է առնում ազգային ռազմավարությունները և հասարակության ակնկալիքները:

Ուսումնական ծրագրերում սահմանված ուսանողի ակնկալվող աշխատանքային ծանրաբեռնվածություններն իրատեսական և կայուն են՝ հաշվարկով, որ 1ԵԿՓՀ կրեդիտը հավասար է ուսանողի 25-30 ուսումնական ժամի:

Տեսական և գործնական ուսուցումը փոխկապակցված է: Գործնական վերապատրաստումների բովանդակությունը և կազմակերպումը նպաստում են ուսումնական ծրագրի ուսումնական արդյունքների ձեռքբերմանը և բավարարում է բոլոր կողմերի պահանջները:

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում պահանջներին	Ճանաչման արժանի
□	X	□	□

Ապացույց և Վերլուծություն

Ուսումնական ծրագրերի զարգացման ԵՀՀ-ի գործընթացները մանրամասն նկարագրված են ԿՈԱՁ-ում: Սա ներառում է սկզբունքների և պահանջների կազմ, որոնց պետք է հետևել՝ նոր ծրագրի ուսումնասիրման ոլորտ մշակելիս: Մի քանի տերմինաբանական շփոթմունքներիբացառությամբ՝ մասնավորապես *դասընթացների և մոդուլների* օգտագործումը, մանրամասնությունը պարզ և էական է:
Ուսումնական ծրագրերի առաջին պահանջն այն է, որ պետք է անդրադարձնեն ԵՀՀ-ի առաքելությունը և պետք է Հայաստանի Հանրապետության Որակավորումների Ազգային Շրջանակի (ՈԱՇ) համապատասխան մակարդակներին հավասարվեն:
Կոմիտեի ժողովի արձանագրությունից՝ ներառյալ Գիտական Խորհրդի արձանագրությունը, ինչպես նաև դասավանդող կազմի հետ քննարկումներից հանգած տեսակետը հաստատեց, որ այս երկու պահանջների բավարարման ընդհանուր հասկացողություն, ինչպես նաև դասավանդող կազմի տարբեր խմբերի կողմից այս պահանջների քննարկում և անդրադարձ կա:
ԵՀՀ-ն ցույց է տալիս ուսումնական ծրագրերի համեմատական վերլուծության անհրաժեշտության վերաբերյալ իրազեկություն՝ թե՛ ներքին կարգով Հայաստանում և թե՛ միջազգային մակարդակով՝ նպաստելու իր բարձրագույն կրթության գլոբալ մասշտաբով ճանաչման նպատակին: ԿՈԱՁ-ը ներառում է մեծ բաժին, որը նվիրված է համեմատական վերլուծության սահմանմանը և ԵՀՀ-ի կողմից այն կիրառելու անհրաժեշտությանը: Համալսարանն այս ոլորտում առաջընթաց է գրանցել, և խորհուրդը դասավանդող կազմից որոշակի ապացույց լսեց՝ թե՛ ազգային և թե՛ միջազգային մակարդակով համեմատական վերլուծության ուսումնական տարբեր ոլորտների հետ կապված: Խորհուրդը նաև լսեց համեմատական վերլուծության համապատասխան հաստատությունների նշմանը նվիրված մինչև հիմա ԵՀՀ-ի կատարած ուսումնասիրության աշխատանքի վերաբերյալ ապացույց:

ԵՀՀ ուղեցույցը նշում է ուսումնական ծրագրեր մշակելիս շահագրգիռ կողմերի տեսակետները հաշվի առնելու պահանջը՝ ներառյալ արտաքին շահագրգիռ կողմերինը: Խորհուրդը գտավ ապացույց, որ շահագրգիռ կողմի պահանջների մասին հարցնում են, և դրանք օգտագործվում են զարգացման գործընթացում: Ինչևիցե, միշտ չէ, որ պարզ էր, թե ինչպես է շահագրգիռ կողմերից հետադարձ կապը դուրս եկել, և թե որքան համակարգային էր գործընթացը եղել: Խորհրդի կողմից հանդիպած արտաքին շահագրգիռ կողմերը կարող էին տրամադրել տրված հետադարձ կապի օրինակներ, օրինակ, ուսանողների SS հմտությունների զարգացման անհրաժեշտությունը, այսպիսով ավարտելիս նրանք ավելի պատրաստ կլինեին աշխատանքի համար: Պարզ չէր, թե ինչպես և արդյոք այս հետադարձ կապին պատասխանել էին: Խորհրդի կողմից հանդիպած շահագրգիռ կողմերից ոչ մեկը չէր ստացել ուսումնասիրություն, որտեղ ուսումնական ծրագրերի բովանդակության վերաբերյալ հետադարձ կապ պահանջված լիներ:
Նոր ուսումնական ծրագրերը անցնում են քննարկման և բաժնից Գիտական Խորհուրդ, այնուհետև Մեթոդական Խորհուրդ (ՄԽ)հավանության գործընթացով, վերջնական հավանությունը մնում է Գիտական Խորհրդինը: Գործընթացը ներառում է ՄԽ-ում արտաքին փորձագետների պահանջ: Արտաքին փորձագետների, ինչպես նաև նրան խաղացած դերի, նրանց նշանակման գործընթացի պարզ չափանիշներ կան: Սա ընդունված նորմ է: Խորհուրդը չտեսավ պահանջի իրագործման հաճախականության ցուցադրման ապացույց: Նկարագրված գործընթացը, ինչևիցե, պարզ և հիմնավոր է:
Ուսումնական ծրագրի մշակման պաշտոնական գործընթացներն ուսանողներից ներդրումներ չեն պահանջում: Երեք ոլորտներից ուսումնական ծրագրի թիմերի և ուսանողների հետ քննարկումներն ապահովեցին ապացույց այն բանի, որ ուսանողներն, ինչևիցե, աջակցում են ֆակուլտետի մակարդակով:
Ծրագրերում փոփոխությունները և զարգացումները նշմարող, լավ նկարագրված գործընթաց կա: Սրանք պետք է նշվեն ամենամյա մշտադիտարկման հաշվետվության մեջ, որը նախապատրաստվում է բաժինների ղեկավարների կողմից: Հաշվետվությունները պահանջվում են՝ բոլոր շահագրգիռ կողմերի

հետադարձ կապի ուսումնասիրությունների տեսակետները, ուսանողների տեսակետները, դասավանդող կազմի դիտարկումների արդյունքները, ինչպես նաև դասընթացի արդյունքները միավորելու համար: Չնայած որ գործընթացը պարզ է, խորհուրդը չտեսավ վստահություն ապահովող բավարար ապացույց, որ գործընթացը մտադրված կերպով կայուն իրականացվում է, և թե ինչպես են վերանայումների արդյունքները համակարգված ձևով ծրագրերի մշակման մեջ ներառվում մակրո և/կամ միկրո, այն է՝ դասընթացի մակարդակով:

Ծրագրի փաստաթղթերը ներառում են ԵԿՓՀ և համապատասխանաբար անդրադարձնում են ուսանողի անվանական աշխատանքային ծանրաբեռնվածությունը: Տարբեր ուսումնական ոլորտների ուսանողների հետ քննարկումներից ստացված ապացույցը հաստատեց, որ աշխատանքային ծանրաբեռնվածության ակնկալիքները խելամիտ են:

Ծրագրերի ուսումնական պլանները ներառում են թե՛ պարտադիր և թե՛ կամընտրական դասընթացներ: Կամընտրական դասընթացների թիվը տարբեր է՝ առարկայի ոլորտից ելնելով: Որոշ ոլորտներում, օրինակ, կառավարման մագիստրատուրայում, ուսանողները զգում էին, որ ի վիճակի են հարմարեցել իրենց ծրագիրը՝ իրենց իսկ շահերն անդրադարձնելու համար: Մյուս ոլորտներում, օրինակ, իրավաբանության, կամընտրական ծրագրերը սահմանափակ են, և ուսումնական պլանը կշահեր աշխատանքային շուկայի պահանջների բավարարման ավելի շատ տարբերակներից, ինչպես նաև ավելի շատ տարբերակներից, որոնք կօգնեն ԵՀՀ-ին առանձնանալ իր տարածաշրջանային մրցակիցների շրջանում:

Բարձրագույն կրթության ծրագրերի գլխավոր հատկանիշն այն է, որ ուսումնական պլանը պետք է հետազոտական աշխատանք ներառի: Ծրագրի մշակման ցուցումը այս կարևոր չափանիշը չի ներառում: Մինչդեռ արտաքին փորձագետները, որոնք դիտարկման գործընթացի մասն են, ինչպես նաև այլ արտաքին շահագրգիռ կողմերը՝ ներառյալ աշխատողները, ուսումնական ծրագրերում հետազոտական աշխատանքի քննարկումների աջակցման հնարավորություն ունեն, համակարգային մոտեցման ապացույց չկա, որը որ կերաշխավորի, որ ծրագրերը իսկապես անդրադարձնում են ուսումնական պլանի ներկայիս հետազոտական աշխատանքների համապատասխան կողմերը:

Ուսուցման արդյունքները ներառված են ծրագրերի փաստաթղթերում: Խորհուրդը գտավ որոշակի վարիացիա՝ առարկայի ոլորտների միջև ուսուցման արդյունքների արտաբերման և կենտրոնացման հետ կապված: Օրինակ, բժշկության ոլորտում ուսուցման արդյունքները պարզորեն սահմանված և տեղին են: Մյուս ոլորտներում՝ ներառյալ իրավաբանության աստիճանը և կառավարման մագիստրատուրան, խորհուրդը գտավ, որ ուսուցման արդյունքներին բավարար կենտրոնացում չի հատկացվել, նրանք նկարագրված էին գործընթացի տեսանկյունից, քան թե արդյունքի, և որ ծրագրի հմտության տարրերին համապատասխան անդրադարձ չի եղել:

ԵՀՀ-ի նպատակն է, որ իր շրջանավարտները իրենց ընտրած ոլորտում մրցունակ մասնագետներ լինեն: Սրան հասնելու համար ծրագրերը ներառում են տեսական և գործնական գիտելիքի խառնուրդը: Գործնական հմտությունները և գիտելիքը ձեռք են բերվում մասնավորապես բժշկական պրակտիկաների և տեղաբաշխումների միջոցով, որոնք ուսումնական բոլոր ծրագրերի անբաժան տարրերն են: Որոշ ֆակուլտետներում պրակտիկաների և ընդհանուր առմամբ ուսումնական պլանում պրակտիկայի և տեսական նյութի հավասարակշռության հնարավորություններով միանգամայն բավարարված են: Այլ ոլորտներում՝ օրինակ իրավաբանությունում, արտաքին շահագրգիռ կողմերը տեսականի և գործնական պրակտիկայի միջև հավասարակշռության հետ կապված որոշակիորեն բավարարված չէին: Ընդհանուր առմամբ ապացույցը ցույց տվեց, որ ԵՀՀ-ի շրջանավարտները հաջողակ են աշխատանքային շատ համատեքստերում, որտեղ իրենց գործնական հմտությունները և տեսական գիտելիքը արժևորվել է:

Գովասանք՝

- Ուսումնական ծրագրերի զարգացման և վերանայման պարզ փաստաթղթավորված գործընթացներ կան, որոնք ներառում են արտաքին փորձագետների ներգրավման պարզ ցուցումներ:

- Ուսանողի աշխատանքային ծանրաբեռնածություններն իրատեսական են և հնարավոր են դարձնում ծրագրերի նպատակների իրականացումը:

Խորհուրդներ՝

- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ շահագրգիռ կողմերից հետադարձ կապը՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին, համակարգայնորեն հավաքվում, վերլուծվում և վերանայվում է այնպես, որ կատարվող փոփոխությունները թափանցիկ և տեսանելի են շահագրգիռ բոլոր կողմերի համար:
- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ ուսումնական ծրագրերն առաջարկում են կամընտրական դասընթացների համապատասխան և տեղին շարք, որով հնարավոր է բավարարել արտաքին աշխատանքային շուկայի պահանջները:
- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ բոլոր դասընթացներում առկա է ուսուցման արդյունքներին ուղղված ուշադրություն, դրանք կոնկրետ են և ներառում են հմտություններին առնչվող արդյունքներ:
- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ ծրագիրը կանոնավոր վերանայվում է, համակարգայնորեն և ամբողջովին փաստաթղթավորվում, արդյունքներին մասին էլ շահագրգիռ կողմերը տեղեկացվում են:
- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ ներկայիս հետազոտական աշխատանքը համակարգայնորեն տեղեկացնում է ուսումնական ծրագրերի մշակումը:

1.8 Սովորել և դասավանդել

Ստանդարտ՝

Ընդունելության պահանջները և ընթացակարգերը երաշխավորում են բարձրագույն կրթության և շահագրգռված ուսանողական մարմնի ձևավորման արդար հնարավորություն: Բարձրագույն ուսումնական հաստատությունը համակարգայնորեն կիրառում է ուսանողակենտրոն մոտեցումը, որը հսկում է, որ ուսանողները պատասխանատվություն կրեն իրենց ուսմա և կարիերայի պլանավորման համար, ինչպես նաև աջակցում է ստեղծարարությանը և նորարարությանը: Իրենց մասնագիտական գիտելիքով և հասարակական հմտություններով բարձրագույն ուսումնական հաստատության շրջանավարտները մրցունակ են ազգային և միջազգային մակարդակով:

Ուղեցույցներ՝

Դասավանդման գործընթացը հաշվի է առնում ուսանողների անհատական կարողությունները և պահանջները, նպաստում դրանց բարելավմանը: Անկախ աշխատանքի և դասարանային դասավանդման կազմակերպումը մղում է ուսանողներին պատասխանատու լինել իրենց ուսման համար:

Դասավանդման գործընթացում օգտագործվող դասավանդման մեթոդները և սովորելուն օժանդակող միջոցները ժամանակակից, համապատասխան և արդյունավետ են, նպաստում են թվային մշակույթի զարգացմանը:

Ուսանողները շահագրգռված են սովորել և նպաստում են իրենց ուսման որակի բարելավմանը՝ սովորելու գործընթացի և ուսման կազմակերպման վերաբերյալ նշանակալից հետադարձ կապ ապահովելով:

Դոկտորանտուրայի ուսանողները պլանավորում են իրենց ուսումը, ինչպես նաև իրենց հետազոտական և զարգացման գործունեությունները՝ իրենց ղեկավար (ներ)ի հետ համագործակցելիս՝ յուրաքանչյուր տարվա համար կոնկրետ նպատակներ դնելով և այդ նպատակներին հասնելու համար պատասխանատվություն ստանձնելով:

Ցուցիչներ՝

- *Ուսման բովանդակության և կազմակերպման հետ ուսանողի բավարարվածություն*
- *Ուսման որակի հետ շրջանավարտի բավարարվածություն*
- *Շրջանավարտների նախապատրաստման հետ գործատուի բավարարվածություն*

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում պահանջներին	Ճանաչման արժանի
□	X	□	□

Ապացույց և Վերլուծություն

Հայաստանի Հանրապետությունը կարգավորում է թվերը և ղեկավարում է պետական և մասնավոր համալսարանների ուսման յուրաքանչյուր ոլորտի ընդունելության գործընթացը: ԵՀՀ_ն վերանայում է դիմումները, հենց որ դրանք հասնում են Համալսարանին՝ հաջորդելով կենտրոնացված գործընթացը: Երբ ուսանողները դիմում են հեռակա ուսուցման համար, նրանք հարցազրույց են անցնում: Խորհուրդը տեղեկացավ, որ ընդունելությունը տեղի է ունենում՝ ըստ ՀՀ օրենսդրության, և որ Համալսարանի կանոնակարգերն արտացոլում են համապատասխան օրենսդրությունը: Ինչնիցե, խորհուրդը որոշակի տարբերություն գտավ տարբեր ֆակուլտետների ընդունելության ընթացակարգերում: Որոշ դեպքերում գործընթացը և չափանիշները պարզորեն նշված են հանդիպած դասավանդող կազմի կողմից: Բժշկության Ֆակուլտետում, ինչնիցե, ընդունելության նվազագույն ստանդարտների, գործընթացի և ներգրավված տարբեր վարչական միավորների դերի ապացույցը հստակ չէր: Ուսանողները տեղեկացրեցին, որ վստահ են, որ ստացել են համապատասխան տեղեկություն և աջակցություն ԵՀՀ-ում դիմումի ներկայացման գործընթացի ժամանակ: Միջազգային ուսանողներից դիմումները անմիջապեսուղղվում են համալսարանին: Միջազգային ուսանողների ճնշող մեծամասնությունը դիմում է Բժշկության Ֆակուլտետ, որտեղ ծրագրերն առաջարկվում են անգլերենով և հայերենով: Ընդհանուր առմամբ ուսանողական մարմնի կազմավորման վստահելի հիմք կա:

ԵՀՀ-ն նպատակադրված է առաջարկել ուսանողակենտրոն ուսուցում, որը զարգացնում է ուսանողների անկախ մտածողությունը, հետազոտական և ստեղծարար հմտությունները, 2016-2020 ՌՊ-ը ներառում է Համալսարանում <<ուսանողակենտրոն ուսուցումն ամբողջովին արմատացնելու>> նպատակ: Խորհուրդը իմացավ, որ դասավանդման և ուսանելու նկատմամբ ԵՀՀ-ի մոտեցումները պատմականորեն ուսուցչակենտրոն էին, և որ Բոլոնյան համակարգի վերաբերյալ իրազեկությունը, ինչպես նաև ՀՀ-ից դուրս դասավանդումը և ուսանելը մղեցին Համալսարանին փոխել իր կրթական մոտեցումը:

Կրթական Մեթոդական Բաժինը (ԿՄԲ) խորհրդին ներկայացրեց ուսանողակենտրոն մոտեցման բավականին պարզ սահմանում, որը ներառում է ուսանողների առավելագույն ներգրավվածության պահանջ, որպեսզի ուսանողներին տեղավորեն կենտրոնում և օգտագործեն ինտերակտիվ մեթոդներ: Դասավանդող կազմը նույնպես կարող էր արտաբերել այս նույն, բավականին պարզ սահմանումը: ԿՈԱ-ի հետ աշխատելիս ԿՄԲ-ն իրականացրել է դասավանդող կազմի վերապատրաստման միջոցառումներ, որպեսզի բարելավի ուսանողակենտրոն ուսուցման, ինչպես նաև դասավանդման և ուսանելու գործընթացում այս մոտեցման կիրառման ձևի ըմբռնումը: Խորհուրդը լսեց օրինակներ դասավանդող կազմի մի քանի անդամներից, թե ինչպես է իրենց պրակտիկան փոխվել առաջարկվող ուսուցման տեսակետից, և մի քանիսը մեջբերեցին ուսանողների մասնակցության դրական փոփոխության ապացույց:

Խորհուրդն ոչ մի ապացույց չլսեց այն բանի վերաբերյալ, թե ինչպես են ուսուցման արդյունքները կամ գնահատման պրակտիկաները փոխվել ուսանողակենտրոն մոտեցում որդեգրելու տեսակետից: Այն նաև չտեսավ ուսանողակենտրոն մոտեցման հետ սովորելու արդյունքների և գնահատման կայուն լինելը գիտակցելու ապացույց:

Ընդհանուր առմամբ խորհուրդը հաշվի առավ, որ սովորելու և սովորեցնելու տեսակետից ուսանողակենտրոն մոտեցման ըմբռնումը դեռևս բավականին սահմանափակ է ԵՀՀ-ում, և որ դեռևս որոշակի ճանապարհ կա անցնելու, որպեսզի հասնեն ցանկալի օբյեկտիվ <<ամբողջովին արմատական>> ուսանողակենտրոն ուսուցմանը: Սա պահանջում է դասավանդող կազմի զարգացման գործընթացում, ռեսուրսներում նշանակալից ներդրման, ինչպես նաև ուսանողների անկախ ուսուցման հմտությունների բարելավում:

Ծրագիրը և դասընթացի փաստաթղթերը սահմանում են դասավանդման և ուսումնական մի շարք տարբեր նստաշրջաններ՝ ներառալ դասախոսություններ, սեմինարներ, գործնական նստաշրջաններ և կլինիկական տեղաբաշխումներ: Սա ուսանողակենտրոն դասավանդմանը և ուսուցմանը նպաստող մոտեցումների համապատասխան շարք է: Խորհուրդն իմացավ, որ գերիշխող ձևը դասախոսությունն է, դիտարկումներից և քննարկումներից խորհուրդը հաստատեց, որ դասախոսությունները հաճախ փոքր խմբերի համար են նախատեսված, որոնք հնարավորություն են տալիս, որ ուսուցիչը ուսանողներին ներգրավի հարց ու պատասխանի մեջ: Ուսանողներն իրենց մատուցված դասավանդումից գոհ էին, և խորհրդի համար պարզ էր, որ մշակույթը մեկն է ԵՀՀ-ում, որտեղ ուսանողները հարգում են իրենց դասավանդող կազմին, ցանկանում են սովորել, գոհ են իրենց ուսուցումից և միտված են ձեռքբերումների:

Բոլոր ծրագրերի ուսանողները շահում են իրենց ուսման ժամանակ պրակտիկայի կամ տեղաբաշխման ներգրավվածությունից: Ուսանողները կարող են համապատասխանեցնել պրակտիկան, որպեսզի բավարարեն իրենց պահանջները և շահերը: Ուսանողները, որոնք սովորելու զուգահեռ աշխատում են, կարող են օգտագործել իրենց աշխատատեղն իրենց պրակտիկայի հաար կամ ընտրել մեկ այլ տեղ գնալ: Պրակտիկաները ուսումնական ծրագրերի արժեքավոր կողմ են, որոնք հնարավոր են դարձնում, որ ուսանողները աշխատատեղի համար ձեռք բերեն և այնուհետև զարգացնեն հմտություններ, ինչպես նաև հարմարեցնեն իրենց ծրագիրը իրենց պահանջներին:

Խորհուրդը քննեց ուսանելուն և դասավանդմանն աջակցող ժամանակակից տեխոլոգիաների օգտագործումը: Քննարկումից և ռեսուրսների վերանայումից փաստը ցույց տվեց շատ սահմանափակ ըմբռնում այն բանի, թե ինչպես կարող են թվային տեխնոլոգիաներն օգտագործվեն, որպեսզի լավացնեն ուսանելուն ու ուսուցանելը, և, մասնավորապես, աջակցեն ուսանողակենտրոն ուսուցմանը: Խորհուրդն եզրակացրեց, որ ուսանելուն և ուսուցմանն ուղղված թվային մոտեցումների օգտագործումը և դրանց աջակցելու ռեսուրսները դեռևս շատ ռուդիմենտար են ԵՀՀ-ում:

Խորհուրդը տեղեկացավ, որ ուսանողներից հետադարձ կապը ստացվում է ուսումնասիրությունների միջոցով, ֆակուլտետի խորհուրդներին, ինչպես նաև ուսանողական խորհրդին ուսանողի մասնակցության միջոցով: Ուսումնասիրությունների կիրառման միջոցով ուսանողի հետադարձ կապի ստացումը դեռևս արդարացիորեն նոր մեթոդ է, իսկ խորհուրդը չտեսավ դասավանդման և ուսուցման վերաբերյալ ուսանողներից հետադարձ կապի ստացման և վերլուծության նկատմամբ համակարգի մոտեցման ապացույց: Ուսանողներն իսկապես, այդուհանդերձ, զգում էին, որ իրենց տեսակետները լսում և հաշվի են առնում: Ուսանողները և դասավանդող կազմը կարողացավ մեջբերել իրենց հետադարձ կապի հետ կապված փոփոխությունները, և ուսանողների հետադարձ կապի արդյունքում դասավանդող կազմի անդամի հեռացման օրինակը բերվեց: Ընդհանուր առմամբ ուսանողները շատ գոհ էին ԵՀՀ-ում իրենց ուսուցման և դասավանդման փորձով:

Գովասանք՝

- Ուսանողից հարցազրույց վերցնելիս տված ուշադրությունը՝ ուսանողական մարմնի կազմավորման համար կայուն հիմք ապահովելու համար:
- Ուսման բոլոր ծրագրերում տեղավորումը, որը նպաստում է ուսանողների անհատական պահանջներին և մշակում է նրանց աշխատանքին առնչվող հմտությունները:

Խորհուրդներ՝

- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ ֆակուլտետներում առկա է ուսանողակենտրոն ուսուցման խորը և ընդհանուր ըմբռնում:
- ԵՀՀ-ն պետք է ներդրում կատարի դասավանդող կազմի բարելավման գործում, որպեսզի նպաստի ուսանողակենտրոն մոտեցման գործադրմանը, ինչպես նաև ապահովի Համալսարանում փորձի կիսման կառուցվածքային հնարավորությունները:
- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն երաշխավորի, որ ընդունելության չափանիշները և դրանց դիմելու գործընթացները կայուն, պարզ և թափանցիկ են բոլոր ֆակուլտետներում և շահագրգիռ բոլոր կողմերի համար:
- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն երաշխավորի, որ ընդունելության չափանիշները և դրանց դիմելու գործընթացները կայուն, պարզ և թափանցիկ են բոլոր ֆակուլտետներում և շահագրգիռ բոլոր կողմերի համար:

1.9 Ուսանողի գնահատում

Ստանդարտ՝

Ստանդարտ՝Ուսանողների գնահատումները՝ ներառյալ նրանց նախնական ուսումնական և աշխատանքային փորձը աջացում է ուսուցան գործընթացին և հստակ են ակնկալվող ուսումնական արդյունքների տեսակետից: Ուսանողի նահատումների օբյեկտիվությունը և վստահելիությունը երաշխավորվում են:

Ուղեցույցներ՝

Գնահատման չափանիշները հասկանալի են ուսանողների համար, և նրանք դրանց վերաբերյալ տեղեկանում է ճիշտ ժամանակին: Դասավանդող կազմի անդամները համագործացում են՝ գնահատման չափանիշերը սահմանելիս, և դիմում նմանատիպ մոտեցումների:

Գնահատման մեթոդները փոփոխելի և տեղին են, հնարավոր են դարձնում ուսումնական արդյունքներին հասնելը (ներառյալ ընդհանուր կարողությունները):

Հնարավորության դեպքում դասավանդող կազմի մեկից ավելի անդամ է ներգրավվում գնահատման հանձնարարությունների մշակման և ուսանողի գնահատման գործընթացներում: Գնահատումների հետ մեկտեղ ուսանողները ստանում են հետադարձ կապ, որն աջակցում է նրանց անհատական զարգացմանը:

Բուհը նպաստում է դասավանդող կազմի գնահատման կարողությունների զարգացմանը: Դոկտորանտուրայի ուսանողների գնահատումը թափանցիկ և անաչառ է: Դրա նպատակն է աջակցել դոկտորանտուրայի ուսանողների զարգացմանը, մուտք ունենալ նրանց ներկայիս աշխատանքի արդյունավետությանը, ինչպես նաև գնահատել ժամանակին դոկտորանտուրան ավարտելու նրանց կարողությունը և հաջողությամբ պաշտպանելու իրենց դոկտորական թեզը:

Ուսումնական ծրագրի ավարտին նախնական ուսումնական և աշխատանքային փորձը ճանաչելիս մուտք է լինում այն արդյունքներին, որոնք ձեռք են բերվել ուսման միջոցով և աշխատանքային փորձով (ձեռքբերված ուսումնական արդյունքեր):

Ուսանողները տեղեկացված են իրենց իրավունքներից և պարտականություններից՝ներառյալ գնահատումներին առնչվող մարտահրավերների ընթացակարգերը:

Ցուցիչներ՝

- *Կրեդիտների թիվը, որոնց համար դիմել են, և որոնք որ շնորհվել են՝ համաձայն նախնական և փորձնական ուսուցման սխեմայի (ՆՓՈՒՀ) հավատարմագրման: Սա չի ներառում նույն բուհի ուսումնական տարբեր ծրագրից փոխանցված կրեդիտներ:*

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում պահանջներին	Ճանաչման արժանի
□	X	□	□

Ապացույց և Վերլուծություն

ԵՀՀ-ն հրապարակել է գնահատմանն առնչվող կանոնակարգեր և ուղեցույցներ *Ուսանողների Ուսումնական Արդյունքների Ստուգման և Գնահատման Կանոնակարգում (2016թ.)* և *ԵՀՀ-ում Շրջանավարտների Վերջնական Ատեստավորմա Կանոնակարգում (2018թ.):* Այս փաստաթղթերը ներառում են բացատրական բաժին, որն աղբաղառնում է այն հարցին, թե արդյոք ուսանելու արդյունքներին մուտքը ճանաչողաբար կամ ախտորոշիչ կերպով է տեղի ունենում, ձևականորեն գնահատման համար, թե դրանք ամփոփիչ գնահատում են:

2016թ-ի կանոնակարգը ներառում է ԵՀՀ-ի գնահատման սկզբունքները, որոնք թափանցիկությունը, համապատասխանությունը և հետադարձ կապի ապահովությունն են: Ուշագրավ է, որ սկզբունքները չեն ներառում օբյեկտիվության սկզբունքը:

2016թ-ի կանոնակարգը նշում է, որ *<<գնահատման չափանիշների ընտրությունն ելնում է տվյալ ուսումնական ծրագրի կամ դասընթացի արդյունքներից>>:* Այն նաև նշում է, որ *<<սահմանված է գնահատման չափանիշների միջոցով ծրագրի սահմանված արդյունքների հետ ուսանողների հատկացման համապատասխանության մակարդակը>>:* Ընդհանուր և մասնագիտական գիտելիքի և ըմբռնման գնահատման չափանիշներն ընդլայնվում են և կապվում ձեռքբերման մակարդակներին:

2016թ-ի կանոնակարգը չի պարզաբանում, թե ինչպես պետք է գնահատման չափանիշները կապվեն դասընթացի կամ ծրագրի կոնկրետ ուսուցման արդյունքներին: Ուսումնական ծրագրի փաստաթղթերի ուսումնասիրությունը չի տրամադրել գնահատման չափանիշների հետ դասընթացի կոնկրետ ուսուցման արդյունքների հավասարեցման ապացույց: Դասավանդող կազմի և ուսանողների հետ քննարկումները

գնահատման չափանիշների և կոնկրետ ուսուցման արդյունքների միջև ուղղակի կապի իրազեկության, ինչպես նաև դրա անհրաժեշտության ոչ մի ապացույց չի ապահովել: Դեռ ավելին, ուսանողների հետ քննարկումները ցույց տվեցին, որ նրանք միշտ չէ, որ տեղյակ են ուսուցման արդյունքներից՝ որպես գնահատման հիմք: Դեռ ավելին, ուսանողների հետ քննարկումները ցույց տվեցին, որ նրանք միշտ չէ, որ տեղակ են, որ ուսուցման արդյունքների հիման վրա են գնահատվում, ինչևիցե, նրանք վստահ էին, որ գիտեին, թե ինչ նյութի բովանդակության հիման վրա են գնահատվելու:
2016թ-ի կանոնակարգը գնահատականների կուտակման վերաբերյալ տեղեկություն է ապահովում: Այս տեղեկությունն առկա է նաև կայքում, ինչպես նաև Facebook-ում, որը հասանելի է ուսանողներին: Դասավանդող և վարչական կազմը ուսանողներին ապահովում է գնահատականների կուտակման ընթացակարգային և վարչական կողմերի վերաբերյալ տեղեկությամբ, ինչպես նաև տեղեկացնում է, թե ինչպես է վերջնական գնահատականը հաշվվում: Ուսանողները վստահ էին, որ գիտեին գնահատականների կուտակման մասին:

2016թ-ի կանոնակարգի *հիմնական դրույթները* նշում են, որ Համալսարանը գործարկում է ուսանողների ուսուցման արդյունքների կանոնավոր ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի նպատակներից մեկն է <<դասարանային ներկայությունների բարելավումը>>: Կանոնակարգի Գնահատման Մեթոդաբանության բաժինը առանձնացնում է մի շարք բաղադրիչներ, որոնցից առաջինը <<դասերի ժամանակ ուսանողների մասնակցության գնահատումն>> է՝ դասարանային ներկայությունների հաշվարկի օգնությամբ>>: Գնահատման այս բաղադրչին հատկացվում է 10 կրեդիտ, այն է՝ գնահատականների 10%-ը, և այս կրեդիտները շնորհվում են մասնակցության % մակարդակի հիման վրա: Սա իրենից ներկայացնում է գնահատման նկատմամբ ԵՀՀ-ի մոտեցման նշանակալից թուլություն: Դասավանդող կազմը համաձայնեց, որ մասնակցությունը կամ ներկայությունը ուսուցման արդյունք չէ: Մասնակցության գնահատման ձևում կայունություն չկար, քանի որ այն կարելի էր նաև կատարել հեռակա կարգով, քա թե դասարանում: Խորհուրդը տեղեկացավ, որ ԳԻտական Խորհրդում որոշ քննարկումներ են եղել, և Համալսարանը վերանայում է ներկայության և մասնակցության կրեդիտների շնորհումը:
ԵՀՀ-ում Վերջնական Ատեստավորման Կանոնակարգը (2018թ.) ուրվագծում է բակալավրիատի և մագիստրատուրայի մակարդակների համար վերջնական ատեստավորման ընթացակարգերը: Կանոնակարգը պարզորեն նկարագրում է այն գործընթացը, որն իրականացվում է Վերջնական Ատեստավորման Կոմիտեի կողմից, որը ներառում է արտաքին անդամներ: Սա խելամիտ պրակտիկա է:

Խորհուրդն ուսումնասիրեց գնահատումների համար գնահատականների դեմ ներկայացվող բողոքների ընթացքը՝ վերջին ատեստավորումից զատ, դասավանդող կազմի և ուսանողների հետ: Կայուն ըմբռնման պակաս կար, թե ինչպես կարող էին գնահատականների դեմ բողոքները ներկայացվեն: Թվում էր, որ որոշ ուսանողներ կարծում են, որ սա կատարվելու է՝ հավելյալ քննական հարցեր տալով, մյուս ուսանողները նշեցին, որ բողոքները ներկայացվում են ուսուցչին, մյուսները՝ դեկանին: Խորհրդի համար պարզ չէր, արդյոք բողոքները օրինական են ոչ ընթացակարգային հարցերի դեպքում: Ատեստավորման փուլում, ինչևիցե, պարզ է, որ բողոքներ կարող են ներկայացվել միայն Ատեստավորման Կոմիտեի ընթացակարգային խախտումների դեմ, և բողոք ներկայացնելու գործընթացը պարզորեն բացատրվում է Կանոնակարգում:
Ծրագրի փաստաթղթերը ցույց տվեցին, որ գնահատման բազմաթիվ աշխատանքներ են կատարվում, որոնք ներառում են դասարանային թեստերի տեղում ընտրությամբ ստուգումներ, շնորհանդեսներ, առարկայական ուսումնասիրություններ, գործնական գնահատումներ,բազմաթիվ տարբերակային պատասխաններով թեստեր և քննություններ: Բոլոր դասընթացներն եզրափակվում են վերջնական քննությամբ: Սա ներկայացնում է գնահատման բազմաթիվ տեսակներ: Ինչևիցե, խորհրդին պարզ չէր, թե ինչպես էր ծրագրի թիմը որոշել, թե ինչ տեսակի գնահատումն է տեղին, և արդյոք կան հարցականի տակ գտնվող կոնկրետ ուսուցման արդյունքների գնահատման տեսակի համապատասխանությունը գնահատող մեխանիզմներ:
Ուսանողները զեկուցեցին, որ ստացել են դասավանդող կազմից օգտակար հետադարձ կապ՝ իրենց գնահատումների վերաբերյալ: Հետադարձ կապը կարող է լինել գրավոր կամ բանավոր: Ուսանողները շատ երախտապարտ էին, որ դասավանդող կազմը հասանելի և պատրաստակամ է իրենց գնահատումների վերաբերյալ հետադարձ կապ ապահովի:

2016-2019թթ. -ի ընթացքում ԵՀՀ-ն առաջարկել է դասավանդող կազմին զարգացման մի շարք նստաշրջաններ, որոնք ուղղված են գնահատման նրանց հմտությունների բարելավմանը: Նստաշրջանների թեմաները տարբեր են և առաջարկվում են միայն մեկ անգամ ցանկացած ժամանակահատվածում, ինչն էլ սահմանափակում է դասավանդող կազմի մասնակցության հնարավորությունները: Խորհուրդը չկարողացավ գտնել դասավանդող կազմի գնահատման փորձերի վերաբերյալ վերապատրաստման ներգործության վերլուծության ոչ մի ապացույց:

Գովասանք՝

- Դասավանդող կազմի՝ ուսանողներին իրենց հանձնարարությունների վերաբերյալ հետադարձ կապ ապահովելու ճկունությունը:
- Վարչական կազմի՝ գնահատման ընթացակարգային և նյութատեխնիկական ասպեկտներիի հետ կապված ուսանողներին օգնելու պատրաստակամությունը:

Խորհուրդներ՝

- ԵՀՀ-ն պետք է քննարկի օբյեկտիվության ավելացումը՝ որպես գնահատման սկզբունք:
- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ գնահատման չափանիշների պարզ հավասարեցում կա կոնկրետ ուսուցման արդյունքներին, այնպես որ ուսանողները իմանան, որ ուսուցման ինչպիսի արդյունքների հիման վրա են գնահատվում:
- ԵՀՀ- պետք է վերանայի ներկայության և մասնակցության կրեդիտի շնորհումը:
- ԵՀՀ-ն պետք է պարզաբանի բողոքի հիմքերը և ընթացակարգերը, որպեսզի իրենք ատեստավորման ընթացքներին հավասարվեն, և, այսպիսով, Համալսարանում կայունություն լինի:

1.10 Սովորելու Գործընթացին Նպաստող Համակարգեր

Ստաղարտ՝

Բարձրագույն ուսումնական հաստատությունը երաշխավորում է, որ բոլոր ուսանողներն ունենան ուսումնական, կարիերայի և հոգեբանական խորհրդատվության հնարավորություն: Ուսանողների անհատական զարգացումը և ուսումնական առաջընթացը հսկվում և աջակցվում է:

Ուղեցույցներ՝

Բուհն աջակցում է ուսանողին՝ ուսանողի հատուկ կարիքների, ինչպես նաև կրթական կարողությունների և նախապատվությունների հիման վրա անհատական ուսումնական ծրագիր մշակելիս:

Բուհը գործնական վերապատրաստման վայրեր, ինչպես նաև աշխատանք գտնելու հարցում խորհուրդ է տալիս իր ուսանողներին (ներառյալ հատուկ կարիքներով ուսանողներին և միջազգային ուսանողներին): Ուսանողները տեղյակ են, թե որտեղ կարող են դիմել, որպեսզի ստանան աջակցություն հոգեբանական խնդիրների դեպքում:

Բուհը միջազգային ուսանողներին աջակցելու և խորհուրդ տալու գործող համակարգ ունի (ներառյալ հոգեբանական խնդիրներին և կարիերային առնչվող խորհրդատվությունը), որն ի դեպ օգնում է նրանց հեշտ ներգրավվել բուհում և հայ հասարակության մեջ: Բուհը վերլուծում է այն պատճառները, թե ուսանողները ինչու են դասերից հեռացվում և դուրս մնում, և քայլեր է ձեռնարկում, որպեսզի մեծացնի դասերի արդյունավետությունը:

Բուհն աջակցում է արտահամալսարանական գործունեություններին և քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին ուսանողի մասնակցությանը:

Բուհը հետևում է մատուցվող խորհրդատվական ծառայություններով ուսանողի բավարարվածության մակարդակին և անհրաժեշտ փոփոխություններ անում:

Ցուցիչներ՝

- Ուսման միջին տևողությունը՝ ըստ ուսման մակարդակի
- Դուրս մնալու/հեռացման տոկոսը

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում	Չի	Ճանաչման

	պահանջներին	համապատասխանում պահանջներին	արժանի
□	X	□	□

Ապացույց և Վերլուծություն

ANQA հավատարմագրման գնահատումից հետո ԵՀՀ-ն հանձն է առել կատարել բարելավումներ սովորելու գործընթացին նպաստող համակարգերում՝ արտացոլելով ANQA-ի խորհուրդները: Վերջերս ԵՀՀ-ն պայմանագիր է կնքել արտաքին մատակարարի հետ, որպեսզի աջակցություն առաջարկի ուսանողներին հոգեբանական խնդիրների համար: ԵՀՀ-ն այժմ քննարկում է խմբակային թերապիա առաջարկել՝ հաղթահարելու դիմադրության խնդիրը: Զուգահեռաբար ԵՀՀ-ն սկսում է վերապատրաստում դասավանդող կազմի և ուսանողների համար, որպեսզի բարելավի թիմային աշխատանքը, ինչպես նաև անդրադառնա կոնֆլիկտի ղեկավարմանը: Վերապատրաստումը պետք է սկսվի 2020թ-ին: Դեկանատն արձագանքում է ուսանողներին, որոնք տվյալ դեպքում ուսման հետ կապված խնդիրներով խորհրդատվության կարիք ունեն:
Միջազգային ուսանողներին նպաստում է մտերմանալու կամ խորհուրդնել տալու գործընթացը, որը նպատակադրված է ներգրավել նրանց Համալսարանում: ԵՀՀ-ն պլանավորում է սա ավելի կառուցվածքային դարձնել և այն տեղավորել միջազգային ուսանողներին աջակցելուն նվիրված միավորում: Շաբաթական երկուսից երեք ժամանոց կոնկրետ լեզվի դասընթաց է ապահովվում միջազգային ուսանողների համար երկու տարի շարունակ:
Միջազգային ուսանողներն արտահայտեցին իրենց խորին բավարարվածությունը ընդունելության գործընթացում ԵՀՀ-ի աջակցման պատասխանատվությամբ:
Կարիերայի աջակցությունն առաջարկվում է մի կենտրոնի միջոցով, որը կենտրոնանում է շրջանավարտների վրա, սակայն նաև առաջարկում է մի քանի ծառայություններ ներկայիս ուսանողների համար: Կենտրոնն ունի անձնակազմի երեք ինքնուրույն անդամ, որոնք ունեն կարիերայի հետ կապված խորհուրդներ տալու մասնագիտական հմտություններ, ինչպես նաև անձնակազմի մի քանի ժամանակավոր անդամ: Անձնակազմն օգտագործում է աշխատողների իր ցանցը, որպեսզի աջակցի ուսանողներին պրակտիկաներ գտնելու, ինչպես նաև աշխատանքային հնարավորությունների վերաբերյալ տեղեկության ճանաչման և տարածման հարցում: Մինչդեռ կազմը պարզ կերպով շատ է կամենում օգնել ուսանողներին, իսկ ուսանողներն էլ արժևորում են աշխատակազմի կողմից տրամադրվող օգնությունը, օգնությունը կշահի ավելի համակարգային և ներգրավված լինելուց, որպեսզի ուսանողներին պարզ լինի, թե որտեղից, երբ և ումից որ օգնությունն է հասանելի:
Շրջանավարտների Կենտրոնը պատասխանատու է շրջանավարտների համար աշխատանքային վիճակագրությանը հետևելու գործում: Վիճակագրական տվյալներն առկա են և պահվում են կենտրոնի արդյունավետության վերահսկման միջոց: Կարիերայի բաժնի կատարողականությունը ներառված է ընդհանուր ուսումնասիրություններում: Խորհրդի այցի ժամանակ կարիերայի բաժնից ուսումնասիրությունների արդյունքները չէին վերլուծվել:
Սկզբում ուսանողներին տեղեկացնում են կարիերայի կենտրոնի կողմից առաջարկվող աջակցման ծառայությունների մասին: Կա ֆեյսբուքյան էջ, սակայն աջակցության ծառայությունները կայքի անգլերեն տարբերակում չկան: Ուսանողներին ապահովում են նաև անհատների ցանկով, որոնց հետ նրանք կարող են խորհրդակցել կոնկրետ կարիքների շուրջ ուսումնական տարվա սկզբին:
ԵՀՀ-ն հետևում է առաջընթացի և նույն կուրսում մնալու տեկոսներին ուսանողների անհատական քարտերից եկող տեղեկության միջոցով: Նույն կուրսում մնալու տոկոսը տատանվում է: Տատանումների համար մի քանի պատճառներ էի առաջարկվում՝ ներառյալ ուսումնական նոր պահանջները, սակայն ամբողջական և նշանակալից վերլուծության ապացույց չկար, որը կներառեր փոփոխականների վերլուծություն՝ ներառյալ ծրագրի ակարդակու կրեդիտների վերլուծությունը և ներկայության տոկոսները:
ԵՀՀ-ն աջակցում է ուսանողներին ուսումնական պլանից դուրս գործունեություններում, որոնք հիմնականում համակարգվում են Ուսանողական Պառլամենտի միջոցով: Այս գործունեությունները ներառում են սպորտային և մշակութային իրադարձությունները: Խրախուսվում է նաև ուսանողների մասնակցությունը այն

գործունեություններում, որոնք աջակցում են համայնքին, օրինակ՝ մանկատներ և դպրոցներ այցելելով: Անհրաժեշտության դեպքում ուսանողները կարող են կիրառել իրենց մասնագիտական հմտությունները համայնքին նպաստող գործունեություններում՝ իրավաբանական խորհրդատվություն առաջարկելով կամ էլ հանրային վայրերում արյան ճնշման ստուգումներ անցկացնելով:

Պարզ է, որ ԵՀՀ-ն հանձն է առել կատարել մի շարք բարելավումներ, և կա նաև ուսանողներին աջակցող այլ ծառայությունների պլաններ: Այդուհանդերձ, այս ծառայությունները դեռևս զետեղված չեն Համալսարանի կառուցվածքում, այսպիսով ուսանողների համար պարզ է, թե ինչ է առաջարկվում և ում կողմից: Մի քանի ծառայություններ նոր են, և խորհրդի այցելության ժամանակ մի քանիսը դեռևս ծրագրավորման փուլում էին, այսպիսով խորհուրդը հնարավորություն չուներ պարզել, թե ծառայությունները որ չափով են բավարարում ուսանողների պահանջները:

Ուսանողներին տեղեկացնում են իրենց ուսման սկզբում առկա ծառայությունների մասին այն ժամանակ, երբ նրանք յուրացնում են ԵՀՀ-ում իրենց ուսման բոլոր ասպեկտների վերաբերյալ տեղեկությունը: Ամբողջական տեղեկությունը կայքում հասանելի չէ, որտեղ ուսանողները կարող էին այն հեշտությամբ գտնել, երբ դրա անհրաժեշտությունը ծագեր: Սովորելու գործընթացին նպաստող ծառայությունների հասանելության վերաբերյալ պլանավորված և մշակված կապը կերաշխավորեր, որ ուսանողները ճանաչեն դրանք և կարողանան դրանց վերաբերյալ տեղեկությանը մուտք ունենալ , երբ դրա անհրաժեշտությունն ունենան:

Չնայած որ առաջընթացի և ձեռքբերման տոկոսները վերահսկվում են, այս վերահսկումը դեռևս հիմնական փուլում է և չի անդրադառնում այն հարցին, թե ինչ քայլեր կարող են կատարվել, որպեսզի բարելավվի նույն կուրսում մնալու տոկոսը կամ էլ թե ինչպես կարող են ներգործության տեսակետից նման քայլերը վերահսկվել:

Ընդհանուր առմամբ ԵՀՀ-ն որոշակի առաջընթաց է գրանցել ուսանողներին մատուցվող ծառայությունների զարգացման հարցում, սակայն որոշակի անցնելու ճանապարհ կա դեռևս, որպեսզի երաշխավորի որ բոլոր ուսանողները սովորելու գործընթացին նպաստող համապարփակ և համապատասխան համակարգին մուտք ունեն:

Խորհուրդներ՝

- ԵՀՀ-ն պետք է մշակի ուսանողների կրթությանը նպաստող ծառայությունների համար պարզ և ընդհանուր կառուցվածք:
- ԵՀՀ-ն պետք է առաջարկը հասցի ուսանողներին տարբեր ուղիների միջոցով, որպեսզի երաշխավորի, որ բոլոր ուսանողներն ունեն կայուն և հեշտությամբ հասանելի տեղեկություն, որին կարող են մուտք ունենալ անհրաժեշտության դեպքում:
- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն հանձն առնի կատարել նույն կուրսում պահելու և հեռացնելու տոկոսների խորը վերլուծություն, ինչպես նաև մշակի միջոցներ, որպեսզի բարելավի այդ տոկոսները:

1.11 Հետազոտություն, Զարգացում և/կամ այլ Ստեղծարար Գործունեություն

Ստանդարտ՝

Բարձրագույն ուսումնական հաստատությունը սահմանել է ՀՁՍ ոլորտներում իր նպատակները և կենտրոնացումը՝ իր առաքելության, ինչպես նաև հասարակության ակնկալիքների և ապագա պահանջների հիման վրա, ինչպես նաև գնահատում է դրանց իրականացումը և իր ՀՁՍ գործունեությունների հասարակական ներգործությունը: ՀՁՍ-ն աջակցում է դասավանդման և ուսուցման գործընթացին բարձրագույն ուսումնական հաստատությունում: ՀՁՍ-ի համար աջակցման ծառայությունները նպատակային են և նպաստում են հիմնական գործընթացի նպատակների իրականացմանը:

Ուղեցույցներ՝

Բուհը բարձր է արժևորում հասարակությունում ՀՁՍ-ի ոլորտի դերն ու պատասխանատվությունները, ինչպես նաև գնահատում է իր ՀՁՍ գործունեությունների արդյունքները, նրանց միջազգային տեսանելիությունը և հասարակական ներգործությունը:

Բուհը ճկուն պատասխանում է հասարակության և աշխատանքային շուկայի ներկայիս պահանջներին իր հետազոտական գործունեության տեսակետից և պլանավորում է իր հետազոտական աշխատանքը

ձեռնարկությունների, հանրային սեկտորի հաստատությունների և երրորդ սեկտորի կազմակերպություններ հետ համագործակցելիս:
Դասավանդող կազմի անդամներն ուսանողներին ներկայացնում են իրենց հետազոտության արդյունքները, ինչպես նաև իրենց մասնագիտական ոլորտի վերջին գիտական նվաճումները, հնարավորության դեպքում ներգրավում ուսանողների իրենց Հ և Զ նախագծերում:
ՀԶՍ-ի կազմակերպումը և կառավարումը հաշվի է առնում բուհի թեմատիկ տարբերությունները և առաքելությունը (պրոֆիլը):

Ցուցիչները կախված են բուհի առանձնահատկություններից՝

- *Թվային տվյալներ՝ (1) դասակարգիչներով գիտական հրապարակումներ, (2) ստեղծարար աշխատանքի հանրային ներկայացում, միջազգային մրցույթներից ճանաչում, վերանայումներ մասնագիտական հրապարակումներում և այլն, (3) արտոնագրի դիմումներ, արտոնագրեր, (4) դասագրքեր, ուսմանը նպաստող տարբեր ձևաչափի միջոցներ և այլն, (5) համակարգի զարգացման լուծումներ, արտադրանքի մշակման լուծումներ, միջավարի դիմումների լուծումներ, (6) ձեռնարկությունների հետ կնքված պայմանագրեր, (7) նոր բաժնետիրական ընկերությունների ձևավորում և այլն՝ բուհի պրոֆիլին և առաջնահերթություններին համապատասխան և այն:*
- *Հետազատական աշխատանք կատարելու պահանջով գիտական հրապարակումների/ ստեղծագործական աշխատանքների թիվը ուսումնական կազմի յուրաքանչյուր անդամի և յուրաքանչյուր աշխատողի հաշվով (ԱԴՀ ըստ ոլորտների):*
- *ՀԶՍ գործունեությունների արտաքին ֆինանսավորվող նախագծերի թիվը և ծավալը:*

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում պահանջներին	Ճանաչման արժանի
□	□	X	□

Ապացույց և Վերլուծություն
Ինքնագնահատման հաշվետվությունը (ԻՀ)-ը հաստատում է գիտական հետազոտության անհրաժեշտությունը և սովորելու հետ դրա կապը: 2016-2020ՌՊ-ը ձևավորու է հետազոտական գործունեությունների նպատակները հետևյալ կերպ՝

- *նպաստել հետազոտական աշխատանքի շրջանակի ընդլայնմանը և հետազոտական նախագծերում ուսուցիչների և ուսանողների ներգրավմանը,*
- *խթանել համագործակցությունը ԵՀՀ ամբիոնների և ազգային ու միջազգային գիտահետազոտական կենտրոնների, համալսարանների և ձեռնարկությունների միջև: Հող նախապատրաստել ազգային և միջազգային հետազոտական ծրագրերում Համալսարանի ներգրավվման համար:*
- *կազմակերպել Բժշկության և Տնտեսագիտության մասնագիտություններում հետբուհական կրթության ընդունելությունը:*

Խորհրդի կարծիքով այս նպատակներին չի հաջողվում համապատասխան կերպով անդրադառալ հասարակության մեջ և ԵՀՀ-ի ռազմավարական պլանում հետազոտական և զարգացման գործի նշանակությանը և կարևորությանը:
Բարձրագույն կառավարումը ընդգծում է հետազոտական աշխատանքում կառուցելու ունակությունը: Գիտական Հարցերով և Հետբուհական Կրթության Բաժնի Փոխռեկտորը, որը այցելության պահին արդեն յոթ ամիս այդ պաշտոնին էր, հետազոտական և զարգացման գործում կարևոր պատասխանատվություն ունի: Փոխռեկտորը հենց իր ոլորտում նշանակալից հետազոտական աշխատանք ունի կատարած, չնայած որ սա ԵՀՀ-ի ուսումնական ծրագրերի ներկայիս պորտֆոլիոյին չի առնչվում:

Համալսարանի բարձրագույն կառավարումը տեղյակ է հետազոտական ունակություն կառուցելու անհրաժեշտության մասին: Այս ոլորտում վերջին նախաձեռնությունը դոկտորանտուրայի չորս ուսանողի վերցնելն է, որոնք իրենց հետազոտական աշխատանքն են կատարելու ԵՀՀ-ում, և որոնք, հույս կա, կշարունակեն իրենց աշխատանքը Համալսարանում: Մինչդեռ խորհուրդը գովում է այս նախաձեռնությունը, ոլոտում սահմանափակ է և ներկա պահին Բժշկության Ֆակուլտետով է սահմանափակված: Դեռևս նշանակալից սահմանափակումներ կան կազմակերպչական մակարդակում հետազոտական և զարգացման աշխատանքի ղեկավարման հարցում:

Խորհուրդն հետաքրքրվեց այն բանով, թե ինչ օգնություն է մատուցվում դասվանդող կազմին՝ հետազոտական աշխատանքով զբաղվելու համար: Խորհուրդը տեղեկացավ, որ ԵՀՀ-ում ամբողջական դրույքով աշխատող համապատասխան կազմի համար հետազոտական աշխատանք կատարելու պահանջներ չկան:

ԻՀ-ը ներառում է հետազոտական աշխատանքի և զարգացման վրա կատարվող ծախսերի վերաբերյալ հայտարարություն: Խորհուրդը համատեղ ուսումնասիրեց ֆինանսական ցուցիչներով ԻՀ-ում հայտարարությունները և չկարողացավ համապատասխանեցնել երկուսը կամ էլ ձեռք բերել հստակ պատկեր այն բանի, թե ինչ ներդրումներ է կատարվում հետազոտական աշխատանքի և զարգացման ուղղությամբ, ինչպես նաև որ գործունեությունների ուղղությամբ:

Դասավանդող կազմի հետ քննարկումներից և ԵՀՀ տարածքները տեսնելուց խորհրդի համար պարզ էր, որ չկան հետազոտական լաբորատորիաներ, որոնք կնպաստեին ԵՀՀ-ում հետազոտական աշխատանքին: Հետազոտակա աշխատանքը, որն իրականացվում է դասավանդող կազմի կողմից, որն աջակցում է ԵՀՀ-ու դասավանդմանը, հանձն է առնվում մյուս համալսարաններում կամ կազմակերպություններում՝ ներառյալ պետական հետազոտական հաստատությունները, որոնց հետ դասավանդող կազմը որոշակի կապ ունի: Տեսած և լսած ապացույցներից խորհուրդը տեսակետ ձևավորեց, որ ԵՀՀ-ում ամբողջական դրույքով աշխատող ուսումնական կազմի ոչ բոլոր անդամներն են ներգրավված հետազոտական աշխատանք կատարելու գործընթացքում: Սա նշանակալիորեն սահմանափակում է դասավանդող կազմի և ուսանողի ցանկացած կարևոր համագործակցություն հետազոտության շրջանակներում, և, որ ամենից կարևորն է, տեղին չէ երաշխավորել հետազոտության վրա հիմնված ուսուցման քննադատական պահանջը:

1) ԻՀ-ի հավելվածներում ԵՀՀ-ի դասախոսների կողմից ընդհանուր 489 հրապարակում է նշված 2014-ից մինչև վաղ 2019թ-ը ընկած ժամանակահատվածի համար: Ինչևիցե, այս հրապարակումների թիվը, որոնք միջազգային ամսագրերում անգլերենով են տպագրված, քիչ է: ԵՀՀ դասավանդող կազմի և ուսանողների մասնակցությունը կոնֆերանսներին և նախագծերին 2016թ-ից հիմնականում սահմանափակված է հայալեզու կամ ռուսալեզու միջազգային կոնֆերանսներով: Խորհուրդը գտավ, որ հետազոտական նախագծերը, որոնք իրականացվում են ԵՀՀ-ում, սահմանափակված են ոլորտով և կարևոր չեն այս կրթական մակարդակում պահանջվող ընդհանուր հետազոտության տեսակետից: Դասավանդող կազմը հայտնեց, որ ԵՀՀ-ն ամբողջական դրույքով աշխատող կազմին հետազոտական աշխատանքի համար համապատասխան ժամանակ չի տրամադրում: Այս փաստերը սահմանափակում են ԵՀՀ-ի տեսանելիությունը հետազոտական աշխատանքում և զարգացման տեսակետից:

ԻՀ-ը նշում է, որ մագիստրատուրայի ուսումնական ծրագրերը՝ բացառությամբ ընդհանուր բժշկության ուսումնական ծրագրի, ունեն հետազոտական ուղղություն: Ինչևիցե, ուսումնական պլանի փաստաթղթերի և դասավանդող կազմից ու ուսանողներից հետադարձ կապի ուսումնասիրությունը չապահովեց համոզիչ ապացույցով, որ սա է դեպքը: Ուսանողների հետ քննարկումները ցույց տվեցին, որ հետազոտական աշխատանքի և ԵՀՀ-ում իրենց կրթության հետ դրա կապի վերաբերյալ շատ սահմանափակ հասկացողություն ունեն: Այն փաստը, որ ուսանողների նշանակալից մեծամասնությունը ընդհանուր բժշկության կամ ատամնաբուժության ուսումնական ծրագրերում է ներգրավված, որտեղ հետազոտական հարցերի ներառման ապացույց չկա, թուլացնում է որպես համալսարան ԵՀՀ-ի դիրքը բարձրագույն կրթության ասպարեզում:

Խորհուրդներ՝

- ԵՀՀ-ն պետք է ստեղծի հետազոտական աշխատանքի համար միջավայր և մշակույթ ուսումնական բոլոր ծրագրերում՝ ներառյալ ընդհանուր բժշկությունը:

- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ հետազոտական աշխատանքին նպաստող ֆինանսավորման վերաբերյալ թափանցիկորեն գրառումներ է կատարվում և ներկայացվում:
- Խրախուսվում է, որ ԵՀՀ-ն մշակի իր հետազոտական ունակության զարգացմանն ուղղված ավելի ռազմավարական մոտեցում և պետք է ներառի հետազոտական աշխատանքում ներգրավվող դասավանդող կազմին ուղղված կոնկրետ աջակցություն:
- ԵՀՀ-ն պետք է քայլեր ձեռնարկի զետեղելու հետազոտական հմտությունների դասավանդումը և հետազոտական գործունեությունները ուսումնական պլանի մեջ:
- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն սահմանի և կենտրոնանա որպես ամբողջական, նախընտրելիորեն փոխկապակցված ֆակուլտետներ ներկայացող ԵՀՀ-ի համար հետաքրքրություն հանդիսացող երկու կամ երեք հետազոտական ոլորտների վրա: Սա պետք է նաև հաշվի առնի հասարակության պահանջները:
- ԵՀՀ-ն պետք է ակտիվ փոխհարաբերություններ հաստատի ազգային հետազոտական հաստատությունների հետ:
- ԵՀՀ-ն պետք է ձևավորի հետազոտական աշխատանքի և դասավանդման միջև կապի ինստիտուտի մասշտաբով ըմբռնում, ինչպես նաև նպաստի կապին ուսումնական պլանի բոլոր մակարդակներում և բոլոր ֆակուլտետներում:

1.12 Հասարակությանը մատուցվող Ծառայություն

Ստանդարտ՝

Բարձրագույն ուսումնական հաստատությունը նախաձեռնում և իրականացնում է բարելավման գործունեություններ, որոնք բարձրացնում են բարեկեցության մակարդակը հասարակությունում, ինչպես նաև տարածում են հաստատության իրավասության ոլորտների վերջին հմտությունը: Բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ որպես ուսուցմանն ուղղված կազմակերպություն, խթանում է ամբողջ կյանք տևող ուսուցմանը հասարակության մեջ, ինչպես նաև ստեղծում է բարձրորակ հմտություններ դրա համար:

Ուղեցույցներ՝

Բուհը նպաստում է համայնքի բարեկեցության մակարդակի բարձրացմանը՝ կիսվելով իր ռեսուրսներով (գրադարան, թանգարաններ, սպորտային հաստատություններ և այլն), մատուցելով խորհրդատվական ծառայություններ, ինչպես նաև կազմակերպելով համերգներ, ցուցահանդեսներ, ցուցադրություններ, կոնֆերանսներ, շուկաներ և այլ միջոցառումներ:

Բուհը ներգրավում է շրջանավարտներին բուհի զարգացմանն ուղղված գործունեություններում, ինչպես նաև գիտելիքի հասրակությանը:

Բուհի աշխատակիցները մասնակցում են մասնագիտական ասոցիացիաների աշխատանքին, ինչպես նաև այլ համայնքի խորհուրդների և որոշում կայացնող մարմինների աշխատանքին՝ ղեկավարելով հասարակության զարգացման գործընթացները որպես ազդեցիկ առաջնորդներ: Հասարակության վրա ուսումնական հաստատության աշխատողների ներգործությունը հաշվի է առնվում՝ նրանց աշխատանքը գնահատելիս:

Բուհը սահմանել է ներքին վերապատրաստման նպատակները և գնահատում է դրանց իրականացումը: Ներքին վերապատրաստումը պլանավորված է՝ ըստ թիրախ խմբերի պահանջներին:

Ցուցիչներ՝

- *Շարունակական վերապատրաստման մեջ ներգրավված անձանց թիվը (և ուսման մասնավոր կերպով ֆինանսավորվող այլ բաց ձևերը), դասերի կամ ԵԿՓՀ թիվը՝ յուրաքանչյուր մասնակցի հաշվով:*

Համապատասխանում է պահանջներին	Մասամբ է համապատասխանում պահանջներին	Չի համապատասխանում պահանջներին	Ճանաչման արժանի

□	X	□	□

Ապացույց և Վերլուծություն

Վերջին գնահատումից հետո զարգացումների վերաբերյալ բաժնում ԻՀ-ն նշում է, որ *<<Համալսարանը կանոնավոր կերպով հասարակությանը ապահովում է իր գործունեությանը վերաբերող տեղեկությամբ և ստանձնել է հասարակական պատասխանատվություն>>:* Հասարակությանը մատուցվող Ծառայության վերաբերյալ ինքնագնահատման հիմնական բաժնում ԵՀՀ-ն նշում է համապատասխան փաստաթղթեր, որոնք կենտրոնանում և առաջնորդում են իր գործունեությունների այս ասպեկտը: Այն ներառում է իր համապատասխան գործունեություններից հետևյալը՝ մասնագիտական զարգացման/ վերապատրաստման դասընթացների կազմակերպումը, միջնակարգ և մասնագիտական կրթության հաստատություններին աջակցության ապահովումը, խորհրդատվության ապահովումը, շրջանավարտներին հետադարձ կապի ապահովումը, պետական և տեղական ինքնակառավարվող մարմինների հետ համագործակցությունը և բարեգործությունը: Հանրային հարաբերությունների ԻՀ-ում նույնպես շատ շեշտվածություն կա՝ որպես հասարակությանը մատուցվող ծառայության ասպեկտ: Ուսանողների և դասավանդող կազմի բոլոր կատեգորիաների հետ քննարկումներից խորհուրդը բազմազան տեսակետների հանդիպեց՝ կապված այն բանի հետ, թե ինչ է իրենից ներկայացնում հասարակությանը մատուցվող ծառայությունը, որը ներառում է հասարակությանը որպես տնտեսական շահ մատուցվող հարկերի վճարում, մանկատներ այցելություններ, հասարակության անդամների համար մարզասրահի բացում: Խորհուրդը չգտավ հասարակությանը մատուցվող ծառայության նկատմամբ ԵՀՀ-ի մոտեցման կայուն, ընդհանուր ըմբռնում կամ մեկնաբանում:

Չնայած պարզաբանման բացակայությանը խորհուրդը գտավ հասարակությանը մատուցվող ծառայության շատ լավ օրինակներ: Իրավաբանության Ֆակուլտետը հիմնադրել է իրավաբանության կլինիկա, որտեղ դասավանդող կազմը և ուսանողները հասարակության անդամներին խորհրդով և աջակցությամբ են ապահովում: ԵՀՀ-ն ունի մի շարք համագործակցություններ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի նման տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ: Ուսանողները հայտնեցին, որ այցելություններ են կատարել մանկատներ և հասարակության խոցելի խմբերի այլ կենտրոններ: Քայլեր են նաև արվում՝ խոցելի խմբերի պահանջները և խնդիրները նշելու և ԵՀՀ մի քանի ֆակուլտետներում դասընթացների վճարների համար զեղչերի տարբերակներ առաջարկելու կամ դրանցից հրաժարվելու համար: Բժշկական ֆակուլտետի ուսանողների նկարագրեցին, թե ինչպես են կազմակերպում բժշկական տեղեկատվածան թերթիկների բաշխումը, առաջարկում արյան ճնշումը չափել և Երևանի այգիներում ու այլ հանրային վայրերում արյան արագ ստուգումներ կատարել: Դասավանդող կազմը և ուսանողները նաև մեջբերեցին ավելի լայն հասարակության համար մարզասրահի հասանելիությունը, ինչևիցե, դրա օգտագործման վերաբերյալ քիչ ապացույց կա: Խորհուրդը տեղեկացավ լաբորատորիաների և վերականգնողական կլինիկայի պլանների մասին, որոնք կառաջարկեին հասարակությանը մատուցվող ծառայություն:

ԻՀ-ից և քննարկումներից խորհուրդը տեղեկացավ, որ դասավանդող կազմը իր մասնագիտական գործունեությունները հանձն է առնում Համալսարանից դուրս համատեքստում: Մասնավորապես Բժշկական Ֆակուլտետից բժիշկներն աշխատում են ՀՀ-ի մի շարք կլինիկաներում և կարող են ղեկավարել հիվանդանոցի բաժանմունքներ: Իրավաբանության Ֆակուլտետից պրոֆեսորներն մասնավոր իրավաբանական ծառայություններ են մատուցում և կարող են մասնավոր կենտրոն ունենալ: Մինչդեռ այն արժեքը, որն այս անհատներն առաջարկում են, էական է, խորհրդի համար դժվար էր հասկանալ, թե ինչպես են այս գործունեություններն առնչվում հասարակությանը մատուցվող ծառայության համահունչ ռազմավարությանը և ըմբռնմանը:

Համալսարանի շրջանավարտները կարող են լինել հասարակության տարբեր շերտերում պահանջների սահմանման և հասարակությանը ծառայելու ուղիների զարգացման հզոր միջոց: Մինչդեռ խորհուրդը տեղեկացավ, որ ԵՀՀ-ն ունի շրջանավարտների թարմացված տվյալների բազա, հասարակության պահանջները սահմանելուն և բավարարելուն ուղղված դրա օգտագործման ապացույց չգտան: Շրջանավարտների հետ

քննարկումից պարզ էր, որ շրջանավարտների հետ կապերը թերի են և հիմնականում դրսևորվում են ԵՀՀ-ում մի քանի դասընթացներ դասավանդելու գործընթացում շրջանավարտների ներգրավվածությամբ: Խորհուրդն ոչ մի ապացույց չգտավ ամբողջ կյանքի ուսուցման հնարավորությունների համար, որոնք շրջանավարտներին ակտիվ կներգրավվեին Համալսարանի կյանքում և զարգացման մեջ:

Չնայած ԵՀՀ-ն մշակել է մի շարք հետազոտություններ, խորհուրդը չտեսավ հետազոտությունների ոչ մի ապացույց, որոնք ուղղված են ավելի լայն համայնքից բացահայտելու կանոնավոր և համակարգային հետադարձ կապ: Իրադարձությունների հետ կապված հետադարձ կապը շատ սահմանափակ է: Համայնքից չափելի արդյունքներով հետադարձ կապի բացակայությունը, որը հնարավորություն կտար ԵՀՀ-ին վերլուծել իր գործունեությունների ներգործությունը և նույնականացնել ապագա հնարավորությունները, թուլություն է:

ԵՀՀ-ն օգտագործում է ԶԼՄ-ի մի շարք տեսակներ՝ ներառյալ հեռուստատեսային ծրագրերը, ԵՀՀ Յութուբյան ալիքը, ռադիոն և սոցիալական կայքերը: Այս ուղիները հանրության հետ կապի արդյունավետ միջոցներ կարող են լինել՝ կրթելով հանրությանը և նպաստելով հասարակության ավելի ընդհանուր զարգացմանը: Այդուհանդերձ, խորհուրդը գտավ, որ ԵՀՀ-ում այս լրատվամիջոցների կիրառման հիմնական կենտրոնացումը տեղեկության տարածումը և նոր ուսանողների ներգրավելու նպատակով ԵՀՀ-ի համար գովազդ ապահովելն է:

Խորհուրդներ՝

- ԵՀՀ-ն պետք է ապահովի հասարակությանը մատուցվող ծառայության նշանակության և ռազմավարության պարզ առաջնորդություն, որպեսզի գործունեությունները հասարակության համար համակարգված և նպատակահարմար լինեն:
- ԵՀՀ-ն պետք է մշակի և կիրառի հաշվետվության միջոցներ, որպեսզի գնահատի, վերլուծի և վերահսկի համայնքին մատուցվող ծառայության գործունեությունները:
- ԵՀՀ-ն պետք է վերանայի իր կողմից օգտագործվող լրատվամիջոցները, որպեսզի կենտրոնանա հանրության հիմնահարցերի վրա և ապահովի իր մասնագիտություններին առնչվող տեղեկությամբ՝ արդյունքում կրթելով և զարգացնելով ավելի լայն հանրություն:
- ԵՀՀ-ն կարող է ցանկություն հայտնել քննարկել իր բժշկական անձնակազմից հանրության համար բժշկական ծառայություններ առաջարկելու հարցը:
- ԵՀՀ-ն կարող է ցանկություն հայտնել քննարկել ՀՀ-ում միջհամալսարանական գործունեութուններում դասավանդող կազմի ներգրավվածության մակարդակի բարձրացման հարցը:

2.Ուսումնական ծրագրերի օրինակի գնահատման արդյունքները

2.1. Ընդհանուր Բժշկության Ուսումնական Ծրագիրը (Բժիշկ)

ԵՀՀ-ում Ընդհանուր Բժշկության ուսումնական ծրագիրն առկա, 360 ԵԿՓՀ-ի 6-ամյա ծրագիր է, որը դասավանդվում է հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

Ըստ ինքնագնահատման հաշվետվության և աջակցող փաստաթղթերի՝ ծրագրի նպատակն է *<<նախապատրաստել բժշկության ոլորտում բարձրորակ և մրցունակ մասնագետներ՝ մասնագիտական փորձով, հմտություններով և կարողություններով՝ առողջապահության ոլորտում դրված ներկայիս ազգային և միջազգային պահանջներին համապատասխան, որոնք ի վիճակի կլինեն ստանալ հետբուհական կրթություն, ծառայել սոցիալական բարեկեցության համար, և կձգտեն հասնել պրոֆեսիոնալ մակարդակի բժշկության ընտրված ոլորտում՝ իրենց մշտական և շարունակական աշխատանքի շնորհիվ: Ավարտելուց հետո բժիշկը կարող է իրականացնել վարչական և կազմակերպչական գործունեություններ, իրավունք ունի դասավանդել միջին մակարդակի միջին մասնագիտական հաստատություններում: Որպես մասնագետ ԵՀՀ-ի շրջանավարտն ընտրվում է իրականացնելու անկախ բժշկական (ախտորոշիչ, բժշկական, կանխարգելիչ և այլն) գործունեություններ՝ միայն հետբուհական կրթություն ստանալուց հետո (կոնկրետ ոլորտում պրակտիկա կամ կլինիկական օրդինատուրա)>>:*

ԵՀՀ-ն համագործակցայի կապեր է հաստատել արտասահմանյան մասնագետների հետ և կանոնավոր կերպով հրավիրում է նրանց դասավանդել անգլերենով Բժշկության Ֆակուլտետի ուսանողության համար: Այցի պահին 14 օտարերկրյա ուսուցիչներ կային (Հավելված 5.4):

Դասավանդող կազմի ուսունողության թվի վերաբերյալ վիճակագրությունը տրամադրվում է հաշվետվության մեջ և ամփոփվում է ստորև՝ ինքնագահատման հաշվետվության հիման վրա:

2013թ-ից Ընդհանուր Բժշկության ուսումնական ծրագրում ԵՀՀ-ում ուսանողների դինամիկան՝

Ուսումնական ծրագրի անունը Մակարդակ /Բակալավր, Մագիստրատուրա, Հետբուհական/	Ուսանողների/Շրջանավարտների թիվը										Ընդունված Ուսանողներ					Վաղ հեռացողները/ դուրս մնացողները
	13/14		14/15		15/16		16/17		17/18		13/14	14/15	15/16	16/17	17/18	
	Շրջանավարտ	Ուսանող	Շրջանավարտ	Ուսանող	Շրջանավարտ	Ուսանող	Շրջանավարտ	Ուսանող	Շրջանավարտ	Ուսանող						
Ընդհանուր Բժշկություն *	114	682	123	476	101	668	129	608	126	620	245	226	222	286	380	29
Ատամնաբուժություն*	290	767	262	752	130	750	269	729	182	750	320	283	251	380	482	25

2013թ-ից Ընդհանուր Բժշկության ուսումնական ծրագրում դասավանդող և կրթական աջակցող կազմի զարգացումը՝

	13/14	14/15	15/16	16/17	17/18
Բժշկության Ֆակուլտետ Իգական Արական	41 33	35 19	29 27	29 27	47 24

Բժշկության Ֆակուլտետի համար նորակառույց լաբորատորիայի շենք կա Աբելյան 6 հասցեում, որը գործում է 2019թ-ից: 2018թ-ին Համալսարանը ձեռք բերեց երկու նոր շենք Ադոնցի 18/1 հասցեում: Այցելության ժամանակ այս շենքերը դեռևս նորոգվում և փոփոխությունների էին ենթարկվում, որպեսզի ծառայություն մատուցեին Բժշկության Ֆակուլտետին կցված կլինիկաներին: Բժշկության Ֆակուլտետի ուսանողներըն օգտագործում են 14 կլինիկաների, բժշկական կենտրոնների, հիվանդանոցների և գիտահետազոտական հաստատությունների, ինչպես նաև Հայաստանում ժամանակակից բժշկական սարքավորումներով զինված, գործող սենյակների և կաբինետների հարմարությունները:

2.1.1 Ուսման պլանավորումը և կառավարումը

-Ուսումնական ծրագրի (երի) նախագծումը և զարգացումը հաշվի է առնում ուսանողների և այլ շահագրգիռ կողմերի ակնկալիքները, ազգային ռազմավարությունները, օրենսդրությունը, ինչպես նաև կոնկրետ ոլորտում, միտումները, աշխատանքային շուկայի պահանջները: ՀՁՍ գործունեությունների մակարդակը և ծավալը բավարար է և աջակցում է ուսումնական ծրագրի (երի) մեկնարկին:

-Ուսումնական ծրագրի (երի), մոդուլների (ներառյալ դասընթացների) նպատակներն ու իրենց ուսուցման արդյունքները կոնկրետ և համահունչ են: Դասավանդման բովանդակությունն ու մեթոդները, գնահատման չափանիշները և մեթոդները նպաստում են, որ ուսանողները հասնել ուսուցման արդյունքներին և զարգացնեն իրենց գլխավոր կարողությունները: Ուսումնական ծրագրերը նպաստում են ստեղծարարության և ձեռներեցության, ինչպես նաև ընդհանուր այլ կարողությունների զարգացմանը:

-Նյութական և ֆինանսական ռեսուրսների ղեկավարումը, որն ապահովում է ուսումնական ծրագրի (երի) նախագծումը և կիրառումը, նպատակային, համակարգված և կայուն է: Նյութեր, գործիքներ ներառող ուսուցման միջավայրը և տեխնոլոգիաները նպաստում են, որ ուսանողները հասնեն իրենց ուսուցման արդյունքներին:

Ապացույց և Վերլուծություն

Ընդհանուր Բժշկության ծրագրի նպատակները պարզորեն նկարագրված են ուսումնական ծրագրի փաստաթղթում: Ծրագրի փաստաթղթերից պարզ է, որ ծրագիրը համապատասխանում է ԱՈԾ-ին, և որ ՀՀ ներկայիս օրենսդրության համապատասխան կանոնակարգերը հաշվի են առնվում:

ԵՀՀ-ն խիստ տեղեկացված է այն մարտահրավերների մասին, որոնց իրենք հանդիպում են՝ աշխատանքային շուկայի պահանջների հետ կապված: Հայաստանը հակված է ծերացող բնակչության խնդրին: Քանի որ ՀՀ-ում բժիշկների նշանակալից պահանջ կա, աշխատանքային շուկան բաց է շրջանավարտների համար: Նաև տարածաշրջանում բժիշկների պահանջ կա: Այսպիսով, հիմնականում Հնդկաստանից, Իրանից և Իրաքից ԵՀՀ-ում օտարերկրյա ուսանողների աճող թիվը կարող է ավարտելիս ապագայում աջակցել առողջապահությանը:

Ծրագիրը պարզ կառուցվածք ունի և բաղկացած է պարտադիր, կամընտրական դասընթացներից, ինչպես նաև պրակտիկաներից: Ուսուցման արդյունքեր պարզ սահմանված են: Ուսանողների աշխատանքային ծանրաբեռնվածությունը համապատասխան է: Ստեղծարարական և ձեռնարկատիրական կարողությունները ծրագրում մեծապես չեն դրսևորվում:

Խորհուրդը նշեց, որ կարևոր նշանակություն է տրվում ուսումնական ծրագրի որակի վերահսկմանը և մեծացմանը: Ինչևիցե, հետազոտական և զարգացման գործունեությունների մակարդակը մնում է ցածր, և ուսումնական պլանում հետազոտական հմտությունների դասավանդման և հետազոտական գործունեությունների ներառման ձևը բարելավման անհրաժեշտություն ունի:

Խորհուրդներ՝

- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն հետազոտական աշխատանքի համար ստեղծի միջավայր և մշակույթ:
- ԵՀՀ-ն պետք է հետագա քայլերի դիմի, որպեսզի հետազոտական հմտությունների դասավանդումը և հետազոտական գործունեությունները ներառի ուսումնական պլանում, ինչպես նաև պետք է հետազոտական աշխատանքի և դասավանդման միջև կապ ստեղծի:
- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն ակտիվ համագործակցություններ ստեղծի ազգային հետազոտական հաստատությունների հետ:

2.1.2 Ուսուցում, դասավանդում և գնահատում

-Ընդունելության պայմանները և կազմակերպումը երաշխավորում են կրթության և մոտիվացված ուսանողական մարմնին արդար մուտք: Ուսանողի՝ մասնագիտության ընտրությունը աջակցվում է:
-Ուսանողակենտրոն մոտեցում է օգտագործվում ուսման մեջ, որի նպատակն է, որ ուսանողներն իրենց ուսման և կարիերայի համար պատասխանատվություն հանձն առնեն, և որը որ նպաստում է գլխավոր կարողությունների զարգացմանը, ուսումնական ծրագրի ուսուցման արդյունքներին հասնելուն:
-Ուսանողի գնահատումը՝ ներառալ նախնական և փորձնական ուսուցման հավատարմագրման հաշվի առնումը, աջակցում է ուսանողներին և համապատասխանում ուսուցման արդյունքներին: Օբյեկտիվ և վստահելի գնահատումը երաշխավորված է:
-Գործնական աշխատանք և վերապատրաստում ներառող ուսման կազմակերպումը հիմնված է ուսանողներին առանձնահատկությունների և ուսման ձևերի վրա, օգնում է, որ ուսանողները հասնեն ուսուցման արդյունքներին: Հայաստանում և միջազգային մակարդակով շարժի հնարավորություններ են սահմանվել:
-Ուսանողներին մատուցվող աջակցման ծրագրերը առկա են և հասանելի ուսանողների համար: Ուսանողների անհատական զարգացումը և առաջընթացը վերահսկվում են և աջակցվում:
-Ուսումնական ծրագրի շրջանավարտները մրցունակ են իրենց գիտելիքի և հասարակական հմությունների տեսակետից թե՛ ազգային և թե՛ միջազգային մակարդակով:

Ապացույց և Վերլուծություն

Խորհուրդը մանրամասն տնտղեց փաստաթղթերը, դասավանդող կազմի և հայ ու միջազգային ուսանողների հետ քննարկումներ ունեցավ, ինչպես նաև դիտարկեց մի քանի դասերի: Դիտարկումներից և քննարկումներից պարզ էր, ոև դասավանդող կազմի և ուսանողների միջև հարաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի վրա: Ուսանողները գնահատում են դասավանդող կազմի հասանելիությունը և մոտիվացիան, ինչպես նաև իրենց մատուցվող աջակցությունը: Սա ստեղծում է համայնքային ուժեղ ոգի:
Ծրագիրն ամբողջովին ճանաչված է Հայաստանում, քանի որ բավարարում է համապատասխան պահանջները, և հայ ուսանողները հայտնեցին, որ տեղյակ են ծրագրի մասին: Միջազգային ուսանողները հայտնեցին, որ լսել են ԵՀՀ-ի մասին գովազդներից և սոցիալական լրատվական միջոցներից: Հաշվի առնելով միջազգային ուսանողների թվի աճը, ծրագրի առաջխաղացման համար օգտագործվող մոտեցումն արդյունավետ է:
Ուսանողների ընդունելությունը հիմնված է անձնական հարցազրույցների վրա: Ինչևիցե, ընդունելության նվազագույն ստանդարտները, գործընթացը, ինչպես նաև ուղղակիորեն ներգրավված բազմաթիվ վարչական միավորների և մարմինների դերը պարզ չէին խորհրդի համար:
Բժշկության Ֆակուլտետն որդեգրել է դասավանդման և ուսուցման նկատմամբ ուսանողակենտրոն մոտեցում, ինչպես որ օժանդակվումէ ԵՀՀ-ի կողմից: Ինչևիցե, խորհուրդը գտավ ուսանողների և դասավանդող կազմի միջև ուսանողակենտրոն մոտեցման նշանակության տարբեր ըմբռնումների շարք, ինչպես նաև թե ինչ ռազմավարություններ, դասավանդման մեթոդներ և ռեսուրսներ են այն ապահովում:

Ուսումնական ծրագրում գլխավոր կարողությունների զարգացմանը նպաստում է դասավանդման և ուսուցման ռեսուրսների լայն շրջանակը՝ ներառյալ 14 կլինիկաների, բժշկական կենտրոնների, հիվանդանոցների և գիտահետազոտական հաստատությունների մասնագետների հետ համագործակցությունը, գործող վիրահատարանների և կաբինետների ֆիզիկական ռեսուրսները, ինչպես նաև ընդհանուր ուսումնական ծրագրում զետեղված պրակտիկաները: Նորաստեղծ հմտություններ-նմանակման կենտրոնը հավելյալ աջակցություն է:

Ուսման ծրագրի ընթացքում ուսանողի ուսուցման գնահատումը պարզորեն սահմանված և թափանցիկ է ուսանողների համար: Տեղում միջոցներ կան, որոնք երաշխավորում են գնահատման վստահելի լինելը:

Համապատասխան աջակցմա ծառայություններ կան ուսանողների համար: Սրանք մեծապես հիմնված են վարչական կազմի հետ ոչ պաշտոնական հարաբերությունների վրա: Ուսանողներն իսկապես գնահատում են ադմինիստրացիայի սերտ կապը և հասանելիությունը: Ուսանողները հայտնեցին, որ իրենք գնահատում են այն ձևը, թե ինչպես են իրենց խնդիրներին և պահանջներին ուշադրություն դարձնում՝ ներառալ դասավանդող կազմի հետ մի քանի դժվար հարցերը: Ուսանողները հստակ էին ան հարցում, որ ԵՀՀ-ն փորձում է միշտ լուծել խնդիրները: Առկա է ուսանողներին իրենց վճարների հարցում օգնող ֆինանսական օժանդակությունը:

Ուսանողները միջազգային շարժի ներգրավվածության բազմաթիվ օրինակներ բերեցին: Խորհուրդը հաստատեց, որ այս շարժի մեծ մասը սահմանափակված է ուսանողի ծագման երկրում պրակտիկաների սահմանափակմամբ, օրինակ՝ Հնդկաստանում կամ էլ այն երկրում, ուր ուսանողներն ավարտելիս վերադառնում են:

Բժշկական ուսումնական ծրագրի շրջանավարտները մրցունակ են ազգային մակարդակով: Միջազգային մակարդակով իրենց մրցունակ լինելու և կարիերայի ուղիների վերաբերյալ տեղեկությունը, ինչնիցե, շատ սահմանափակ է: Հայաստանը լքող շրջանավարտների վերաբերյալ տեղեկության և տվյալների բացակայությունը նշանակում է, որ ԵՀՀ-ն բաց է թողնում ներկա ուսանողների և ուսումնական ծրագրի զարգացման շահի համար հետադարձ կապ ձեռք բերելու հնարավորությունը:

Գովասանք՝

Ուսուցիչների և ուսանողների շրջանում համայնքային տպավորիչ ոգի կա:

Խորհուրդներ՝

- Ընդունելության չափանիշները պետք է հանրության համար պարզ, թափանցիկ և հասանելի լինեն:
- Ուսանողակենտրոն մոտեցման գաղափարին պետք է նորից անդրադառնալ, որպեսզի հնարավոր լինի զարգացնել, տարածել և համահունչ ձևով գործի դնել դրա միատեսակ ըմբռնումը:
- ԵՀՀ-ն պետք է վերահսկի շրջանավարտների առաջընթացը և կարիերայի ուղիները, ինչպես նաև օգտագործի վերահսկման արդյունքները, որպեսզի մշակի ուսումնական ծրագիրը:
- Խորհուրդ է տրվում, որ Բժշկության Ֆակուլտետն աջակցի հմտությունների նմանակման կենտրոնի հետագա զարգացմանը՝ ի շահ բժշկական ուսումնական պլանին:

2.1.3 Դասավանդող կազմի զարգացումը, համագործակցությունը և միջազգանացումը

-Դասավանդումն իրականացվում է ուսանողների զարգացմանը նպաստող դասավանդող կազմի՝ մասնագիտության տեսակետից կարող անդամների բավարար թվաքանակով:

-Դասավանդող կազմն անհամապատասխանության դեպքում հետևում է ուսումնական էթիկայի սկզբունքներին, ինչպես նաև վարքագծի կանոններին:

-Դասավանդող կազմի անդամները մասնակցում են միջազգային շարժի ծրագրերին, որոնք խրախուսում են իրենց դասավանդման և ՀԶՍ գործունեությունների զարգացմանը, բուհի և հայ հասարակության՝ մշակութային տեսակետից բաց լինելուն:

-Ուսման և ՀԶՍ գործունեությունների, ուսանողների հետադարձ կապի արդյունավետությունը, վերահսկման արդյունավետությունը, դասավանդման և վերահսկման հմտությունների զարգացումը, միջազգային շարժը և մասնարկատիրական կամ աշխատանքային փորձը՝ բուհից դուրս կոնկրետ ոլորտում, հաշվի են առնվում՝ դասավանդող կազմի անդամի աշխատանքը գնահատելիս:

Ապացույց և Վերլուծություն

Ընդհանուր Բժշկության ծրագիրը դասավանդող կազմի ընդհանուր թիվը 87-ն է: Սա ներառում է 8 դոկտոր, 6 պրոֆեսոր, 36 թեկնածու, 9 դոցենտ և 41 օգնական: Փորձը բավարարում է ծրագրի պահանջներին: Ծրագրի ուսանող-ուսուցիչ հարաբերակցությունը 11:1-ն է: Ընդհանուր առմամբ սա ընդունելի է:

ԵՀՀ-ը միտված է իրականացնել թիրախային գործունեություն, որպեսզի երաշխավորի, որ դասավանդող կազմի մասնագիտական որակները համապատասխանում են Համալսարանի առաքելությանը և ուսումնական ծրագրի նպատակներին: Սրան հասնելու համար ղեկավարությունը վերահսկում է դասավանդող առարկայի համար դասավանդող կազմի հատկացումը, որպեսզի երաշխավորի, որ դասավանդող կազմն ունի համապատասխան գիտելիք, մասնագիտական կրթություն և հմտություններ:

Երաշխավորելու համար, որ ծրագիրն ունի դասավանդող կազմի անհրաժեշտ թիվ, որն ամբողջովին բավարարում է բարձրագույն կրթության և հետազոտական աշխատանքի օրակարգի պահանջները, ԵՀՀ-ն պետք է մեծացնի բարձրագույն ուսումնական աստիճաններով դասավանդող կազմի անդամների թիվը: Դոկտորանտուրայի չորս տեղ է նշանակվել Բժշկության Ֆակուլտետի համար 2019թ-ին: Սա ընդունող բաժին է: Գոյություն ունեցող դասավանդող կազմի կարիերայի զարգացման ծրագիրը պետք է հաստատվել, որպեսզի մեծացնի նրանց հմտությունները և երաշխավորի գործածելիությունը:

Ընդհանուր Բժշկության Ուսումնական Ծրագրի զարգացման համար պատասխանատու մասնագետների ուսումնական աստիճանը (Ուսումնական Ծրագրի 4-րդ Հավելվածի հիման վրա)՝

Ծրագրի զարգացման համար պատասխանատու մասնագետների ուսումնական աստիճան

Մասնագետների թիվը				
	ուսուցիչների ընդհանուր թիվը	դոկտորի աստիճանով ուսուցիչներ	ուսուցիչների ընդհանուր թիվը	Պրոֆեսորներ և դոցենտներ

Դասավանդող կազմի հետ քննարկումներից խորհուրդը գտավ, որ դասավանդող կազմի մեծամասնությանը չհաջողվեց տեսնել հետազոտական գործունեությունների շահը՝ փոխարենն արժևորելով իրենց մասնագիտական փորձի մակարդակը:

Դասավանդող կազմը տեղյակ է ուսումնական էթիկայի կարևորության մասին, ԵՀՀ-ն հրատարակել է Բարոյագիտության Կանոնները 2019թ-ին: Խորհուրդը գտավ անհամաձայնություն բարձրագույն ղեկավարության և դասավանդող կազմի ու ուսանողների կողմից արտաբերված կանոնների կիրառման գործընթացների միջև: Խորհուրդը նաև գտավ դասավանդող կազմի և ուսանողների օրինակներ, որոնք ուսումնական բարոյագիտության վերաբերյալ բավարար վերապատրաստում չէին անցել:

ANQA-ի կողմից հավատարմագրման վերջին գործընթացը և EKKA-ի կողմից ներկայիս հավատարմագրմանը նախապատրաստվելը հանգեցրեցին արտասահմանից այցելող դասախոսների թվի աճին, որոնք պետք է բերեն ժամանակակից տեսական և գործնական գիտելիք: Այցի ժամանակ 14 օտարերկրյա կամ այցելող դասավանդող կազմ կար, իսկ ԵՀՀ-ն պլանավորում է մեծացնել այս թիվը:

Գովասանք՝

- Արտասահմանից այցելող դասախոսներ են գրավվել, որպեսզի բերեն ժամանակակից տեսական և գործնական գիտելիք:

Խորհուրդներ՝

- ԵՀՀ-ն պետք է քայլեր ձեռնարկի, որպեսզի երաշխավորի, որ դասավանդող կազմը և ուսանողներն ամբողջովին տեղեկացված են ուսումնական բարոյագիտությանը կառչելու՝ ԵՀՀ-ի քաղաքականության

վերաբերյալ, և որ սա շարունակ կիրառվում է՝ մասնավորապես գրագողության երևույթը հասկանալու առնչությամբ:

- ԵՀՀ-ն պետք է երաշխավորի, որ դասավանդող կազմը ճանաչում է գիտական գործունեությունների արժեքը և ներգրավվում է դրանցում:
- ԵՀՀ-ն պետք է թիրախային գործունեություններ մշակելու և վերահսկելու նկատմամբ մշակի առողջ մոտեցում՝ ներառյալ երաշխիքը, որ դասավանդող կազմի հտությունները և մասնագիտական որակները համապատասխանում են ուսումնական ծրագրի առաքելությանը և նպատակներին, համապատասխանում են իրենց դասավանդման առարկաներին:

2.2 Իրավաբանության ուսումնական ծրագիր (Բակալավր)

Ընդհանուր տեղեկություն՝

Իրավաբանության բակալավրի ծրագիրն անվանապես տևում է չորս տարի: Ծրագրի մատուցումն ապահովվում է դասավանդող կազմի 22 անդամի միջոցով: Սրանցից ութը, որոնք իրավաբան չեն, ֆիլիսոփայության, սպորտի, տնտեսագիտության և այլ ոլորտում են հմտացած: *<<Իրավաբանություն Մասնագիտության Ուսումնական Ծրագրի Մոդուլային Արդյունքների Պլանավորում>>* և *<<Իրավաբանության Բակալավրի Ուսումնական Ծրագրի Մոդուլները/Դասընթացը, նրանց Նպատակները և Ուսուցման Արդյունքները>>* փաստաթղթերը ցույց են տալիս, որ ուսումնական պլանը ներառում է նշանակալից թվով իրավաբանությանը չառնչվող դասընթացներ՝ իրավաբանությանը կամ օրինականությանն առնչվող առարկաների վրա կենտրոնացված դասընթացների հետ մեկտեղ:

Խորհուրդը վերանայեց իրավաբանության ուսումնական ծրագրի ինքնագնահատումը, ծրագրի փաստաթղթերը, դասավանդող կազմի վերաբերյալ տեղեկությունը, հանդիպեց ուսանողներին, ուսուցիչներին, ծրագրի մշակողներին և Իրավաբանության Ֆակուլտետի Դեկանին, ինչպես նաև հետևեց դասախոսության:

2.2.1 Ուսման պլանավորումը և կառավարումը

Ուսումնական ծրագրի (երի) նախագծումը և զարգացումը հաշվի է առնում ուսանողների և այլ շահագրգիռ կողմերի ակնկալիքները, ազգային ռազմավարությունները, օրենսդրությունը, ինչպես նաև կոնկրետ ոլորտում միտումները, աշխատանքային շուկայի պահանջները: ՀՁՍ գործունեությունների մակարդակը և ծավալը բավարար է և աջակցում է ուսումնական ծրագրի (երի) մեկնարկին:

Ուսումնական ծրագրի (երի), մոդուլների (ներառյալ դասընթացների) նպատակներն ու իրենց ուսուցման արդյունքները կոնկրետ և համահունչ են: Դասավանդման բովանդակությունն ու մեթոդները, գնահատման չափանիշները և մեթոդները նպաստում են, որ ուսանողները հասնել ուսուցման արդյունքներին և զարգացնեն իրենց գլխավոր կարողությունները: Ուսումնական ծրագրերը նպաստում են ստեղծարարության և նորարարության, ինչպես նաև ընդհանուր այլ կարողությունների զարգացմանը:

Նյութական և ֆինանսական ռեսուրսների ղեկավարումը, որն ապահովում է ուսումնական ծրագրի (երի) նախագծումը և կիրառումը, նպատակային, համակարգված և կայուն է: Նյութեր, գործիքներ ներառող ուսուցման միջավայրը և տեխնոլոգիաները նպաստում են, որ ուսանողները հասնեն իրենց ուսուցման արդյունքներին:

Ապացույց և Վերլուծություն

Իրավաբանության բակալավրի ծրագիրը նախագծելիս և մշակելից հաշվի է առնվում ուսանողների, շրջանավարտների և այլ շահագրգիռ կողմերի ակնկալիքները: Ծրագրի մշակողները շեշտեցին ուսումնական պլանի և շուկայի պահանջների միջև եղած ուժեղ կապը: Ինչնիցե, խորհուրդը գտավ տվյալ աստիճանի ուսումնական պլան մշակելիս ազգային ռազմավարությունները և աշխատանքային շուկայի պահանջները հաշվի առնելու թերի ապացույց: Սա տարածվում է մինչև ծրագրի մասնագետները և ընտրական տարբերակները, որտեղ դեռևս միայն քրիական իրավունքի և քաղաքացիական իրավուքի մասնագիտացումներ կան: Ծրագրում ներառված մասնագիտացման սահմանափակ տարբերակներով համախմբված շահագրգիռ կողմերի սահմանափակ թիվը սահմանափակում է շրջանավարտների համար բաց աշխատանքային

ընտրությունները: Խորհուրդը եզրակացրեց, որ շրջանավարտի պրոֆիլը անհամապատասխան կերպով արտացոլվում է, որպեսզի երաշխավորի, որ շրջանավարտներն ունեն աշխատանքի լավագույն հեռանկարները:
Ծրագրի մշակման թիմի կողմից կատարվող նախապատրաստական աշխատանքին հետևելով՝ ուսումնական ծրագրի նպատակները, կառուցվածքը և բովանդակությունը՝ իրենց ուսուցման արդյունքներով անհատական դասընթացների և մոդուլների հետ մեկտեղ, վերանայվում և հաստատվում են Գիտական Խորհրդի կողմից:
Խորհուրդը չկարողացավ տարբերակել *մոդուլ* տերմինի պարզ նշանակությունը, որն երբեմն *դասընթաց* -ի փոխարեն է օգտագործվում: Խորհուրդը գտավ, որ ընդհանուր առմամբ ուսուցման արդյունքները կշահեին ծրագրում ավելի համահուն լինելուց:
Դասավանդման բովանդակությունը, մեթոդները և գնահատման չափանիշներն արտացոլում են ԵՀՀ-ի պահանջներն ու մոտեցումները: Ծրագիրը նպաստում է ստեղծարար և ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը: Ինչևիցե, խորհուրդը գտավ, որ պրակտիկայի հնարավորությունները շարքը օգուտ կքաղեր ավելի ընդարձակ և բազմազան լինելուց: Խորհուրդը նաև գտավ, որ մի քանի դասընթացների բովանդակությունը չի արտացոլում դասընթացի վերնագիրը: Օրինակ՝ Եվրոպական Իրավունքի դասընթացը չի կենտրոնանում իրավաբանության և դրա պրակտիկայի վրա այսօր, հիմնականում կենտրոնանում է դրա պատմության վրա:
Իրավաբանության Ֆակուլտետը մի քանի նախաձեռնություններ է հանձն առել՝ ԵՀՀ-ում տարբեր ֆակուլտետների հետ սիներգիաներ սահմանելու և միջդիսցիպլինարություն մշակելու համար, ինչը որ ցուցադրվում է՝ այլ ֆակուլտետների և արտաքին շահագրգիռ կողմերի հետ համատեղ կոնֆերանսներ կազմակերպելով:
Ուսանողնի աշխատանքայի ծանրաբեռնվածությունը համապատասխան է:
Խորհրդի կարծիքով ծրագրի մշակմանը և կայունությանը նպաստող նյութական և ֆինանսական ռեսուրսների կառավարումը բավարար չէ: Սա մասնավորապես հետազոտական աշխատանքին նպաստելու, իրավաբանության ոլորտում ժամանակակից և թարմ գրականության, ինչպես նաև դասավանդմանը նպաստող թվային տեխնոլոգիաների ապահովման դեպքն է:

Գովասանք՝

- Ծրագրի մշակումը հաշվի է առնում հիմնական շահագրգիռ կողմերի տեսակետները: Իրավաբանության Ֆակուլտետի և դրա շրջանավարտների միջև կապերը պահպանվում են, և շրջանավարտներն աջակցում են դրա կրթական գործունեություններին:
- Իրավաբանության Ֆակուլտետը ձգտում է խթանել սիներգիաներին և միջդիսցիպլինարությանը:

Խորհուրդներ՝

- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն ընդլայնի ուսումնական պլանի շրջանակը՝ ներառելով համեմատական իրավաբանություն և իրավաբաններին հանդիպող մարտահրավերները՝ օրինակ գլոբալացման և թվայնացման հետ կապված, որպեսզի երաշխավորի, որ ծրագիրը մրցունակ և կոսմոպոլիտական է:
- Ծրագիրը կշահեր *մոդուլ* և *դասընթաց* տերմինների պարզ նշանակության արտաբերումից և դրանց *շարունակ օգտագործումից:*
- Ծրագիրը կշահեր դասընթացների վերանայումից, որով կերաշխավորեր, որ բովանդակությունը տեղի է, իսկ դասընթացների վերնագիրն արտացոլում է բովանդակությունը:
- Խրախուսվում է, որ ԵՀՀ-ն նշի պրակտիկայի հնարավորությունների և նոր շահագրգիռ կողմերի հետ *համագործակցության ավելի բազմազան շրջանակ:*
- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն վերանայի *իրավաբանության ծրագրի ռեսուրսները, որպեսզի* երաշխավորի, որ ռեսուրսները և ուսուցման միջավայրը բավարարում են ժամանակակից իրավաբանական կրթության պահանջները:

[illegible] Ուսուցում, դասավանդում և գնահատում

[illegible]նելության պայմանները և կազմակերպում երաշխավորում են կրթության և մոտիվացված ուսանողական [illegible]նին արդար մուտք: Ուսանողի՝ մասնագիտության ընտրությունը աջակցվում է:

-Ուսանողակենտրոն մոտեցում է օգտագործվում ուսման մեջ, որի նպատակն է, որ ուսանողներն իրենց ուսման և կարիերայի համար պատասխանատվություն հանձն առնեն, և որը որ նպաստում է գլխավոր կարողությունների զարգացմանը, ուսումնական ծրագրի ուսուցման արդյունքներին հասնելուն:
-Ուսանողի գնահատումը՝ ներառալ նախնական և փորձնական ուսուցման հավատարմագրման հաշվի առնումը, աջակցում է ուսանողներին և համապատասխանում ուսուցման արդյունքներին: Օբյեկտիվ և փստահելի գնահատումը երաշխավորված է:
-Գործնական աշխատանք և վերապատրաստում ներառող ուսման կազմակերպումը հիմնված է ուսանողներին առանձնահատկությունների և ուսման ձևերի վրա, օգնում է, որ ուսանողները հասնեն ուսուցման արդյունքներին: Հայաստանում և միջազգային մակարդակով շարժի հնարավորություններ են սահմանվել:
-Ուսանողներին մատուցվող աջակցման ծրագրերը առկա են և հասանելի ուսանողների համար: Ուսանողների անհատական զարգացումը և առաջընթացը վերահսկվում են և աջակցվում:
-Ուսումնական ծրագրի շրջանավարտները մրցունակ են իրենց գիտելիքի և հասարակական հմությունների տեսակետից թե՛ ազգային և թե՛ միջազգային մակարդակով:

Ապացույց և Վերլուծություն

Չնայած պարզ էր, որ ուսանողների ընդունելությանն երաշխավորում է արդար մուտք, գործընթացի վերաբերյալ կառավարողների և ուսանողների կողմից հայտնած կարծիքներն անկայուն էին, և խորհուրդը ձեռք չբերեց ընդունելության նվազագույն սատնդարտների պարզ բացատրություն:
ԵՀՀ-ի ակնկալիքերին համահունչ՝ իրավաբանության ծրագիրը որդեգրում է դասավանդման և ուսուցման նպատմամբ ուսանողակենտրոն մոտեցում: Խորհրդի կողմից հանդիպած ուսանողները և դասավանդող կազմը տարբեր կարծիքներ հայտնեցին այն բանի շուրջ, թե մոտեցումն ինչի է հանգեցնում:
Մասնագիտական պրակտիկայով զբաղվող իրավաբաններն աջակցում են գլխավոր, առարկային առնչվող կարողությունների զարգացմամբ: Ուսանողներին տրամադրվում է ընկերությունների ցանկ, որոնք առաջարկում են պրակտիկաներ, որոնց ընթացքում ուսանողները զարգացնում են իրենց հմտություններն ու կարողությունները: Ուսանողները նաև ունեն իրավաբանական կլինիկայում հմտություններ զարգացնելու հնարավորություն, որն առաջարկում է օգնություն փախստականներին: Դասավանդող կազմի և ուսանողների միջև մասնագիտական հարաբերություններն ամուր են, իսկ ուսանողներն իսկապես գնահատում են Իրավաբանության Ֆակուլտետի թիմային էթոսը: Այս էթոսին նաև աջակցում է յուրաքանչյուր դասընթացի համար նշանակված ուսանողի օգնականի դերը, որը հանդես է գալիս որպես դասավանդող կազմի և ուսանողների միջև կապի կետ:
Գնահատումը հաշվի է առնում հանձնարարությունների, թեստերի և քննությունների ձևով անհատական աշխատանքը, ինչպես նաև ուսումնական գործընթացին մասնակցությունը:
Չնայած ԵՀՀ-ն միտված է շարժին՝ մասնավորապես միջազգային շարժին, դասավանդող կազմի կամ ուսանողների՝ Հայաստանում կամ միջազգային մակարդակով շարժին մասնակցելու համար Իրավաբանության Ֆակուլտետի կողմից ապահովվող հարավորությունների ցուցադրման ապացույց չկար:
Ուսանողների համար ուսմանը նպաստող ծառայությունները հիմնականում հիմնված են ադմինիստրացիայի հետ ոչ պաշտոնական կապերի վրա: Ուսանողներին հասանելի են հաստատության մասշտաբով նպաստող ծառայությունները՝ ներառյալ գրադարանը և մարզասրահը:
Իրավաբանության Ֆակուլտետի չափը հնարավոր է դարձնում դասավանդող կազմի և ուսանողների միջև ամենախակի և արդյունավետ հաղորդակցությունները և երաշխավորում է, որ ուսանողները ստանում են պատշաճ ուշադրություն՝ իրենց անհատական պահանջների հետ կապված: Աշխատանքի վերաբերյալ փիդբակագրությունը և շրջանավարտների հետ քննարկումները ցույց տվեցին, որ իրավաբանության ծրագրի շրջանավարտները ազգային մակարդակով մրցունակ են: Խորհուրդը Հայաստանից դուրս կարիերայի համապատասխան հնարավորությունների վերաբերյալ տեղեկության ոչ մի ապացույց չգտավ:
Իրավաբանության Ֆակուլտետն ունի տեղական, հայկական, իրավական տվյալների շտեմարան: Խորհուրդը ոչ մի ապացույց չտեսավ, որպեսզի ցույց տա, որ Իրավաբանության Ֆակուլտետը Lexis Nexis կամ Hein Online-ի նման ժամանակակից, միջազգային տվյալների շտեմարաններ մուտք ունի:
Եզրակացություն՝

- Դասավանդող կազմի և ուսանողների միջև համայնքային տպավորիչ ոգի կա:

Խորհուրդներ՝

- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն երաշխավորի, որ ընդունելության չափանիշները և դրանց դիմելու արդյունքները պարզ և թափանցիկ են շահագրգիռ բոլոր կողմերի համար:
- Ուսանողակենտրոն մոտեցման գաղափարը պետք է ավելի պարզ կերպով արտաբերվի և տարածվի, իսկ դրա կիրառումը պետք է կայուն և համահունչ լինի:
- Խորհուրդ է տրվում, որ ԵՀՀ-ն սահմանի ուսանողների շարժի՝ հատկապես միջազգային շարժի հնարավորությունները:

2.2.3 Դասավանդող կազմի զարգացումը, համագործակցությունը և միջազգանացումը

-Դասավանդումն իրականացվում է ուսանողների զարգացմանը նպաստող դասավանդող կազմի՝ մասնագիտության տեսակետից կարող անդամների բավարար թվաքանակով:
-Դասավանդող կազմն անհամապատասխանության դեպքում հետևում է ուսումնական էթիկայի սկզբունքներին, ինչպես նաև վարքագծի կանոններին:
-Դասավանդող կազմի անդամները մասնակցում են միջազգային շարժի ծրագրերին, որոնք խրախուսում են իրենց դասավանդման և ՀԶՍ գործունեությունների զարգացմանը, բուհի և հայ հասարակության՝ մշակութային տեսակետից բաց լինելուն:
-Ուսման և ՀԶՍ գործունեությունների, ուսանողների հետադարձ կապի արդյունավետությունը, վերահսկման արդյունավետությունը, դասավանդման և վերահսկման հմտությունների զարգացումը, միջազգային շարժը և ձեռնարկատիրական կամ աշխատանքային փորձը՝ բուհից դուրս կոնկրետ ոլորտում, հաշվի են առնվում՝ դասավանդող կազմի անդամի աշխատանքը գնահատելիս:

Ապացույց և Վերլուծություն

Դասավանդող կազմի ներկայիս թիվը և կազմը բավարար է ուսանողական փոքր խմբերի համար: Խորհուրդը դասվանդող կազմի պրոֆիլի երկարաժամկետ ապագայի պլանավորման հարցում հաջողության ապացույց չտեսավ: Օրինակ՝ Իրավաբանության Ֆակուլտետուկ դոկտորանտուայի ուսանողներ չկան: Որպես մարմին՝ դասավանդող կազմը մոտիվացված և համահունչ է: Ինչևիցե, դասավանդող կազմի կատարողականության չափանիշների արտաբերմանը և կիրառմանը բավարար չափով դարձվող ուշադրության ցուցադրման քիչ ապացույց կար, ինչպես նաև քիչ ապացույց կար այն բանի, որ դասավանդող կազմը համապատասխան կերպով ներգրավվում է որոշում կայացնելու գործընթացում, կամ էլ նրանց հետագա զարգացմանը նպաստող հետազոտական աշխատանքի ֆինանսավորում կա: Խորհուրդը հավանության է արժանացնում հետազոտական աշխատանքի միջազգային ֆինանսավորման համար դիմելու փորձերը, ինչպես որ ցուցադրվում է Jean Monnet դրամաշնորհի համար ներկայացվող դիմումների դեպքում: Ինչևիցե, խորհրդի կարծիքով շատ անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել դասավանդող կազմին՝ դրամաշնորհի համար դիմումների ներկայացման ժամանակ պահանջվող գիտելիքի և գործնական հմտությունների ապահովման, ինչպես նաև միջազգային համագործակցության զարգացման հարցում:
Դասավանդող կազմը ցույց տվեց, որ տեղեկացված է ուսումնական էթիկայի սկզբունքների վերաբերյալ: Այն աջակցում է ուսանողներին, երբ ուսումնական բարոյագիտությանն առնչող խնդիրներ, բողոքներ կամ առաջարկություններ են լինում, աջակցում է նաև դրանց գործի դրման հարցում:
ԻՀ-ն վերջին երեք տարվա Իրավաբանության Ֆակուլտետից հետազոտական աշխատանքների հրատարակումների թվի վերաբերյալ տվյալներ ապահովեց, չնայած որ մանրամասն վերլուծությունը բացակայում է: Դասավանդող կազմի հետազոտական գործունեությունները գրեթե ամբողջովին հիմնված են Հայաստանում, և խորհուրդը միջազգային հետազոտական գործունեության ոչ մի ապացույց չգտավ: Նույն կերպ խորհուրդը դասավանդող կազմի միջազգային շարժի ապացույց չտեսավ:
Իրավաբանության Ֆակուլտետը չկարողացավ տրամադրել դասավանդող կազմի համար օգտագործվող գնահատման չափանիշների ամբողջական պատկերը: Խորհուրդը հանգեց այն տեսակետին, որ սրանք

համապարփակ չեն և ուղղակիորեն հաշվի չեն առնում հետազոտական աշխատանքը և միջազգային շարժը:

Գնահատանք՝

- Դասավանդող կազմը բավարար թվով է, ինչպես նաև ունի պահանջվող տեսական և գործնական գիտելիքն ու հմտությունները:
- Դասավանդող կազն ունի բարձր մոտիվացիա:

Ուղղուրդներ՝

- Խորհուրդ է տրվում, որ Իրավաբանության Ֆակուլտետը մշակի դասվանդող կազմի մարմնի զարգացման կայունության պլան, որը պետք է ներառի դոկտորանտուրայի ուսանողների տեղեր:
- Իրավաբանության Ֆակուլտետը պետք է մշակի միջազգային համագործակցության և հետազոտական աշխատանքի ռազմավարություն, որը ներառում է դրամաշնորհի համար դիմումների ներկայացման հարցում դասավանդող կազմի հմտությունների զարգացում:
- Դասավանդող կազմի կատարողականության չափանիշները պետք է ներառեն միջազգային և հետազոտական գործունեություններ, և այս չափանիշները պետք է հաշվի առնվեն՝ թափուր պաշտոնի համար դիմելիս:
- Խրախուսվում է, որ Իրավաբանության Ֆակուլտետը դասավանդող կազմի թվային հմտությունների բարելավման քաղաքականություն մշակի:

2.3. Կառավարման ուսումնական ծրագիր (Մագիստրոս)

ԵԿՓՀ-ն առաջարում է Կառավարման մասնագիտության մագիստրոսի աստիճան, որը հիմնված է Մասնագիտության Ֆակուլտետում: Ծրագիրը մատուցվում է չորս կիսամյակում՝ սովորաբար երկու տարվա ընթացքում: Ծրագիրը հաջող ավարտելու համար ուսանողից պահանջվում է, որ ձեռք բերի 120 ԵԿՓՀ ՄՈՇ 7-րդ մակարդակում: Ծրագիրն առկա է և հայերենով է դասավանդվում:

Ծրագրի հիմնական նպատակն է <<*նախապատրաստել մասնագետների, որոնք կբավարարեն աշխատանքային շուկայի պահանջները, զարգացրած կլինեն անձնական որակներ, ինչպես նաև մասնագիտական և ընդհանուր կարողություններ*>>: Հիմնական նպատակներն են <<*մագիստրոսի համապարփակ զարգացման նպաստավորման ընդհանուր կարողությունների ձևավորումը, ընդհանուր մասնագիտական, ինչպես նաև տվյալ գրագայում պահանջվող կարողությունների ձևավորումը՝ հաշվի առնելով տվյալ մասնագիտության առանձնահատկությունները և աշխատանքային շուկայի պահանջները*>>:

ԵԿՓՀ-ում ընդունված և ավարտող ուսանողների թվերի վիճակագրությունը նշված է հետևյալ կերպ՝

Ուսումնական տարի անունը Ուսանողական Բակալավրիատ, Մագիստրատուրա, Ասպիրանտուրա/	Ուսանողների/Շրջանավարտների թիվը										Ընդունված Ուսանողներ					Վաղ հեռացողները/դուրս մնացողները
	13/14		14/15		15/16		16/17		17/18		13/14	14/15	15/16	16/17	17/18	
	Շրջանավարտ	Ուսանող	Շրջանավարտ	Ուսանող	Շրջանավարտ	Ուսանող	Շրջանավարտ	Ուսանող	Շրջանավարտ	Ուսանող						
Կառավարում մագիստրոս	15	22	11	22	7	18	6	22	5	25	11	9	5	11	23	9

ԵԿՓՀ-ն նաև հետևյալ կերպ տրամադրում է տվյալներ՝ ծրագրի այն ուսանողների վերաբերյալ, որոնք մնացել են նույն կուրսում՝

Ուսումնական տարի	2014-2015թթ.	2015-2016 թթ.	2016-2017 թթ.	2017-2018 թթ.	2018-2019 թթ.
Դուրս մնացած ուսանողներ	18%	28%	15%	35%	12%

Ծրագրի թիմի անդամները ՀՀ ԱՌնտրի Պալատի հետ համագործակցությունների մեջ է:

2.3.1 Ուսման պլանավորումը և կառավարումը

-Ուսումնական ծրագրի (երի) նախագծումը և զարգացումը հաշվի է առնում ուսանողների և այլ շահագրգիռ կողմերի ակնկալիքները, ազգային ռազմավարությունները, օրենսդրությունը, ինչպես նաև կոնկրետ ոլորտում, միտումները, աշխատանքային շուկայի պահանջները: ՀՁՍ գործունեությունների մակարդակը և ծավալը բավարար է և աջակցում է ուսումնական ծրագրի (երի) մեկնարկին:

-Ուսումնական ծրագրի (երի), մոդուլների (ներառյալ դասընթացների) նպատակներն ու իրենց ուսուցման արդյունքները կոնկրետ և համահունչ են: Դասավանդման բովանդակությունն ու մեթոդները, գնահատման չափանիշները և մեթոդները նպաստում են, որ ուսանողները հասնել ուսուցման արդյունքներին և զարգացնեն իրենց գլխավոր կարողությունները: Ուսումնական ծրագրերը նպաստում են ստեղծարարության և ձեռներեցության, ինչպես նաև ընդհանուր այլ կարողությունների զարգացմանը:

-Նյութական և ֆինանսական ռեսուրսների ղեկավարումը, որն ապահովում է ուսումնական ծրագրի (երի) նախագծումը և կիրառումը, նպատակային, համակարգված և կայուն է: Նյութեր, գործիքներ ներառող ուսուցման միջավայրը և տեխնոլոգիաները նպաստում են, որ ուսանողները հասնեն իրենց ուսուցման արդյունքներին:

Ապացույց և Վերլուծություն

Ծրագրի փաստաթուղթը ապահովում է ծրագրի ուսուցման արդյունքները և նշում է մասնագիտական և փոխանցելի կարողությունները, որոնք շրջանավարտները պետք է ձեռք բերեն: Ծրագրի փաստաթուղթը նաև մի շարք աշխատանքային հնարավորություններ է ստեղծում, որոնք պետք է բաց լինեն շրջանավարտի համար: Ուսումնական պլանն ունի երեք սյունակներ՝ պարտադիր դասընթացներ, որոնք կարող են պահանջվել Հայաստանի Հանրապետության կամ ԵՀՀ-ի կողմից, գիտահետազոտական աշխատանք և մագիստրոսական թեզին նախապատրաստում, ինչպես նաև վերջնական ատեստավորում, այն է՝ թեզի պաշտպանություն: Յուրաքանչյուր սյունակի ուսանողական աշխատանքային ծանրաբեռնվածությունը և կրեդիտների հաշվարկը պարզորեն ներկայացված են ծրագրի փաստաթղթում: Ուսանողի ուսուցման վերացական ժամերը և ներկայության ժամերը սյունակում տրված են յուրաքանչյուր դասընթացի համար: Ինչևիցե, *Կառավարման Ուսումնական Ծրագիր* փաստաթղթում ուսումնական պլանի նկարագրությունը չի ներառում դասընթացներին տրվող կրեդիտների թիվը:

Ծրագիրը մշակվել է ֆակուլտետում քննարկումների, շահագրգիռ կողմերի հետ քննարկումների միջոցով՝ ներառյալ ուսանողները և գործատուները՝ ինչպես նաև համեմատական վերլուծված հաստատություններին անդրադառնալով: Խորհուրդը տեղեկացավ, որ ծրագրի թիմը համեմատական վերլուծության նպատակներով օգտագործում է երկու հաստատություն ՀՀ-ում և մեկը Ռուսաստանում:

Ուսուցման արդյունքները ներառված են դասընթացի նկարագրություններում: Ինչևիցե, ուսանողների և դասավանդող կազմի հետ քննարկումներից ձեռք բերված ապացույցը ցույց չտվեց, որ ուսումնական արդյունքներն ակտիվորեն օգտագործվում են՝ ծրագիրը դասավանդելիս: Օրինակ՝ դասավանդող կազմը չկարողացավ հաշիվ տալ, թե ինչպես են ուսուցման արդյունքներն արտացոլում մարտահրավերների աճը: Ուսուցման արդյունքները բացահայտ կերպով կապված չեն գնահատմանը, և ուսանողները տեղյակ չէին ուսուցման արդյունքներից, տեղյակ էին միայն դասընթացի բովանդակությունից: Ընդհանուր առմամբ ծրագիրը կշահեր ուսուցման արդյունքներից, որոնք ավելի կոնկրետ են դասավանդվող կարողությունների մակարդակում, ունեն ավելի պարզ արտահայտում և ավելի առանձնահատուկ են դասընթացի մակարդակում, ավելի լավ են արտաբերվում և հաղորդվում ուսանողներին:

Դասընթացների հաջորդականությունը մեծապես տեղին է: Կամընտրական դասընթացները և մասնավորապես թեզը հնարավոր են դարձնում, որ ուսանողները կենտրոնանան իրենց համար հատուկ հետաքրքրություն ներկայացնող ոլորտների վրա: Ծրագիրը բաց է կառավարմանը չառնչվող բակալավրի աստիճանով ուսանողների համար: Բոլոր ուսանողները հետևում են նույն դասընթացներին: Սա նշանակում է, որ համապատասխան բակալավրի աստիճանով ուսանողները կարող են տեղեկացված լինել կառավարման հիմնական ասպեկտներից, որոնք 7-րդ մակարդակում չեն: Սա կարող է նաև սահմանափակել ուսանողների ընդհանուր ձեռքբերումները: ԵՀՀ-ն կարող է մտածել ոչ հարակից աստիճաններով ընդունվողների հիմքի կամ կապող դասընթացի մասին, որպեսզի մագիստրատուրայի ծրագիրն ավելի լավ կենտրոնանա 7-րդ մակարդակի ուսուցման վրա:

Ծրագրի ընդունելությունը նախատեսված է *<<ԵՀՀ-ի Մագիստրատուրայի Ծրագիր Ընդունվելու Կանոնակարգով>>:* Բոլոր դիմորդները պետք է ունենան բակալավրի աստիճան: Բոլոր ուսանողները հարցազրույց են անցնում:
Պարզ գործընթաց կա, որը հնարավոր է դարձնում, որ ուսանողները փոխադրվեն այդ ծրագիր, որն էլ արտացոլում է ԵՀՀ-ի կանոնակարգը և ՀՀ-ի կանոնակարգերը: Դասավանդող կազմը չկարողացավ հիշել մագիստրատուրայի կառավարման ծրագիր ուսանողների տեղափոխման որևէ դեպք:
Խորհուրդը ուսումնասիրեց ուսանողների թիվը, որը վերջին հինգ տարում նշանակալից կերպով տատանվել է: Խորհուրդը տեղեկացավ, որ ֆակուլտետը թիրախ չունի: Դասավանդող կազմը տեղյակ չէր դասընթացի դասավանդման համար պահանջվող ուսանողների նվազագույն թվից: Առաջարկվող թիվը ներառում էր չորս կամ հինգ ուսանող:
Խորհուրդներ՝

- ԵՀՀ-ն պետք է նորից վերանայի ուսուցման արդյունքները և զարգացնի դրանք, որպեսզի դրանք կոնկրետ լինեն դասընթացի մակարդակում և ցույց տան 7-րդ մակարդակին համապատասխան մարտահրավերների առաջադեմ մակարդակը:
- ԵՀՀ-ն պետք է քննարկի, թե ինչպես են ուսուցման արդյունքները կարողանում ակտիվ կերպով տեղեկացնել ուսումնական պլանի մատուցման մասին և երաշխավորել, որ ուսանողները թե՛ տեղեկացված են ուսուցման արդյունքներից և թե՛ հասկանում են դրանք, ինչպես նաև ինչպես են դրանք տեղեկացնում ծրագրի նախագծի և մատուցման մասին:
- Խրախուսվում է, որ ԵՀՀ-ն ներառի ծրագրի փաստաթղթում ներառված յուրաքանչյուր ծրագրին հատկացված կրեդիտների թիվը:
- Խրախուսվում է, որ ԵՀՀ-ն քննարկի կառավարման ոլորտին չառնչվող ուսանողների համար կառուցող դասընթացի ապահովումը:

2.3.2 Ուսուցում, դասավանդում և գնահատում

-Ընդունելության պայմանները և կազմակերպումը երաշխավորում են կրթության և մոտիվացված ուսանողական մարմնին արդար մուտք: Ուսանողի՝ մասնագիտության ընտրությունը աջակցվում է:
-Ուսանողակենտրոն մոտեցում է օգտագործվում ուսման մեջ, որի նպատակն է, որ ուսանողներն իրենց ուսման և կարիերայի համար պատասխանատվություն հանձն առնեն, և որը որ նպաստում է գլխավոր կարողությունների զարգացմանը, ուսումնական ծրագրի ուսուցման արդյունքներին հասնելուն:
-Ուսանողի գնահատումը՝ ներառալ նախնական և փորձնական ուսուցման հավատարմագրման հաշվի առնումը, աջակցում է ուսանողներին և համապատասխանում ուսուցման արդյունքներին: Օբյեկտիվ և վստահելի գնահատումը երաշխավորված է:
-Գործնական աշխատանք և վերապատրաստում ներառող ուսման կազմակերպումը հիմնված է ուսանողներին առանձնահատկությունների և ուսման ձևերի վրա, օգնում է, որ ուսանողները հասնեն ուսուցման արդյունքներին: Հայաստանում և միջազգային մակարդակով շարժի հնարավորություններ են սահմանվել:
-Ուսանողներին մատուցվող աջակցման ծրագրերը առկա են և հասանելի ուսանողների համար: Ուսանողների անհատական զարգացումը և առաջընթացը վերահսկվում են և աջակցվում:
-Ուսումնական ծրագրի շրջանավարտները մրցունակ են իրենց գիտելիքի և հասարակական հմտությունների տեսակետից թե՛ ազգային և թե՛ միջազգային մակարդակով:

Ապացույց և Վերլուծություն
Խորհրդի կողմից հանդիպած ուսանողները վստահ էին, որ ամբողջական տեղեկություն ունեն ծրագրի վերաբերյալ, որպեսզի ներկայացնեն իրենց դիմումը, և որ դիմելու և ընդունելության ընդհանուր գործընթացը պարզ ու արդար է:
ԵՀՀ ակնկալիքներին համահունչ՝ կառավարման ծրագրի նպատակն է ներմուծել դասավանդման և ուսուցման նկատմամբ ուսանողակենտրոն մոտեցում: Դասավանդող կազմը տեղյակ էր մոտեցման մասին և մոտեցմանն առնչվող մի քանի վերապատրաստման դասընթացների էր մասնակցել: Ինչնիցե, մոտեցման նրանց ըմբռնումը

սահմանափակ էր: Այդուհանդերձ, դասավանդող կազմի անդամները կարող էին առաջարկել մի քանի ռազմավարության մի քանի օրինակ, որոնք օգտագործում էին, որպեսզի քաջալերեն ուսանողի մասնակցությունը և անդրադարձը՝ ներառյալ քննարկումները, դասախոսություններում փոխազդեցությունը, գործերի ապահովումը, ուսանողներին խնդրելը, որ գործին լուծումներ տան: Խորհուրդը նաև տեղեկացավ, որ դասավանդումը գրավում է ուսանողների ուշադրությունը որպես ապագա կառավարիչներ իրենց դերի նկատմամբ:

Խորհուրդը դասավանդող կազմի հետ ցանկացավ պարզել, թե արդյոք կա տարբերություն բակալավրի և մագիստրոսի մակարդակների դասավանդման միջև: Դասավանդող կազմի կարծիքով դժվար էր նշել դասավանդման նկատմամբ մոտեցումներում որևէ տարբերություն՝ ներառյալ դրված հանձնարարությունների մարտահրավերը: Ուսանողները մեծապես գնահատում և արժևորում էին իրենց մատուցվող դասվանդումը:

Գնահատումը կատարվում է՝ ըստ ԵՀՀ համապատասխան կանոնակարգերի (*Ուսանողների Ուսումնական Արդյունքների Ստուգման և Գնահատման Կանոնակարգ և ԵՀՀ ուսանողների Վերջնական Ատեստավորման Կանոնակարգ):* Գնահատականները կուտակվում են գնահատման հանձնարարությունների և գործունեության վերջնական գնահատականներից: Սրանք ներառում են դասերին, քննություններին մասնակցությունը, ուսանողների անհատական և ստեղծարար աշխատանքները: Գնահատման չափանիշները շեշտում են նյութի ըմբռնման մակարդակը, քան թե բացահայտորեն ուսուցման արդյունքներին կապվածությունը: Ոչ դասավանդող կազմը և ոչ էլ ուսանողները, որոնց խորհուրդը հանդիպեց, չկարողացան գնահատման և ուսուցման արդյունքների միջև կապի պարզ և կայուն ըմբռնումը տալ: Ուսանողները հստակ գիտեին, թե ինչի հիման վրա են գնահատվում, ինչ գնահատման հանձնարարություն կլինի, ինչ նյութ է անհրաժեշտ, որ յուրացնեն: Նրանք նաև տեղեկացված էին գնահատականների կուտակումների ձևից, գիտեին, որ ներկայությունը և մասնակցությունը իրենց գնահատման մասն էին կազմում: Դասավանդող կազմի հետ էլ-կապով ուսանողի մասնակցության մակարդակի որոշման օրինակ է տրվել: Ներկայության և մասնակցության որոշման հետ կապված կայունություն չկար, և դասավանդող կազմը համաձայնեց, որ ներկայությունը և մասնակցությունը ուսուցման արդյունք չեն կազմում:

Թեզերի փոքր օրինակի մանրակրկիտ ուսումնասիրությունը հետևողականորեն ցույց չտվեց մագիստրոսի ծրագրի ձեռքբերման համապատասխան մակարդակ:

Մինչդեռ ուսանողները և դասավանդող կազմը տեղյակ էին գրագողությունից և ուսումնական սխալ վարքից, խորհուրդը չլսեց ոչ մի պարզ ըմբռնում, ոչ էլ տեղյակ էին տույժերից, և թե ինչ կլինի, եթե ուսումնական սխալ վարքի դեպքը նշվի:

Մագիստրոսի ծրագրի ուսանողները կարող են աշխատել իրենց ուսման հետ մեկտեղ: ԵՀՀ-ի՝ դրանց հասանելիության ապահովման ճկունությունը մեծապես գնահատվում էր ուսանողության կողմից: Ճեռանկարային ուսանողն օրինակ բերեց, թե ինչպես ԵՀՀ-ն կհարմարեցներ դեկրետը:

Մագիստրոսի ծրագիրը ներառում է պրակտիկա, որը կարելի է անցնել ուսանողի աշխատանքային վայրում, եթե ունեն այդպիսին կամ էլ կարող են նշել այլ վայրեր: Դասավանդող կազմը լավ զբաղվում է այդ վայրերի կազմակերպմամբ և աջակցմամբ, որոնց համար պարզ չափանիշներ կան:

Ծրագրի մատուցմանը նպաստող հիմնական ուսուցման ռեսուրսները մեջբերված էին որպես էլ-փոստային հաղորդագրություններով դասավանդող կազմի կողմից ապահովվող նյութեր և գրականություն: ԵՀՀ-ի գրադարանը կառավարման ոլորտում միայն շատ սահմանափակ քանակության գրականություն ուներ, ինչ էլ բավարար չէր մի քանի մասնագիտացումներին աջակցելու համար: Դասավանդող կազմը տեղեկացրեց խորհրդին, որ հնարավորություն կա, որ ուսանողներն օգտվեն ՄակՄիլան Գրախանութից, ծանոթանան մեծածավալ գրականությանը և նպաստեն դրանց իրենց հասանելիությանը: ՄակՄիլան Գրախանութը թույլ է տալիս օգտվել գրքերի խանութում՝ առանց դրանք գնելու պահանջի: Դասավանդող կազմը նաև հայտնեց, որ եթե համապատասխան գրականությունը հասանելի լինի օտար լեզվով, նրանք այն հայերեն կթարգմանեն ուսանողների համար:

Գովասանք՝

- Աշխատանքային պարտականությունները ներառող ուսանողի անձնական հանգամանքները հաշվի առնելու՝ ծրագրի կազմակերպման նկատմամբ ճկուն մոտեցումը:

- Ուսանողների պահանջներին ծրագրի համապատասխանությունը, ինչպես նաև ընտրական տարբերակների և իրենց մագիստրոսական ծրագրի թեմայի միջոցով ծրագիրը համարեցնելու հնարավորությունը:
- Դասավանդող կազմի առկայությունը, հասանելիությունը և առաջարկվող աջակցությունը՝ ներառյալ հանձնարարությունների վերաբերյալ հետադարձ կապը:
- Պրակտիկաների կազմակերպումը և աջակցումը:

Խորհուրդներ՝

- Ծրագրի գնահատման չափանիշները պետք է պարզ և բացահայտ կերպով համապատասխանեն ուսուցման արդյունքներին, իսկ գնահատման հանձնարարությունները պետք է նշեն, թե ուսուցման որ արդյունքներին են անդրադառնում:
- Գնահատման չափանիշները պետք է մանրամասն վերանայվեն՝ ուսուցման արդյունքների հետ մեկտեղ, որպեսզի երաշխավորվի, որ արտացոլում են 7-րդ մակարդակի ուսուցումը:
- Ներկայության և մասնակցության համար գնահատականների շնորհումը պետք է դադարեցվի:

2.3.3 Դասավանդող կազմի զարգացումը, համագործակցությունը և միջազգանացումը

-Դասավանդումն իրականացվում է ուսանողների զարգացմանը նպաստող դասավանդող կազմի՝ մասնագիտության տեսակետից կարող անդամների բավարար թվաքանակով:

-Դասավանդող կազմն անհամապատասխանության դեպքում հետևում է ուսումնական էթիկայի սկզբունքներին, ինչպես նաև վարքագծի կանոններին:

-Դասավանդող կազմի անդամները մասնակցում են միջազգային շարժի ծրագրերին, որոնք խրախուսում են իրենց դասավանդման և ՀՁՍ գործունեությունների զարգացմանը, բուհի և հայ հասարակության՝ մշակութային տեսակետից բաց լինելուն:

-Ուսման և ՀՁՍ գործունեությունների, ուսանողների հետադարձ կապի արդյունավետությունը, վերահսկման արդյունավետությունը, դասավանդման և վերահսկման հմտությունների զարգացումը, միջազգային շարժը և ձեռնարկատիրական կամ աշխատանքային փորձը՝ բուհից դուրս կոնկրետ ոլորտում, հաշվի են առնվում՝ դասավանդող կազմի անդամի աշխատանքը գնահատելիս:

Ապացույց և Վերլուծություն

Ըստ ԻՀ՝ դասավանդող կազմի 8 անդամ է ներգրավված մագիստրոսի կառավարման ծրագրի դասավանդման գործում: Նրանցից ութն ունի պրոֆեսորի կոչում, վեցը տնտեսագետներ են, մեկը՝ փիլիսոփա, ութերորդը լեզվի (ֆրանսերեն և անգլերեն) ուսուցիչ է: Տարբեր փաստաթղթերով ծրագրին նշանակված դասավանդող կազմի անդամների թիվն, ինչնիցե, հստակ չէ:

Դասավանդող կազմի ցանկացած տվյալ անդամ կարող է աջակցել մինչև երեք տարբեր առարկայի կամ դասընթացի: Դասընթացները, որոնց իրենք նշանակված են, որպեսզի դասավանդեն, արտացոլում են իրենց մասնավոր մասնագիտացումը և մասնագիտացման ոլորտները: Խորհուրդը տեղեկացավ, որ ուսանողների խմբաքանակի մեծացումը կամ դասավանդող կազմի անդամի բացակայությունը դասավանդող կազմի հավելյալ անդամի նշանակման է հանգեցնում:

Դասավանդող կազմի անդամների նշանակումները կատարվում են չափանիշների ցանկին դեմ, որոնք պարզորեն արտաբերված են:

Դասավանդող կազմի անդամների թիվը, ոլորտը և մասնագիտացումը համապատասխան է ծրագրի դասավանդման համար:

Ըստ ԻՀ-ի մագիստրոսի ծրագրի վերաբերյալ դասավանդող կազմը հրատարակել է 3 կրթական ձեռնարկ, մեկ դասագիրք, վարժությունների հավաքածու, 4 մենագրություն, 38 գիտական հոդված, որոնցից 18-ը տպագրվել է միջազգային ամսագրերում և ներկայացվել կոնֆերանսներում: Ֆակուլտետի մակարդակով դասավանդող կազմի հետազոտական աշխատանքում ուղղության տրման ռազմավարության ապացույց չկար:

Ուսանողներին ցուցումներ են տրվում, թե ինչպես կատարել հետազոտական աշխատանք իրենց պրակտիկայի ընթացքում: Որոշակի օգնության տրամադրումը կատարվում է՝ նրանց այս հետազոտական աշխատանքի համար համապատասխան հմտություններ դասավանդելով: Դասավանդող կազմը չկարողացավ նշել, թե ինչպես են հետազոտական աշխատանքը և դասավանդումը կապակցված, չկարողացավ բերել կոնկրետ

օրինակներ, թե ինչպես է իրենց հետազոտական աշխատանքը նպաստում ուսումնական պլանին: ԵՀՀ-ն դասավանդող կազմի անդամի հետ համատեղ ներկայացմամբ ուսանողի ներգրավվածության օրինակ բերեց: Ինչևիցե, սա մեկուսացված օրինակ էր:
Միջազգային շարժը նշված է որպես նպատակ ծրագրի համար: Այցի ժամանակ ծրագրում միջազգային դասավանդող կազմի ներգրավվածություն չկար, կար աննշան ապացույց, որ ԵՀՀ-ն մասնակցել է միջազգային շարժին՝ բացի մի քանի կոնֆերանսային ներկայացումները: Ծրագրում չկան միջազգային ուսանողների, ոչ էլ որևէ ապացույց, որ հայ ուսանողները մասնակցել է որևէ միջազգային շարժի ծրագրին: Լեզվի մակարդակը և անձնական հանգամանքները մեջբերված էին որպես սահմանափակող գործոններ:

Գովասանք՝

Ծրագրի դասավանդման համար դասավանդող կազմի փորձի բավարար շրջանակ և մակարդակ կա:

Դասավանդող կազմը պարզ կերպով պարտավորված է ուսանողներին օգնել իրենց ուսուցման հարցում:

Խորհուրդներ՝

ԵՀՀ-ն պետք է հետազոտական աշխատանքի համար ռազմավարություն մշակի բաժնի մակարդակով, որը պետք է ներառի հետազոտական աշխատանքի վրա հիմնված դասավանդում և ուսուցում:

ԵՀՀ-ն պետք է ուսումնասիրի ծրագրի միջազգային մակարդակի մշակման ձևերը, որպեսզի մեծացվի դրա համապատասխանությունը և ապահովվի ավելի մրցակցային առավելություն:

Նոտարի պաշտոնական գործողությունների գրանցամատյանում գրանցված է 283 համարի ներքո:

Երկու հազար քսան (2020) թվականի փետրվարի (02) յոթին (07),
ես՝ Տալլինի նոտար Ջաան Հարգիս, ում գրասենյակը գտնվում է Տալլին, Ռուսիկրանցի փող. 2 հասցեում, սույնով վավերացնում եմ **Տաունո Օտտոյի**, ՆՀ՝ 36709040217, ծնված՝ 04.09.1967թ., հասցե՝ Հարջու շրջան, Տալլին, Սեեան փող. 14, Հիլլար Բաումանի, ՆՀ՝36312210242, ծնված՝ 21.12.1963թ., հասցե՝ Հարջու շրջան, Տալլին, Պալլաստի փող. 44-1, **Հելի Մատտիսենի**, ՆՀ՝ 45812170292, ծնված՝ 17.12.1958թ., հասցե՝ Հարջու շրջան, Հարկու պարիս, Կուստավի փող. 14, ստորագրությունների իսկությունը, որոնք դրվել են իմ ներկայությամբ:
Ստորագրողի ինքնությունը հաստատվել է էստոնական ՆՔ-ով:
Ես չեմ վավերացրել սույն փաստաթղթում ներկայացված փաստերը:

Նոտարական վճար՝	38,25 եվրո
ԱԱՀ՝	7,65 եվրո
Ընդհանուր՝	45,90 եվրո

Նոտարական Վճարի մասին Օրենք § 31, 12-րդ էջ)
/ստորագրված է/
Կնիք

07 փետրվարի 2020 թ.
Այս փաստաթուղթը պարունակում է իրար կցված և կնքված երեսունինը (39) էջ:
Նոտար՝ /ստորագրված է/

Թարգմանությունը կատարվել է <<Մարիա Բալայան>> թարգմանչական կենտրոնում: Մենք պատասխանատվություն ենք կրում թարգմանության ճշգրտության, այլ ոչ թե նրանում շարադրված փաստերի համար:
ՀՀ,ք.Երևան, Ռաֆայել Լեմկին 12:

Կենտրոնի տնօրեն՝ Մ. Բալայան _____
06.03.2020թ.

ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ПЕРЕВОДЧЕСКИЕ УСЛУГИ
TRANSLATION SERVICES
SIGNATURE